ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

ԶԵԿՈՒՅՑ

ԵՊՀ ԻՄ զարգացման ռազմավարական ծրագրի

2011-2015 թթ.

իրականացման վերաբերյալ

ԻՋԵՎԱՆ 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 5
I. Բարձրորակ կրթություն 5
II. Գիտական հետազոտություններ և նորարարություն 53
III. Հանրային ներգրավում և ծառայություններ 70
ԱՋԱԿՑՈՂ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 79
IV. Որակյալ կադրային ներուժ 79
V. Որակյալ ենթակառուցվածներ 89
VI. Որակյալ ծառայություններ 95
ԸՆԹԱՑԻԿ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ 108
VII. Բազմազանեցված մուտք և համապատասխանություն 108
VIII. Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում 113

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ բարձրագույն կրթության համակարգն ինտեգրվել է Բարձրագույն կրթության եվրոպական տարածքին, և այդ գործընթացում ներգրավվել է նաև Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը: Նրան վերագրված է հատուկ առաքելություն՝ նպաստել հանրապետության հյուսիսարևելյան տարածաշրջանի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի զարգացմանը: Մասնաճյուղի գործունեության գերակա նպատակներից է բարձրորակ կրթություն ապահովելու միջոցով տարածաշրջանում զարգացնել հայագիտության, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական գիտություններն ու մշակույթը:

Իր գերակա նպատակների իրականացման համար 2011թ.-ից մասնաճյուղն անցել է իր գործունեության ռազմավարական պլանավորմանը՝ հիմք ընդունելով ԵՊՀ-ի զարգացման 2011-15թթ. ռազմավարական ծրագիրը: Մշակվել և հաստատվել է մասնաճյուղի զարգացման 2011-15թթ. ռազմավարական ծրագիրը, որով մասնաճյուղը կրթության բոլոր մակարդակներում և աստիճաններում հավակնում է՝

- ուսումնառությունն իրականացնել բարձրորակ կադրերով, որոնք ունակ կլինեն կրթության մշտական բարեփոխման պայմաններում ակտիվ նորարական գործունեության՝ պահպանելով կրթական բարձր չափանիշներ,
- ապահովել ուսանողակենտրոն ուսումնառություն,
- բավարարել արտաքին և ներքին շահակիցների ներկա և հեռանկարային պահանջմունքները,
- արդիականացնել ուսումնառության նյութական ռեսուրսները և այլն:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի՝ 2011-2015թթ. զարգացման ռազմավարական ծրագրի ռազմավարական **8** նպատակների իրականացման համար նախատեսված էր լուծել երկու տասնյակ խնդիր՝ իրենց **114** գործողություններով: Ծրագրի իրականացման պլան-ժամանակացույցով սահմանվել էին այդ գործողությունների կատարման ժամկետներն՝ ըստ ուսումնական տարիների և կիսամյակների, ինչպես նաև կատարող կառույցները և պատասխանատու անձինք:

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) 2011-2015թթ. զարգացման Ռազմավարական ծրագրի (այսուհետ՝ ՌԾ) հիմնական ռազմավարական նպատակների իրականացման համար նախատեսված խնդիրները նպատակաուղղված են ԵՊՀ ԻՄ-ում բարձրորակ կրթության ապահովմանը, բարձրակարգ հետազոտությունների և նորարարությունների իրականացմանը, հանրային ներգրավմանը և ծառայությունների զարգացմանը, որակյալ ենթակառուցվածքների ստեղծմանն ու բարելավմանը, որակյալ կադրային ներուժի կատարելագործմանը, որակյալ ծառայությունների տրամադրմանը, ընդունելության բազմազանեցված մուտքի ընդլայնմանը և համապատասխանության բարձրացմանը, ֆինանսական կայությանն ու կառավարման արդյունավետության բարձրացմանը, ռազմավարական գործակցության ամրապնդմանն ու գործունեության միջազգայնացման խթանմանը:

Մասնաճյուղն ունի հետևյալ կազմակերպական կառուցվածքը.



ԵՊՀ ԻՄ-ի ռազմավարական գործունեության հնգամյա ժամանակաշրջանն ամփոփելով՝ կարելի է նշել, որ մասնաճյուղն իր առջև դրված խնդիրների 67%-ն ամբողջությամբ իրականացրել է, 13%-ն իրականացրել է մասնակի, և կան խնդիրներ (20%), որոնց իրականացումը հաշվետու ժամանակահատվածում ներքին և արտաքին մի շարք գործոնների պատճառով հնարավոր չի եղել իրականացնել (Հավելված 1):

Ստորև, ըստ ռազմավարական նպատակների, ներկայացվում է ԵՊՀ ԻՄ-ի՝ 2011-2015թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականը:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

I. Բարձրորակ կրթություն

Պահպանել կրթական բարձր չափանիշներ և հնարավորություն տալ սովորողներին՝ լիարժեք կերպով իրացնելու ներուժը՝ տրամադրելով ժամանակակից պահանջները բավարարող ճկուն ուսումնական ծրագրեր:

Մասնաճյուղը պատվով և արդյունավետ է իրականցրել իր 1-ին գերակա **<u>նպատակը</u>՝** «Բարձրորակ կրթություն», լիարժեք իրականացվել է այդ նպատակով պլանավորված 5 խնդիրների 31 գործողությունների **74%-ը**: Այդ նպատակի իրականացման ճանապարհին մասնաճյուղի կարևոր ձեռքբերումներն են՝ աշխատաշուկայի պահանջներին համահունչ մասնագիտություններով ուսումնառության կազմակերպումը, կրթական վերջնարդյունքներով ձևակերպված և ներդրված 15 կրթական ծրագրերը, կայուն ներդրված որակի ներքին ապահովման գործընթացը, որի գործընթացների շրջանակներում 3 անգամ իրականացվել է մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատում և պատրաստվել են համապատասխան զեկույցները (2010-11թթ.՝ պիլոտային, 2013թ.՝ փորձնական, 2015թ.՝ հիմնական), կրեդիտային համակարգի և էլեկտրոնային տեղեկատվական «SuperVision» համակարգի լիարժեք կիրառումը, դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոնի ստեղծումը, ուսումնական ենթակառուցվածքների բարելավումն ու արդիականացումը: Այժմ մասնաճյուղն ունի համակարգչային 4 սրահ, 2 լաբորատորիա, 12 արվեստանոց, տեսասարքով համալրված 3, ինտերակտիվ ուսուցման (On-line) 1 լսարան, լեզուների ուսուցման 2 մասնագիտական լսարան:

Խնդիր I ա) Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ արդի ծրագրային չափանիշներին և տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկին համահունչ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ Կոմպետենցիաների ձևավորմանն ուղղված կրթական ծրագրեր մշակելու և իրագործելու կարևորությունը ԵՊՀ ԻՄ-ում պայմանավորված է առաջին հերթին փոփոխվող հասարակական պահանջմունքներով: Ավելի են կարևորվում աշխատաշուկա մուտք գործող շրջանավարտների տեսական գիտելիքները և հատկապես գործնական հմտություններն ու կարողությունները:

Որպես սահմանամերձ ու մշտապես ռազմական իրավիճակում գտնվող մարզում բարձրագույն կրթություն իրականացնող ուսումնական հաստատություն մասնաճյուղը կարևորում է իր դերը տարածաշրջանում և իրականացնում խիստ հասցեային նպատակ հետապնդող ուսումնառություն: Անվիճելի իրողություն է, որ կրթությունը ներկա պայմաններում պետք է անմիջականորեն արձագանքի աշխատաշուկայի պահանջներին: Այս խնդիրը հստակ դրված է մասնաճյուղի գործունեության առաջնահերթությունների շարքում և դինամիկ կերպով հետևելով տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկին մասնաճյուղը պարբերաբար իրականացնում է մասնագիտությունների ճշգրտում՝ առկա և հեռակա ուսուցման համակարգերում:

Մասնավորապես, հեռակա ուսուցմամբ մասնաճյուղը մարզի սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցներն ապահովում է բարձրագույն կրթությամբ մանկավարժական կադրերով՝ ընդունելության ժամանակ իրականացնելով նաև նպատակային ընդունելություն:

Մասնաճյուղում մասնագիտությունների հիմնական ուղղվածությունը մանկավարժական է, և անվիճելի իրողություն է, որ կրթությունը ներկա պայմաններում պետք է անմիջականորեն արձագանքի աշխատաշուկայի պահանջներին, այն հստակ դրված է մասնաճյուղի գործունեության առաջնահերթությունների շարքում և իր կոնկրետ դրսևորումն է ունենում և առկա և հեռակա ուսուցման գործընթացում: Հետևաբար, պայմանավորված աշխատաշուկայի բազմակողմանի և շարունակական ուսումնասիրության, ընդունելության համակազմի վերլուծության, դիմորդների նախասիրությունների և մասնագիտությունների նկատմամբ նրանց ցուցաբերած հետաքրքրությունների բավարարմամբ մասնաճյուղում շարունակաբար իրականացվում է մասնագիտությունների ճշգրտում, վերանայում, նոր մասնագիտություններով ընդունելության կազմակերպում: Դրանց արդյունքում կրկնապատկվել է մասնաճյուղում իրականացվող մասնագիտությունների թիվը: Որոշ մասնագիտություններ հիմնավոր ներդրված են և մշտապես պահանջված, դրանք են «Ընդհանուր տնտեսագիտություն», «Սերվիս», «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտությունները: Որոշ մասնագիտություններ վերաբացվել են, որոշները փոխարինվել ավելի ժամանակակից մասնագիտություններով, օրինակ.

- 2012-13 ուստարում մասնաճյուղին թույլատրվել է իրականացնել *«Կիրառական արվեստ»* մասնագիտությամբ մագիստրոսի կրթական ծրագրով գործունեություն, որը ժամանակավորապես դադարեցվել է 2015թ. սեպտեմբերից:
- 2013-14 ուստարում *«Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա»* մասնագիտության փոխարեն կատարվել է ընդունելություն *«Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»* մասնագիտությամբ՝ արժևորելով տեղեկատվական տեխնոլոգիների և ծրագրավորման դերն ու արդիականությունը:
- 2013-14 ուստարում «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտության փոխարեն կատարվել է ընդունելություն «Էկոլոգիական քիմիա» մասնագիտությամբ՝ նպատակ ունենալով արժևորել քիմիայի դերը էկոլոգիայի, գյուղատնտեսության, արդյունաբերության և այլ բնագավառներում: Այն լայն արձագանք ունեցավ հեռակա ուսուցման համակարգի դիմորդների շրջանում, առկա ուսուցման համակարգի դիմորդների փոքր թվի պատճառով այդ մասնագիտության փոխարեն 2014-15 ուստարում ընդունելություն իրականցվեց «*Քարտեզագրություն և կադաստրային գործ»* մասնագիտությամբ, որն իրեն արդարացրեց: Այդ մասանգիտության ներդրումը պայմանավորված է հողի, անշարժ և շարժական գույքի կադաստրային բազմաթիվ աշխատանքներ իրականցնող մասնագետների պահանջարկով թե մարզում, և թե ամբողջ հանրապետությունում: Հարկ է նշել, որ 2015-16 ուստարում հեռակա ուսուցման համակարգում վերաբացվել է *«Բնապահպանություն և բնօգտագործում»* մասնագիտությունը՝ հաշվի առնելով բնապահպանության ոլորտում բարձրագույն կրթությամբ մասնագետների պահանջարկը, որը հատկապես ակնառու է հենց մարզում, և ինչը արդարացվել է ընդունելության հուսադրող արդյունքներով:
- 2014-15 ուսումնական տարում *«Մանկավարժություն և հոգեբանություն»* մասնագիտության փոխարեն կատարվել է ընդունելություն *«Հոգեբանություն»* բակալավրի կրթական ծրագրով: Այս

մասնագիտության ներդրումը պայմանավորված է աշխատաշուկայում հոգեբանների մեծ պահանջարկով, ինչի մասին վկայում են վերջին 4 տարիների ընթացքում հարցումների միջոցով հավաքագրված տվյալները:

- 2014-15 ուստարվանից մասնաճյուղին թույլատրվել է իրականացնել *«Դիզայն»* մասնագիտության բակալավրի կրթական ծրագիր, որն ունի մեծ պահանջարկ և հաջողությամբ ներդրվել է:
- 2015-16 ուսումնական տարում հեռակա ուսուցման համակարգում վերաբացվել է *«Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա»* մասնագիտությունը, որը պայմանավորված է հատկապես ֆիզիկայի կարևորման գործոնով և հատկապես բարձրորակ պրոֆեսորադասախոսական կազմի և հագեցած լաբորատոր բազայի առկայությամբ:
- պայմանավորված մարզում տարրական դասարանների ուսուցիչների, հատուկ մանկավարժների և հոգեբանների պահանջարկով 2016-17 ուստարում մասնաճյուղը կիրականացնի ընդունելություն *«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»* մասնագիտության բակալավրի կրթական ծրագրով:

Իսկ արվեստի բնագավառում ձեռք բերումներն ամրագրելու, կիրառական արվեստի ֆակուլտետի շրջանավարտների ապագա կարիերային ընդառաջելու, աշխատանքի նոր և ժամանակակից ոլորտներ ընդգրկելու նպատակով 2016-17 ուստարուց մասնաճյուղը կիրականացնի ուսումնառություն *«Համակարգչային գրաֆիկա»* բակալավրի կրթական ծրագրով:

Հարկ է նշել, որ մասնաճյուղը կարևորում է իր արտաքին շահակիցների ցանկությունները, գնահատում իր հնարավորությունները, կադրային ներուժը և կազմակերպում արդարացված և նպատակային ուսումնառություն ***(Աղյուսակ 1)***:

Աղյուսակ 1

ՑԱՆԿ

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2015Թ. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ծածկագիր	Մասնագիտությունները	Ընդունելության քննություններ			Ոչ մրցութ.	Տեղեր			Ուս. վարձ (հազ. դրամ)
		Մրցութային				Անվճար		Վճ (ատ)	
							այդ թվ.՝ բզ		
1	2	3	4	5	6	7	8	9	10
010000 Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ									
010400	Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	ԱնգԼ(գ)** *կամ* Ֆ(գ)**		ՀԼԳ(գ)*	4	1	26	350
020000 Բնագիտական գիտություններ									
020500	Քարտեզագրություն և կադաստրային գործ	Ա(գ) *կամ* Մ(գ)	Մ(գ)** *կամ* Ա(գ)**		ՀԼԳ(գ)*	3	–	30	300
030000 Հումանիտար գիտություններ									
030400	Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) *կամ* ՕտԼ(գ)	ՀԼԳ(գ)		4	1	40	300
031000	Հայոց լեզու և գրականություն	ՀԼԳ(բ)	ՀԼԳ(գ)		ՀԺՊ(գ)* *կամ* ՕտԼ(գ)*	4	1	30	300
030300	Հոգեբանություն	ՀԼԳ(գ)	ՕտԼ(գ)	Կ(գ)**		4	1	31	350
031300	**Օտար լեզու և գրականություն**								
	-Ֆրանսերեն լեզու և գրականություն	ՖրԼ(բ)	ՖրԼ(գ)	ՀԼԳ(գ)		3	–	15	350
	-Անգլերեն լեզու և գրականություն	ԱնգԼ(բ)	ԱնգԼ(գ)	ՀԼԳ(գ)		4	–	30	380
070000 Մշակույթ և արվեստ									
071100	Կիրառական արվեստ	Գծն	Գն	Կոմպ	ՀԼԳ(գ)*	3	1	20	300
070900	Դիզայն(գեղար)	Գծն	Գն	Կոմպ	ՀԼԳ(գ)*	3	–	25	300
080000 Տնտեսագիտություն և կառավարում									
080100	Տնտեսագիտության տեսություն	Մ(գ)	ՀԼԳ(գ)	ՕտԼ(գ)		5	1	45	400
100000 Սպասարկման ոլորտ									
100100	Սերվիս	ՀԼԳ(գ)	ՕտԼ(գ)	Ա(գ) *կամ* ՀԺՊ(գ)		4	–	26	320

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

*Փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:

** Նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական, կարող են դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների ավարտական քննությունների կամ տարեկան գնահատականը:

❖ ԵՊՀ ԻՄ-ն հավատարիմ մնալով իր առաքելությանը, համահունչ պետական կրթական քաղաքականությանը, հավատարիմ մայր բուհի կրթական քաղաքականությանը և առաջնորդվելով կրթության որակի բարձրացման և բարելավման արդի պահանջներով վարում է ընտրված մասնագիտությունների կրթական ծրագրերի արդիականացման, նրանց արդյունավետության գնահատման հստակ քաղաքականություն: Ծրագրերի կանոնավոր մոնիթորինգի միջոցով գնահատվում են ծրագրերի մատուցման որակը և համապատասխանությունը սահմանված նպատակներին ու կրթական չափորոշչի պահանջներին, ծրագրի և նրա բաղկացուցիչ մասերի սահմանած կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը, դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման գործընթացների արդյունավետությունը, բացահայտվում են և վեր հանվում ծրագրի թերություններն ու իրականացման դժվարությունները: Իսկ կրթական ծրագրերից մասնաճյուղի ներքին և արտաքին շահակիցների բավարարվածության վերաբերյալ ուսումնասիրությունները մասնաճյուղում հիմնականում իրականացվում են տարբեր հարցումների, հանդիպումների և քննարկումների միջոցով, իսկ դրանց արդյունքների վերլուծություններն օգնում են մշակել կրթական ծրագրերի արդիականացման, բարելավման և աշխատաշուկայում դրանց մրցունակության ապահովման ուղիներ:

Մասնաճյուղում 2012թ.-ից Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժնի, Ուսումնամեթոդական վարչության (ՈՒՄՎ) Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկաների կազմակերպման (ՄԿՊԿ) բաժնի, շրջանավարտների և կարիերայի կենտրոնի, ֆակուլտետների դեկանատների և ամբիոնների համագործակցությամբ, ՄԿԾ հետագա բարելավման նպատակով, իրականացվել են հարցումներ, որոնց միջոցով, մասնավորապես, ուսումնասիրվել են ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների և պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքները, ապա պարզվել և գնահատվել արտաքին շահակիցների բավարարվածությունը մասնաճյուղի շրջանավարտների և պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական գիտելիքների մակարդակից և իմացությունից, գործնական և ընդհանրական կարողություններից, ստեղծագործական ունակություններից և ժամանակակից մեթոդների կիրառման հմտություններից, աշխատաշուկայում մասնաճյուղի շրջանավարտների մրցունակությունը, նրանց ուժեղ և թույլ կողմերը:

2014թ.-ին վերանայվել և կառուցվածքային վերափոխվել է մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարավածության հարցման հարցաշարը, վերանայվել է նրա կանոնակարգը, 2015թ.-ին կարելի է ասել կազմվել են նոր հարցաշարեր, գրվել համապատասխան կանոնակարգեր և հարցման գործիքի անձնագրեր մասնաճյուղի շրջանավարտների և պրակտիկանտ ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության 2 հարցումների համար: Իսկ 2015թ.-ին մասնաճյուղում ԵՊՀ վերանայված հարցաշարի միջոցով իրականացվել են դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները:

Այդ հարցումների արդյունքների վերլուծությունը վկայում է, որ մեր շրջանավարտները բավարարված են իրենց ձեռք բերած տեսական գիտելիքներից և մասնագիտական կարողություններից, սակայն նրանք գտնում են, որ ԵՊՀ ԻՄ-ում մատուցվող դասընթացներն այնքան էլ չեն օժանդակում մասնագիտական կոմպետենցիաների ձևավորմանը՝ համեմատած

գիտելիքների ձեռք բերման հետ, և հարկ է նկատել, որ շրջանավարտների բավարավածությունը մասնաճյուղում ստացած ուսումնառության արդյունքներից էապես բարձրացել է.



Շրջանավարտները բավարաված են նաև մասնաճյուղում ստացած իրենց կրթությունից, և որը կազմել է միջին 4.65 միավոր, և այն էապես բարելավվել է նախորդ ուստարիների համեմատ.



Որախալի է, որ մասնաճյուղի շրջանավարտները բավարաված են պրոֆեսորադասախոսական անձնակազմից՝ 96%, և «Խորհուրդ կտա՞ք Ձեր մերձավորներին և ընկերներին ընդունվել ԵՊՀ ԻՄ» հարցին մասնակիցների 91.8% -ը դրական պատասխան է տվել (նախորդ ուստարի՝ 89.8%):

Մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքների ուսումնառությունից բավարարվածության վերաբերյալ կարծիքների հավաքագրման և համապատասխան հարցերի արդյունքների վերլուծության միջոցով նույնպես պարզաբանվում և գնահատվում են կրթական ծրագրերի արդյունավետությունը, նրանց պահանջվածությունը և աշխատաշուկայի պահանջարկին նրանց բավարարելը: Արտաքին շահակիցները՝ գործատուները, մասնավորապես դպրոցների ուսուցիչները բարձր են գնահատում մեր ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքները, նրանց մասնագիտական խոսքը, և առանձնահատուկ նրանց վերաբերմունքը աշակերտների և մանկավարժական կոլեկտիվի անդամների նկատմամբ, նկատվում են թիմում աշխատելու, իսկ ամենակարևորը, տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու նրանց բարձր կարողությունները, նրանց պատրաստվածությունն ու պատասխանատվության բարձր մակարդակը, ինչը տարիների ընթացքում ավելի է ձևավորվել, ամրապնդվել և դրսևորվել.

N	Գնահատեք մեր պրակտիկանտ-ուսանողների.	2012-13	2013-14	2014-15
1	տեսական գիտելիքների իմացությունը	3,87	4,00	4,52
2	գործնական հմտությունները	3,52	3,96	4,45
3	մասնագիտական խոսքը	3,57	3,94	4,55
4	դասավանդման ժամանակակից մեթոդներ կիրառելու կարողությունը	3,22	3,64	4,39
5	վարվեցողության կանոններին և էթիկայի նորմերին հետևելը	4,13	4,49	4,76
6	ստեղծագործական մոտեցումները մասնագիտական գործընթացում	3,70	3,77	4,45
7	տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու կարողությունը			4,61
8	թիմում աշխատելու հմտությունները			4,73

Այստեղ հիմնականում խնդիր ունենք դասավանդման ժամանակակից մեթոդներ կիրառելու ցածր կարողությունների և պրակտիկ հմտությունների ցածր մակարդակի առումով, ինչը գտնվում է մասնաճյուղի համապատասխան կառույցների ուշադրության կենտրոնում:

Ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման և կրթական ծրագրով նախանշված կրթական վերջնարդյունքների ձևավորման կարևորագույն գործոններից մեկը դասախոս-ուսանող հարաբերություններում հետադարձ կապի ապահովումն է: Տվյալ նպատակի իրագործման ուղղությամբ վերջին տարիներին ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ավանդույթ է դարձել յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո դասախոսների որակների վերաբերյալ ուսանողների շրջանում հարցումների անցկացումը: Մայր բուհում մշակված և կանոնակարգված հարցաշարի օգնությամբ ուսանողները, յուրաքանչյուր կիսամյակի համար գնահատում են դասավանդող դասախոսների մասնագիտական, մանկավարժական և անձնային որակները, արտահայտում իրենց բավարարվածության աստիճանը: Այս հարցման տվյալները մշակվում են ԵՊՀ-ում և ուղարկվում մասնաճյուղ, սակայն մասնաճյուղում այդ ամփոփված տվյալների հիման վրա, անհրաժեշտ որոշ ցուցիչների ամփոփ ներկայացման և գնահատման համար, 2014-15 ուստարում գրվել է համապատասխան տեղեկատվական համակարգ՝ բազա, և իրականացվել են անհրաժեշտ վերլուծություններ:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների վերաբերյալ ուսանողական այդ հարցման արդյունքները ցույց են տալիս, որ բոլոր տարիների կտրվածքով դասախոսների որակները ստացել են բարձր գնահատականներ՝ 4,54-4,60: Սա վկայությունն է այն ճշմարտության, որ ընդհանուր առմամբ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի դասախոսական կազմն օժտված է մանկավարժական, մասնագիտական և անձնային պատշաճ որակներով: Առանձին որակների համեմատաբար ցածր միավորները, որոնք վերաբերում են դասընթացի նյութը յուրացնելու հարցում դասախոսի իրական աջակցությանը, լսարանից դուրս դասընթացին առնչվող հարցերով դասախոսի հետ հաղորդակցվելու հնարավորություններին, թերևս առնչվում է դասախոսների արտալսարանային խորհրդատվությունների, դասախոս-ուսանող հարաբերություններում ոչ պաշտոնական հաղորդակցությունների մակարդակի ձևավորված մշակույթի հետ: Այստեղ կարևոր է հաշվի առնել

մի հանգամանք, այն, որ մասնաճյուղի դասախոսների մի ստվար մասը որոշակի օրերին ժամանում է մայրաքաղաքից, բուհում լինում է քիչ օրեր, ինչը օբյեկտիվորեն և էականորեն նվազեցնում է արտալսարանային հաղորդակցությունների հնարավորությունները:

N	Հարցի բովանդակությունը	Միջ. միավ.	2010-11		2011-12		2012-13		2013-14		2014-15
			1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս
1	Նյութը մատուցում էր պարզ, հասկանալի և մատչելի	**4,55**	4,53	4,45	4,56	4,48	4,53	4,57	4,59	4,63	**4,64**
2	Օժանդակում էր դասընթացի նյութը յուրացնելուն	**4,54**	4,51	4,42	4,56	4,51	4,55	4,57	4,59	**4,61**	
3	Ժամանակը լսարանում արդյունավետ էր օգտագործում	**4,58**	4,54	4,45	4,58	4,51	4,59	4,59	4,61	4,62	**4,69**
4	Հետևում էր լսարանի արձագանքին	**4,57**	4,54	4,46	4,59	4,54	4,59	4,60	4,59	**4,64**	4,61
5	Ուսանողներին հնարավորություն էր տալիս իրեն դիմել լսարանից դուրս՝ դասընթացին առնչվող հարցերով	**4,57**	4,56	4,48	4,59	4,55	4,59	**4,63**	4,62	4,61	4,54
6	Խրախուսում էր ուսանողների ինքնուրույն աշխատանքը	**4,60**	4,55	4,49	4,60	4,56	4,65	4,65	4,64	**4,65**	

Տվյալները տարիների կտրվածքով դիտարկելիս նկատելի է մի շարք որակների գծով առաջընթացը, ինչը թերևս հարցումների արդյունքները համապատասխան ստորաբաժանումների պատասխանատուների և դասախոսների հետ պարբերական քննարկումների և կատարվող հետևությունների հետ հաշվի նստելու արդյունք է:

Կրթական ծրագրերի արդիականացման նպատակով մասնաճյուղում պարբերաբար տեղի են ունեցել հանդիպումներ մարզի գործատուների հետ, որոնց ընթացքում քննարկվել և բացահայտվել են մասնաճյուղի շրջանավարտների տեսական ու գործնական պատրաստվածության վերաբերյալ խնդիրները, նշվել մեր շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքները, մասնագիտական գիտելիքների իմացության և կիրառման կարողությունների մակարդակը, հաղորդակցման, առաջադրված խնդիրների համակողմանի ուսումնասիրման և վերլուծության ունակությունները, մասնագիտական գրականությունից օգտվելու կարողությունները: Այդ հանդիպումների ժամանակ նշվել են մեր շրջանավարտների որոշ թերությունները և առավելությունները:

Գործատուների հետ հանդիպումների ժամանակ ընդունվել են մի շարք գործնական որոշումներ հետագայում նպատակային պրակտիկաների, ինչպես նաև կուրսային ու

ավարտական աշխատանքների թեմատիկայի ընտրության և իրականացման գործում արտաքին շահակիցների (գործատուների) անմիջական մասնակցության ապահովման ուղղությամբ:

Առանձնահատուկ պետք է նշել Կիրառական արվեստի ֆակուլտետում տարեկան 2 և ավելի անգամ արատաքին շահակիցների հետ կազմակերպվող կլոր սեղանները, որին մասնակցում են Իջևանի քաղաքապետարանի մշակույթի, սպորտի և երիտասարդության բաժնի վարիչը, Նոյեմբերյանի արվեստի դպրոցի տնօրենը և այլ արտաքին շահակիցներ, քննարկվում են ձեռքբերումները, մշակվում են համատեղ իրականացվող միջոցառումների ծրագրեր, մասնավորապես, ձեռք է բերվել Իջևանի քաղաքային պատկերասրահում ֆակուլտետի ուսանողների լավագույն աշխատանքների մշտական ցուցադրության հնարավորություն:

❖ 2010-11 ուստարվանից մասնաճյուղում ներդրվել են գիտելիքների, հմտությունների և կարողությունների չափելի ելքային կրթական արդյունքներով համալրված առարկայական ծրագրերը, իսկ 2014թ. սեպտեմբերից կիրառվում են դասընթացների փաթեթները (պորտֆոլիոները): Փաթեթում իր կարևոր տեղն ունի դասընթացի ավարտին ակնկալվող ***վերջնարդյունքների ձևակերպումը*** կոմպետենցիաների տերմիններով. այսինքն, ուսանողի կողմից ձեռք բերվող գիտելիքները, որոնք ընդգրկում են տվյալ դասընթացի հիմնական գաղափարների, խնդիրների, նպատակների, սկզբունքների իմացությունը, ձևավորվող մասնագիտական հմտությունները, որոնք ապահովում են գիտության ժամանակակից տեսությունների և հետազոտական տարբեր տեխնոլոգիաների իմացության հաշվին հավաքագրել, համադրել և վերլուծել մասնագիտական տարաբնույթ տվյալներ և իրավիճակներ, ձևավորվող ընդհանրական կարողությունները, որոնց համախումբը ուսանողին աջակցում է իրականացնել անհատական և խմբային աշխատանքներ, քննարկումներ, կատարել քանակական և որակական վերլուծություններ, հանդես գալ զեկուցումներով և այլն:

Օրինակ, Բնական գիտությունների ֆակուլտետի «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության 2-րդ կուրսի «Ֆիզիկա» դասընթացի փաթեթում դասընթացի ավարտին ակնկալվող վերջնարդյունքները.

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻՆ

Ուսումնառության հաջող ավարտին ուսանողը կկարողանա ցուցադրել.

Գիտելիք և իմացություն՝

Գ1.Թվարկել հիմնական հասկացությունները և օրենքները ծրագրի սահմաններում,
Գ2.Վերաձևակերպել և վերաշարադրել ուսումնասիրված օրենքները, մեկնաբանել հասկացությունների ֆիզիկական իմաստները,
Գ3.Գրել հիմանական հասկացությունների և օրենքների համար մաթեմատիկական արտահայտությունները,
Գ4.Բացատրել ուսումնասիրված ֆիզիկական օրենքների կիրառության պայմանները,
Գ5.Հասկացությունների և հիմնական օրենքների օրինակներ բերել ֆիզիկայի առաջարկված բաժնից:

Կարողություն՝

Կ1.Կատարել պարզ ձևափոխություններ և դուրսբերումներ հիմնական օրենքներից և սահմանումներից,
Կ2.Կատարել խնդիրները պարզաբանող գծագրեր,
Կ3.Կիրառել օրենքները մեխանիկայի, մոլեկուլային ֆիզիկայի, էլեկտրականության, մագնիսականության, օպտիկայի միջին բարդության խնդիրների լուծման համար,
Կ4.Ստանալ խնդիրների լուծման համար արտահայտություններ, իրականացնել թվային հաշվարկ և ֆիզիկորեն մեկնաբանել ստացված լուծումները:

Հմտություն՝

Հ1.Տիրապետել ֆիզիկային, նրա կիրառություններին և բնական երևույթներին վերաբերող տեղեկատվության հավաքման և մասնագիտական խնդիրներում անհրաժեշտ ֆիզիկական գրականության մշակման մեթոդներին և միջոցներին,

Հ2.Կիրառել պատճառահետևանքային կապի մոտեցումը որպես ճանաչողության սկզբունք,

Հ3.Գիտակցորեն կիրառել ֆիզիկական օրենքները առօրյա կյանքում և աշխատանքում,

Հ4.Վերլուծել դասական ֆիզիկայի ճշտության սահմանները,

Հ5.Հետևություններ անել շրջապատում բնական երևույթների պատճառների և տեխնիկական առաջընթացի ազդեցությունների վերաբերյալ,

Հ6.Տրամաբանորեն շարադրել ֆիզիկական երևույթների կապը և հետևողական փաստարկներ ձևակերպել:

Փաթեթում կրթական վերջնարդյունքների ձևավորման գործընթացը ավարտուն ներկայացվում է կրթական վերջնարդյունքների ձևավորման քարտեզում (թեմաների կրթական վերջնարդյունքների միջոցով դասընթացի կրթական վերջնարդյունքների ապահովման աղյուսակումը): Այն կարևորագույն փաստաթուղթ է, որն ակնառու կերպով ցույց է տալիս, թե ինչպես է թեմաների միջոցով իրականացվում դասընթացի ակնկալվող կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը և ինչպես են վերջիններս շաղկապված դասընթացի բաղկացուցիչ մաս հանդիսացող թեմաների հետ:

Թիվ	Թեմայի վերնագիրը	Կոմպետենցիայի համառոտ անունը														
		Գ1	Գ2	Գ3	Գ4	Գ5	Կ1	Կ2	Կ3	Կ4	Հ1	Հ2	Հ3	Հ4	Հ5	Հ6
1.	Ներածություն	+										+				+
2.	Դասական մեխանիկայի ֆիզիկական հիմունքները	+	+	+	+	+	+	+	+	+	+	+		+	+	+
3.	Մոլեկուլյար ֆիզիկա և ջերմադինամիկա	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
4.	Էլեկտրականություն և մագնիսականություն	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
5.	Օպտիկա	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
6.	Ատոմի և միջուկի ֆիզիկայի տարրեր	+		+	+	+	+	+			+	+		+	+	+

Բացի <u>դասընթացի և դասընթացի յուրաքանչյուր թեմայի բարեհաջող ավարտին</u> ուսանողի կողմից ձեռք բերվող կրթական վերջնարդյունքներից փաթեթը պարունակում է նաև դասընթացի վարման ռազմավարությունը (ստրատեգիան) և մարտավարությունը (տակտիկան), դրանցով պլանավորվում է դասընթացի ուսուցման արդյունավետ ու տրամաբանական կազմակերպումը, իրականացվում է դասընթացից դասավանդողի ու ուսումնառողի ձեռքբերումների գնահատումը և միտված է ոչ միայն ուսանողի գնահատմանը, այլև նրա անհատական մասնագիտական աճի ապահովմանը: Փաթեթներում առանձնահատուկ տեղ է հատկացված ուսանողների ինքնուրույն աշխատանքների կազմակերպմանը և գնահատմանը:

Ըստ իրենց բովանդակության և ժամանակագրության՝ պորտֆոլիոյի փաստաթղթերը դասակարգվում են երեք խմբի.

– Փաստաթղթեր, որոնք ներառվում են դասընթացը սկսվելուց առաջ,

– Փաստաթղթեր, որոնք ներառվում են դասընթացի իրականացման ընթացքում,
– Փաստաթղթեր, որոնք ներառվում են դասընթացի ավարտից հետո:

Մասնաճյուղի 10 մասնագիտական և 1 համամասնաճյուղային ամբիոններում 2014-15 ուստարվա ավարտին ընդհանուր առմամբ ներդրված են 119 դասընթացի փաթեթներ, որը կազմում է հնարավոր ենթադրվող փաթեթների 64%-ը, իսկ գործընթացն ամբողջությամբ կավարտվի 2017թ.-ի սեպտեմբերի դրությամբ:

N	Ամբիոնի անունը	Դասախոսների թիվը (/ժամ)	Դասընթացների թիվը	Առկա փաթեթ-ների թիվը	Կատարմ. ծավալը (%)
1.	Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի	2/1	3	2	**67%**
2.	Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության	22	28	14	**50%**
3.	Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	9	17	8	**47%**
4.	Գծանկարի, զունանկարի և քանդակի	6	12	6	**50%**
5.	Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի	7	14	8	**57%**
6.	Ընդհանուր տնտեսագիտության ամբիոն	15/3	9	9	**100%**
7.	Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	12	13	9	**69%**
8.	Հայոց պատմության և հասարակագիտության	19/1	26	15	**58%**
9.	Հայոց լեզու և գրականության	12/1	15	14	**93%**
10	Օտար լեզուների	29	37	23	**62%**
11.	Մանկավարժություն և հոգեբանություն	12/1	13	11	**85%**
Ընդամենը՝		**146/7**	**187**	**119**	**64%**

❖ 2012-13 ուստարուց սկսած մասնաճյուղն իրականացրել է կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ արդի ծրագրային չափանիշներին և տարածաշրջանի աշխատաշուկայի պահանջարկին համահունչ: 2013-14 ուսումնական տարում իրականացվող բոլոր մասնագիտությունների համար ներդրվել են կրթության ժամանակակից պահանջներին, որակավորումների ազգային շրջանակի և Բոլոնիայի գործընթացի դրույթներին համապատասխան, ուսանողների հաղորդակցման, քննադատական մտածողության, քանակական փաստարկման, միջանձնային և կառավարման կարողությունների զարգացմանը և մասնագիտական էթիկայի ձևավորմանն ուղղված կոմպետենցիաներով ձևակերպված կրթական ծրագրեր: 2012թ.-ի սեպտեմբերից մասնաճյուղի մեթոդ խորհրդի հսկողությամբ և Կրթության որակի ապահովման և գնահատման (ԿՈԱԳ, այժմ՝ ՄԿՈԱ) բաժնի անմիջական խոհրդատվություններով ֆակուլտետներում ըստ մասնագիտությունների ստեղծվել են կրթական ծրագրի կառուցվածքային և բովանդակային վերանայման և մասնագիտության կրթական ծրագրի կազմման 13 աշխատանքային խմբեր (12-ը բակալավրի կրթական ծրագիր կազմելու և 1-ը՝ մագիստրոսի: Այդ խմբերում ըստ մշակված ժամանակացույցի պարբերաբար աշխատել են ՄԿՈԱ բաժնի մասնագետների և ուսումնամեթոդական վարչության ներկայացուցիչների հետ և կազմել են

համապատասխան կրթական ծրագրեր: Աշխատանքային խմբերը կրթական ծրագրերը կազմելուց առաջնորդվել են ԵՊՀ ԳԽ-ի կողմից 2010թ. հաստատված կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներով և կրթական ծրագրի մասնագրի հաստատված կառուցվածքով: Կազմված կրթական ծրագրերը կիրառության մեջ են մտել 2013թ. սեպտեմբերից, նրանք տեղադրված են մասնաճյուղի կայքում, և ուղեցույց են ծառայում ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների համար: 2013թ-ից հետո բացված «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Դիզայն», «Հոգեբանություն», և 2016թ. բաղցվող «Համակարգչային գրաֆիկա» և «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտությունների համար նույնպես համապատասխան գործընթացների հիման վրա կազմվել են կրթական ծրագրեր:

Այժմ մասնաճյուղի **4** ֆակուլտետներում և հեռակա ուսուցման բաժնում իրականացվում են բակալավրի ***15 կրթական ծրագրեր:*** Տարածաշրջանում գործունեության մի շարք տիրույթների համար, ինչպիսիք են հասարակական և բնական գիտությունները, կրթությունը և մանկավարժությունը, մշակույթը և արվեստը, մասնաճյուղն իր կրթական ծրագրերով ապահովում է համապատասխան որակավորում ունեցող, գիտելիքներով ու անհրաժեշտ կարողություններով օժտված, մասնագիտական խնդիրներ լուծող և համալիր կոմպետենցիաների տիրապետող մրցունակ մասնագետներով և.

- նպաստում հայագիտական և հումանիտար գիտությունների զարգացմանն ու կայացմանը,
- ծառայում մարզի սոցիալ-տնտեսագիտական միջավայրի ձևավորմանը, նրանց խնդիրների լուծմանն ու բարելավմանը,
- իրականացնում բնագիտական, բնապահպանական և կիրառական կարևոր նշանակություն ունեցող մի շարք գործընթացների համար կադրային ապահովում,
- ամենակարևորը և յուրահատուկը՝ «Կիրառական արվեստ» և «Դիզայն» կրթական ծրագրերով մասնաճյուղը նպաստում է ազգային մշակույթի և արվեստի տարածմանն ու զարգացմանը ոչ միայն մարզում, այլ նաև ամբողջ հանրապետությունում:

Մասնաճյուղի բոլոր մասնագիտությունների բակալավրի կրթական ծրագրերն ապահովում են ծրագրի մասնագրով պահանջվող ամբողջ փաստաթղթային փաթեթը, պահպանում են նրանց բովանդակային բոլոր պահանջներն ու չափանիշները:

Մասնավորապես, բոլոր կրթական ծրագրերի ընդհանուր կրթության կառուցամասը վերակառուցված և ուղղորդված է ուսանողների հաղորդակցման, քննադատական մտածողության, քանակական փաստարկման, միջանձնային և կառավարման կարողությունների զարգացմանը և մասնագիտական էթիկայի ձևավորմանը:

Օրինակ, «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության կրթական ծրագրի բարեհաջող ավարտին մասնաճյուղի շրջանավարտները կունենան հետևյալ հմտություններն ու ընդհանրական կարողությունները.

Կտիրապետի՝

Բ1. որոշակի փաստարկների հիմնավորման և եզրահանգումների նպատակով տնտեսագիտական տեղեկատվություն հավաքագրելու, վերլուծելու և մեկնաբանելու հմտություններին,

Բ2. տնտեսագիտական ստանդարտ մոդելների հիման վրա ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և քանակական վերլուծության հիմնարար մեթոդների կիրառմամբ տնտեսական սուբյեկտների վարքը, տնտեսական երևույթների և պրոցեսների հնարավոր զարգացումները կանխատեսելու հմտություններին,

Բ3. ձեռնարկության գործունեությանն առնչվող միկրոտնտեսագիտական ցուցանիշները, ֆինանսական, հաշվապահական. մարքեթինգային և այլ տվյալները հաշվարկելու և մեկնաբանելու հմտություններին,
Բ4. մակրոտնտեսական ցուցանիշները հարշվարկելու և մեկնաբանելու, դրանց համադրումներ կատարելու հմտություններին,
Բ5. ակադեմիական և արդյունաբերական ոլորտներում ինքնուրույն մասնագիտական գործունեություն ծավալելու, ինչպես նաև որոշակի ղեկավարության ներքո հետազոտական աշխատանքներ իրականացնելու հմտություններին:

Կկարողանա՝

Գ1. աշխատել թիմում,
Գ2. կիրառել գիտելիքները պրակտիկայում, ձևակերպել խնդիր և լուծել,
Գ3. տարբեր աղբյուրներից հայթայթել տեղեկատվություն և վերլուծել,
Գ4. բանավոր և գրավոր հաղորդակցվել մասնագիտական հանրության հետ,
Գ5. մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսք,
Գ6. պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը:

Խնդիր I բ) Ներդնել որակի ներքին ապահովման համակարգ՝ հավատարմագրման պետական չափանիշներին համապատասխան:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ 2009 թվականից մասնաճյուղում ներդրված է որակի ձևավորման և ներքին ապահովման գործընթացը:

Մասնաճյուղն առաջնորդվում է <u>ԵՊՀ Որակի ապահովման հայեցակարգով</u>, կրթության որակի բնագավառում իր քաղաքականությամբ և ունի որակի ներքին ապահովման իր կազմակերպական կառուցվածքը.



2009թ. դեկտեմբեր 17-ին ձևավորվել է ԵՊՀ ԻՄ-ի որակի ապահովման և վերահսկման գործառույթների կազմակերպման և իրականացման հանձնաժողովը, որը 2010թ. սեպտեմբերի 1-ին վերանվանվել է Որակի կառավարման հանձնաժողով, ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի կողմից ընդունվել և հաստատվել է հանձնաժողովի կանոնակարգը: Մշակվել և հաստատվել է նաև ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումներում Որակի կառավարման հանձնաժողովի լիազոր-ներկայացուցիչների գործունեության կանոնակարգը, որը վերանայվել և հաստատվել է 2015թ.-ի դեկտեմբերին: 2011թ. ստեղծվել է Կրթության որակի ապահովման և գնահատման բաժինը, մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից ընդունվել և հաստատվել է բաժնի կանոնակարգը: 2014թ. հունվարին բաժինը վերանվանվել է Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին, մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից ընդունվել և հաստատվել է բաժնի կանոնակարգը /27.01.2014թ./: Բաժնի գործունեությունն ուղղված է եղել մասնաճյուղում կրթության որակի արդյունավետ կառավարմանը, ներքին և արտաքին շահակիցների հետ համագործակցելով նրանց կարիքների, առաջարկությունների վերհանմանն ու նրանց համար արդյունավետ լուծումներ գտնելուն, ուսումնառության բարելավմանը և այլն:

Մասնաճյուղում որակի ներքին ապահովման գործընթացների շրջանակներում իրականցվել են որակի շարունակական բարելավմանը միտված փաստաթղթային հիմքերի համալրում, վերանայում և ներդնում, իրականացվել են խորհրդատվական բազում աշխատանքներ, անց են կացվել մի շարք հարցումներ, կատարվել են համալիր վերլուծություններ:

Մասնաճյուղում 2011-15թթ. իրականացվել են հետևյալ գործընթացները.

– 2015թ. 2-րդ կիսամյակում ՄԿՈԱ բաժնի կողմից վերանայվել և հաստատվել է 2012թ.-ից կազմված ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման կազմակերպական նոր կառուցվածքը և մասնաճյուղի կազմակերպական կառուցվածքի սխեման,

– 2011թ.-ից սկսած ամեն տարի լրամշակվում է *մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշները (ԳԱՑ),* պարտադիր մուտքագրվում են յուրաքանչյուր տարվա ցուցանիշները, յուրաքանչյուր չափանիշի համար կատարվել են վերլուծություններ: Փաստաթուղթն ընդգրկում է մեծաքանակ տվյալներ և համապատասխան վերլուծություններ, ներկայացնում է մասնաճյուղի վերջին 4-5 տարիների գործունեության, ձեռքբերումների և տարբեր խնդիրների ինքնագնահատումը: Այս վերլուծությունները որոշիչ դեր են խաղում հաջորդ ուստարվա պլանավորման գործընթացներում: Փաստաթուղթը համալրվելուց հետո տպագրվում է, տեղադրվում է մասնաճյուղի պաշտոնական կայք էջում:

– ***մշակվել և ներդրվել են հետևյալ քաղաքականությունները.***

- *ԵՊՀ ԻՄ-ի որակի ներքին ապահովման գործընթացների ֆինանսական ապահովման քաղաքականությունը (ԳԽ 28.12.2013թ.):* Այս փաստաթղթով մասնաճյուղը կարևորում է որակի ներքին ապահովման գործընթացների արդյունավետ իրականացումը և այս քաղաքականությամբ ապահովում այդ գործընթացների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հոսքն ու նրանց արդյունավետ կառավարումը՝ կարգավորելով մասնակիցների ֆինանսական հարաբերությունները: 2014թ. մասնաճյուղի բյուջեում որակի ներքին գործընթացների իրականացման համար առանձին տողով՝ ըստ մշակված քաղաքականության, հատկացվել է գումար:

- *ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականությունը հանրային կապերի ոլորտում (ԳԽ 27.05.2014թ.):* Այս քաղաքականության պատշաճ իրականացումն ակնկալում է մասնաճյուղի բարձր վարկանիշը տարածաշրջանում և հանրապետության բուհերի համակարգում, կնպաստի մասնաճյուղում ուսանողների թվի աճին և բարձր որակավորում ունեցող մասնագետի, հայրենասեր ու պատասխանատու քաղաքացու պատրաստմանը, որը կունենա կարևոր դերակատարություն մարզի և ՀՀ հանրային կյանքի բոլոր ոլորտներում:
- *ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի քաղաքականությունը մասնագիտության կրթական ծրագրերի բարելավման, ուսումնական գործընթացների կազմակերպման և կառավարման առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման բնագավառում (ԳԽ 22.03.2014թ.):* Մասնաճյուղը շահագրգռված է և ունի բավարար պայմաններ ու նախադրյալներ արդյունավետ բենչմարքինգի իրականացման և փորձի փոխանակման համար: Նա կարևորում է բենչմարքինգի դերը ողջ ուսումնական գործընթացի մշտադիտարկման գործում. գործընթացների պլանավորում,
  - տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն,
  - վերլուծության արդյունքների հիման վրա համապատասխան գործընթացների իրականացում,
  - ձեռքբերած արդյունքների չափում, դիտարկում և գնահատում:

  Մասնաճյուղը գիտակցում է, որ բենչմարքինգն առաջին հերթին սեփական ցուցանիշների համեմատումն է այլ առաջատար, մրցակից հաստատությունների ցուցանիշների հետ, երկրորդը՝ ուրիշ հաստատությունների լավագույն, հաջողված փորձի ուսումնասիրումն ու կիրառումը սեփական հաստատությունում: Մասնաճյուղի տարբեր բաժինների աշխատակիցներ և դասախոսներ գործուղվում են տարբեր բուհեր՝ համապասխան բաժինների աշխատանքների ուսումնասիրման, գնահատման և անհրաժեշտության դեպքում մեզ մոտ այդ գործընթացների բարելավման համար:
- *ԵՊՀ ԻՄ սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականությունը (ԳԽ 10.07.2015թ.):* Այս քաղաքականությամբ մասնաճյուղն ակնկալում է արդյունավետ կազմակերպել փորձառու, կայացած և հեղինակություն վայելող դասախոսների (մենթորների) կողմից իրենց հովանավորյալների (մենթիների) ուսուցանումը, խորհրդատվությունը, ուղղորդումն ու օժանդակումը: Այն նպատակ ունի նպաստել մասնաճյուղի կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան արհեստավարժ դասախոսական կազմի ձևավորմանը, ձևավորել ինքնակրթությանը և ինքնազարգացմանն ուղղված համագործակցային միջավայր և այլն:

- ***մշակվել և ներդրվել են մի շարք կանոնակարգեր.***
  - *ԵՊՀ ԻՄ-ում ուսումնական խորհրդատուների գործունեության կանոնակարգը (ԳԽ 28.12.2013թ.),* որով կանոնակարգվեց մասնաճյուղում բավականին բարեհաջող ներդրված ուսումնական խորհրդատուների ծառայությունը՝ գնահատելով ուսանողների իրազեկվածությունը և շահագրգռված լինելով նրանց համար ուսանողակենտրոն միջավայրի, ուսումնական գործընթացների խորհրդատվական և նպատակային կազմակերպմամբ:
  - *ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգը (27.01.2014թ., ԳԽ),*

- *ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարանային խորհրդի կանոնակարգը (27.01.2014թ., ԳԽ),*
- *ԵՊՀ ԻՄ-ում դասալսումների անցկացման կանոնակարգը (ԳԽ 17.10.2014թ.),* որով կանոնակարգված են մասնաճյուղում պարբերաբար իրականացվող դասալսումները, բաց դասերը և փոխադարձ դասալսումները: Դասալսումն ուսումնական պրոցեսի որակի նպատակային կատարելագործման մեխանիզմ է և մտնում է դասավանդողի անհատական պլանի մեջ՝ ուսումնամեթոդական աշխատանքների բաժնում: Փաստաթուղթն ունի հավելվածներ՝ դասի գնահատման հարցաթերթ և դասալսման արդյունքների վերլուծության ձևաթուղթ: Այդ ձևաթղթերը միջոց են դասալսման արդյունքների բազմակողմանի և նպատակային գնահատման համար: Դրանք բնութագրելու են դասախոսի՝ դասընթացի վարման, բովանդակության, դասին ուսանողների ներգրավվածության, խմբային աշխատանքների իրականացման կարողությունները, առաջարկված է գնահատման սանդղակ: Դասալսման արդյունքների վերլուծության ձևաթղթում դասալսողը ներկայացնում է իր կարծիքը դասապրոցեսի կազմակերպման, դասախոսի կողմից կիրառած մեթոդների, նորարարական փորձի, կիրառած մեթոդի արդյունավետության վերաբերյալ, ապա կատարում իր դիտողություններն ու առաջարկները:
- *ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոնի կանոնակարգը (ԳԽ 17.10.2014թ.),* որը ներկայացնում է աջակցության կենտրոնի գործունեության նպատակներն ու խնդիրները, այն է կատարելագործել դասավանդման մեթոդիկան, ուսումնական գործընթացում ներառել կրթական նորագույն տեխնոլոգիաներ, նպաստել սկսնակ և ստաժավոր դասախոսների ստեղծագործական և մտավոր ներուժի զարգացմանը և այլն:
- *ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգը (ԳԽ 17.10.2014թ.),* որով սահմանվում են կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգի և պարբերական վերանայման գործընթացները որպես նրանց որակի ապահովման և շարունակական բարելավման հիմնական մեխանիզմներ, որոնց նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման որակը և համապատասխանությունը սահմանած նպատակներին և համապատասխան կրթական չափորոշիչի պահանջներին, գնահատել նրանց արդիականությունը, հիմնավորվածությունը, մատուցման փաստացի որակը և նրա շարունակման նպատակահարմարությունը:
- *ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցներին խրախուսելու կարգ սահմանելու մասին կանոնակարգը (25.12.2014թ., ԳԽ),*
- *ԵՊՀ ԻՄ-ի ներքին աուդիտի անցկացման կարգը (ԳԽ 25.12.2014թ.),* որը ներկայացնում է մասնաճյուղում ներքին աուդիտի անցկացման նպատակը, պլանավորման և իրականացման սկզբունքները, ներքին աուդիտի հետ կապված փաստաթղթերի կազմման և պահպանման առանձնահատկությունները: Այն մասնաճյուղի գործունեության արդյունավետությանը և բարելավմանը միտված կարևոր կարգ է, որը կնպաստի մասնաճյուղում լիարժեք խորհրդատվության ապահովմանը և աշխատանքների լիարժեք պլանավորմանն ու իրականցմանը: Կարգն ընդգրկում է ներքին աուդիտ անցկացնող հանձնաժողովի համապատասխան գործընթացների իրականացման և ամրակայման բազմաթիվ ձևաթղթեր:
- *ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության կանոնակարգը /ԵՊՀ ԻՄ ԳԽ-ի 18.04.2015թ./,*

- *ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից ներքին շահակիցների բավարարվածության ուսումնասիրության կանոնակարգ /ԵՊՀ ԻՄ ԳԽ-ի 18.04.2015թ./,*
- *ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների գնահատման վերաբերյալ հարցման կանոնակարգը (ԳԽ 31.10.2015թ.)*
- *ԵՊՀ ԻՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումներում գիտական խորհրդին կից որակի կառավարման մշտական հանձնաժողովի լիազոր-ներկայացուցչի գործունեության կանոնակարգը (ԳԽ 31.10.2015թ.)*
- *«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի ակադեմիական ազնվության կանոնակարգը /.../*

- ***մշակվել և ներդրվել են մեթոդական ուղեցույցներ և ձևաթղթեր.***

- Դասախոսների համար *«Դասընթացի փաթեթ (պորտֆոլիո)» կազմելու մեթոդական ուղեցույցը /2014թ. մայիս/*, որը կազմվել է ՄԿՈԱ բաժնի կողմից: Դասընթացների փաթեթների ներմուծումը նպատակ ուներ համակարգել դասախոսի գործունեությունը յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում, պլանավորել դասընթացի ուսուցման արդյունավետ ու տրամաբանական կազմակերպումը, իրականացնել դասընթացից դասավանդողի ու ուսումնառողի ձեռքբերումների գնահատումը, կազմակերպել անհրաժեշտ փաստաթղթերի նպատակային հավաքագրում, որը ծառայում է դասախոսին որպես սեփական գործունեության անդրադարձի (ռեֆլեքսիայի) միջոց և նրա արդյունքների ներկայացումը՝ որպես կոմպետենտության ընթացիկ գնահատման կամ շուկա դուրս գալու մրցունակության ցուցադրման միջոց: Այն կիսամյակի ավարտին արտացոլում է դասախոսի և ուսանողների գործունեությունը, ներկայացնում ամրագրված մեխանիզմները, առանձնացնում դրանցից արդյունավետները, կամ նշում նրանք, որոնք իրենց չեն արդարացրել: Դասընթացի փաթեթի արդյունավետ կազմման համար բաժնի կողմից դասախոսներին տրամադրվել են ևս երկու մեթոդական ուղեցույցներ.

  ա) ***Ուսումնառության արդյունքների պլանավորում.*** Սույն ուղեցույցում ներկայացվում են ԵՊՀ ԻՄ-ի դասընթացի փաթեթի մշակման ժամանակ դասընթացի կրթական վերջնարդյունքների ձևակերպման հիմնադրույթները և այն չափանիշները, որոնցով պետք է առաջնորդվեն ԵՊՀ ԻՄ-ի դասավանդողները դրանց ձևակերպման ժամանակ:

  բ) ***Կրթական վերջնարդյունքների գնահատում.*** Այս ուղեցույցում ներկայացված են ուսանողի կրթական վերջնարդյունքների և ձեռքբերումների մակարդակը տարակարգելու հստակ չափանիշներ, նշված են կրթական վերջնարդյունքների գնահատման համար համարժեք մեթոդները և ցուցիչները, բերված են բնութագրիչ օրինակներ: Արդյունավետ գնահատումն անհրաժեշտ է ուղղակիորեն կապել կրթական արդյունքների հետ: Գնահատման տարբեր ձևերը և ուսանողի ու դասախոսի համագործակցությունն այդ գործընթացում աջակցում են միկրոեղանակի ձևավորմանը, նվազեցնում հակասական իրավիճակների քանակը, ուսանողին սովորեցնում արդարացի գնահատել իր ձեռքբերումները, դիտողությունների, սխալների նկատմամբ լինել համբերատար և իրեն դրսևորել համապատասխան ձևով:

- *ԵՊՀ ԻՄ-ի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվության ձևաթուղթը*, որը մասնաճյուղում ներդրվել է 2014-15 ուստարում: Մասնաճյուղում գործող ***ամփոփիչ***

ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններում նախագահներն իհարկե անդրադառնում են տվյալ մասնագիտության շրջանավարտների տեսական և գործնական պատրաստվածության մակարդակին, կատարում են ամբիոններում մասնագիտական գործունեության բարելավմանն ուղղված առաջարկություններ, սակայն դրանք սուբյեկտիվ կարծիքներ են և շատ ժամանակ չեն ներառում ժամանակակից կրթական պահանջներին, դուբլինյան նկարագրիչներին համապատասխան մոտեցումներ և վերլուծություններ: Նշված պահանջներին համապատասխան հաշվետվություններ ունենալու նպատակով ՄԿՈԱ բաժինը մշակել է հաշվետվության նոր տարբերակ: Այն ուղղորդում է, թե հաշվետվություն գրելիս նախագահներն ինչ տեսակետների պետք է ուշադրություն դարձնեն, շրջանավարտների որ ձեռքբերումների և բացթողումների մասին բարձրաձայնեն: Հաշվետվության մեջ ներկայացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կարծիքը շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքների մակարդակի վերաբերյալ, ավարտական աշխատանքների թեմաների, դրանց համապատասխանության և շրջանավարտների կողմից աշխատանքների ներկայացման հմտությունների վերաբերյալ և առաջարկություններ՝ շրջանավարտների կողմից դրանց իրականացման հետագա բարելավման ուղղությամբ:

- *<u>տարբեր հարցումների համար մշակվել են հետազոտման գործիքի անձնագրեր:</u>* Հետազոտման գործիքի անձնագիրը ներկայացնում է հետազոտման ընդհանուր նպատակը, խնդիրները, տալիս է կապը մասնաճյուղի ռազմավարական նպատակի հետ, հիմնավորում է ընտրված մեթոդը, ընտրանքը, կիրառման պարբերականությունը և այլն:
- Լրամշակվել է շրջանավարտների և կարիերայի կենտրոնի *<u>«Շրջանավարտի գրանցման թերթիկ»-ը:</u>* Այս թերթիկի տվյալներն անհրաժեշտ են կենտրոնին շրջանավարտների հետ հետադարձ կապն ապահովելու, նրանց աշխատանքի տեղավորման գործընթացին աջակցելու, նրանց աշխատանքային գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման համար:
- ամբիոնների և դեկանատների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի ցանկը /2015թ. մարտ?/
- բաժնի և մասնաճյուղի ենթակառուցվածքների միջև տեղեկատվության փոխանակումը կարգավորող սխեմա-ժամանակացույցը,

- ***<u>Իրականացվել են խորհրդատվություններ, վերլուծություններ, վերապատրաստման դասընթացներ.</u>***

- 2013թ. դեկտեմբերից կազմակերպվում են «Ինչպե՞ս պատրաստել արդյունավետ պրեզենտացիաներ» թեմայով թրեյնինգներ, որոնց մասնակցում են տարբեր ամբիոնների դասախոսներ: Թրեյնինգը նպատակ ուներ մասնաճյուղի դասախոսներին տալ խորհրդատվություն դասավանդման և ուսումնառության նոր մեթոդների և նյութերի վերաբերյալ, մասնավորապես դասընթացները նպատակային և ճիշտ կազմված շնորհանդեսներով ուղեկցելու համար, նաև համակարգել պրեզենտացիաներ պատրաստելու վերաբերյալ մասնակիցների գիտելիքները, ձևավորել և զարգացնել արդյունավետ պրեզենտացիաներ կազմելու հմտությունները,

ապահովել փորձի փոխանակում՝ տարբեր բնագավառների մասնագետների միջև: Թրեյնինգի մասնակիցները կարևորել են դասընթացը և նրա անհրաժեշտությունը:

- 2014թ.-ի մայիսից պարբերաբար ՄԿՈԱ բաժնի կողմից պ-ն Ա.Մակարյանի անմիջական աջակցությամբ մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար իրականացվում են խորհրդատվություններ «Դասընթացի փաթեթ»-ի կազմման վերաբերյալ: Ներկաներին, համապատասխան շնորհանդեսի ուղեկցությամբ, բացատրվում են առարկայական փաթեթների (պորտֆոլիոների) բոլոր բաժինները, մեկնաբանվում են առաջադրվող պահանջները:
- 2015թ.... մասնաճյուղի աշխատակիցների համար Ա.Մակարյանը կարդացել է «Ինքնավերլուծության իրականացում. ՈԱԱԿ մոտեցումներ» թեմայով զեկուցում: Դասընթացի նպատակն էր մասնաճյուղի աշխատակիցներին ներկայացնել ինքնավերլուծության իրականացման կարևորությունը բուհում գործող մասնագիտության կրթական ծրագրերի, ուսանողների ուսումնառության որակի բարելավման գործում, զարգացնել մասնակիցների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունները: Դասընթացի ժամանակ քննարկվել են ինքնավերլուծության կազմակերպմանը, փորձագիտական գնահատման մոտեցումներին վերաբերող մի շարք հարցեր, ներկայացվել են ինքնավերլուծության իրականացման քայլերը, տրվել են գործնական խորհուրդներ ինքնավերլուծություն իրականացնողներին:
- բաժինը 2013թ.-ից սկսած իրականացրել է մի շարք համեմատական վերլուծություններ՝ ըստ կրթական ծրագրերի մասնաճյուղի առաքելության հետ համահունչության, Որակավորումների ազգային շրջանակի հետ մասնագիտության կրթական ծրագրի համադրելիության, կրթական ծրագրերում այլ կրթական ծրագրերի նպատակների և խնդիրների համադրելիության, մասնաճյուղում և այլ բուհերում կիրառվող դասավանդման և ուսումնառության, գնահատման մեթոդների համադրելիության, կրթական ծրագրերի կառուցվածքի, կրթական ծրագրի կրթամասերի կրեդիտային բաշխվածության, ընդհանուր մասնագիտական կրթամասերի համադրելիության ուղղությամբ /դրանք իրականացվել են մասնաճյուղի տարբեր կրթական ծրագրերի օրինակով/:

❖ 2010-2011թթ. մասնաճյուղն իրականցրել է իր ինստիտուցիոնալ կարողությունների պիլոտային ինքնագնահատում:

Հավատարմագրման պետական չափանիշներին համապատասխան 2013թ.-ից մասնաճյուղում պարբերաբար իրականացվում է մասնաճյուղի կրթական գործունեության ինքնագնահատում.

– 2013թ. հունվարից մայիս ամիսներին իրականացվել է մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների փորձնական ինքնագնահատում, կազմվել է զեկույցը, որը հունիսին ներկայացվել է մասնաճյուղի ողջ անձնակազմի քննարկմանը:

– 2013-2014 և 2014-15 ուստարում ՄԿՈԱ բաժինն ըստ իր աշխատանքային պլանի իրականացրել է մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների մասնակի ինքնավերլուծություն մի շարք չափանիշների համար,

– 2015թ. ապրիլից սեպտեմբեր ամիսներին կազմվել է մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման նոր զեկույցը:

❖ Մասնաճյուղի կրթական ծրագրերում ամրագրված ուսումնառության ակնկալվող արդյունքները համահունչ են հաստատության առաքելության հետ, և համադրելի են ՈԱՇ-ի հետ: ՈԱՇ-ում ներկայացված մասնագիտական, տեսական և գործնական խորը գիտելիքների ձևավորման հնարավորությունները, վարպետության և նորարարության մասին վկայող վերջնարդյունքները, ուսանողի ձեռք բերվելիք կարողությունները մասնաճյուղի կրթական ծրագրերում ամրագրված են համապատասխան կոմպետենտություններում և ծրագրի ավարտին շրջանավարտների համար ապահովում են.

1. կոնկրետ մասնագիտության հիմնական հասկացությունների, գաղափարների, սկզբունքների, վերլուծական և քննադատական մեթոդների ու մոդելների վերաբերյալ գիտելիքների իմացություն,
2. կարևոր տվյալներ, ցուցանիշներ և տեղեկատվություն հավաքագրելու, խմբագրելու, վերլուծելու, մեկնաբանելու, համադրումներ կատարելու, ինքնուրույն խնդիրներ և հարցադրումներ կատարելու և լուծելու, ինքնուրույն մասնագիտական գործունեություն ծավալելու, հետազոտական աշխատանքներ կատարելու, մասնագիտական ոլորտում ժամանակակից տեղեկատվական համապատասխան համակարգեր նպատակային կիրառելու հմտություններ,
3. մասնագիտական գրագետ, փաստարկված, հիմնավորված, տրամաբանական բանավոր և գրավոր խոսք, հաղորդակցման, թիմում աշխատելու և իր մասնագիտական գիտելիքները կիրառելու, ինքնուրույն եզրահանգումներ կատարելու, մասնագիտական որոշումների դեպքում պատասխանատվություն ստանձնելու կարողություններ:

Օրինակ, Համադրելիությունը Որակավորումների ազգային շրջանակի հետ ներկայացնենք ԵՊՀ ԻՄ «Հայոց լեզու և գրականություն» ՄԿԾ-ի օրինակով.

	ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ՇՐՋԱՆԱԿ /ՈԱՇ/	ԵՊՀ ԻՄ «Հայոց լեզու և գրականություն» ՄԿԾ-ի օրինակով
1	**Գիտելիքներ**	***Գիտենա՝***
	Մասնագիտական աշխատանքի կամ ուսման կոնկրետ բնագավառին **առնչվող մասնագիտական, տեսական և գործնական խորը գիտելիքներ**, որոնք անհրաժեշտ են տեսությունների ու սկզբունքների համընդգրկուն ըմբռնման, դրանց ***քննադատական գնահատման*** ու ***կատարելագործման***, տվյալ մասնագիտական ոլորտում առկա դպրոցների, ուսմունքների, գիտաճյուղերի և ուղղությունների մասին ***իրազեկվածության***, դրանց համեմատության և գործնական կիրառության համար:	**Ա1.** բանասիրության հիմնական սկզբունքները և հայեցակարգերը, **Ա2.** ժամանակակից բանասիրության հիմնական սկզբունքները, հայեցակարգերը և հիմնախնդիրները. **Ա3.** լեզվաբանական և գրականագիտական հիմնական գիտելիքներ, լեզվաբանական և գրականագիտական վերլուծությունների մեթոդները, **Ա4.** լեզվաբանական և գրականագիտական արդի ուղղությունները, Ա5. լեզվաբանական և գրականագիտական վերլուծությունները, խմբագրական, թարգմանական, մանկավարժական աշխատանք կատարելու հիմնարար սկզբունքները:
2	**Հմտություններ**	***Տիրապետի՝***
	Վարպետության և նորարարության մասին վկայող ***առաջանցիկ հմտություններ,*** որոնք անհրաժեշտ են աշխատանքի կամ մասնագիտական ուսման որևէ բնագավառում բարդ և անկանխատեսելի խնդիրներ լուծելու, բարդ ու համալիր տեղեկատվությունը	**Բ1.** լեզվական և գրականագիտական փաստերի հավաքման, պահպանման և մշակման մեթոդները կիրառելու հմտություններին. **Բ2.** լեզվաբանական և գրականագիտական ուսումնասիրութ-

	քննադատաբար վերլուծելու և գնահատելու, պահանջվող ունակություններն ընտրելու, զարգացնելու և հարմարեցնելու, մասնագիտական գործունեության ընթացքում անհրաժեշտ մեթոդներ գործի դնելու, այդ մեթոդները կատարելագործելու ու դրանց արդյունավետությունը գնահատելու համար: **Համակարգչային և տեղեկատվական տեխնիկայից** ազատորեն օգտվելու գործնական հմտություններ, հայտնի ծրագրային փաթեթների գործնական տիրապետում:	յուններ կատարելիս **ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ օգտագործելու** հմտություններին. **Բ3.** լեզվաբանական և գրականագիտական վերլուծություններ իրականացնելու հմտություններին. **Բ4.** տարաբնույթ տեքստեր խմբագրելու, սրբագրելու, թարգմանելու հմտություններին. **Բ5.** ակադեմիական և մանկավարժական ոլորտներում ինքնուրույն մասնագիտական գործունեություն ծավալելու, ինչպես նաև որոշակի ղեկավարության ներքո հետազոտական աշխատանքներ իրականացնելու հմտություններին:
3	**Կարողություններ**	***Կարողանա՝***
	Պատասխանատվության ստանձնում աշխատանքի և ուսման այն գործընթացների կազմակերպման ու կառավարման համար, որոնք կարող են հանգեցնել միջավայրի զգալի փոփոխությունների կամ զարգացման. **նախաձեռնության ցուցաբերում. որոշումներ կայացնելու** ունակության դրսևորում նմանօրինակ գործողությունների իրականացման ընթացքում. աշխատանքի և ուսման գործընթացներում մյուս աշխատողների դերի որոշում. այդ գործընթացների և անհատների ու խմբերի շրջանում արհեստավարժության զարգացման համար պատասխանատվության ստանձնում. **ինքնուրույնության դրսևորում** աշխատանքի և ուսման ընթացքում. մասնակցություն նյութական պաշարների պլանավորման և բաշխման գործընթացին: **Օտար լեզվով** կարող է կազմել հստակ տեքստ, մասնագիտական թեմայի շուրջ: Կարող է քննարկել իր մասնագիտության Տեխնիկական մանրամասները, **ներկայացնել կարծիք** և իր նպատակները:	**Գ1.** աշխատել թիմում, **Գ2.** կիրառել գիտելիքները պրակտիկայում, ձևակերպել խնդիրներ և լուծել, **Գ3.** տարբեր աղբյուրներից հայթայթել տեղեկատվություն և վերլուծել, **Գ4.** մասնագիտական թեմաներով բանավոր և գրավոր հաղորդակցվել հանրության հետ, **Գ5.** մայրենի և որևէ օտար լեզվով տրամաբանորեն ճիշտ, փաստարկված և հստակ կառուցել բանավոր և գրավոր խոսքը, պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը: **Գ6.** ուսումնասիրության ընթացքում ստեղծել միջառարկայական կապեր:

❖ Կրթական ծրագրերի արդյունավետ իրականացման համար մասնաճյուղում գործում են անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության համապատասխան քաղաքականություն և ընթացակարգեր, որոնք ապահովում են կադրերի համապատասխանությունը հաստատության առաքելությանը և կրթական ծրագրերի նպատակներին, դրանք են.

- ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման կանոնակարգը (ԳԽ 01.02.2010թ.)
- ԵՊՀ ԻՄ-ի ամբոնների վարիչների ընտրության ընթացակարգը (ԳԽ 24.02.2011թ.)
- ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետների դեկանների ընտրության ընթացակարգը (ԳԽ 24.02.2011թ.)
- ԵՊՀ ԻՄ-ի մասնաճյուղի դասախոսի պաշտոնի հրահանգը:

Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հիմնական պահանջները ձևակերպված են տվյալ մասնագիտության կրթական ծրագրերին համապատասխանող կրթական չափորոշիչներում և բխում են ՀՀ որակավորումների ազգային շրջանակի պահանջներից, պայմանավորված են բակալավրիական կրթություն ստացող շրջանավարտին անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և կարողությունների ձևավորման ծավալով, իսկ յուրաքանչյուր կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ կադրային ապահովվածությունը հիմնավորվում են կրթական ծրագիր մշակող աշխատանքային խմբերը, նշելով ֆակուլտետում առկա անհրաժեշտ որակավորումով և թվակազմով դասախոսական

անձնակազմի առկայությունը, ներկայացնելով այն դասախոսների տվյալները (ԵՊՀ-ում սահմանված ձևաչափի CV-ները), ովքեր պետք է սպասարկեն տվյալ ծրագիրը, նշելով ծրագրի իրականացման համար անհրաժեշտ դասախոսների վերապատրաստման կարիքները և հնարավորությունները (օրինակ՝ նոր դասընթացների, ուսուցման արդի ձևերի ու տեխնոլոգիաների, ժամանակակից սարքավորումների և տեխնիկական միջոցների յուրացման համար)։

Հարկ է նշել, որ մասնաճյուղը կրթական ծրագրերի իրականացման համար ապահովված է գիտամանկավարժական կադրերով, որոնք, որպես կանոն, ունեն դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն, հետևողականորեն զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ: Հատուկ մասնագիտացնող դասընթացներ դասավանդող դասախոսները, որպես կանոն, ունեն գիտական աստիճան (գիտական կոչում, ՀՀ նկարիչների միության անդամ) և /կամ համապատասխան գործունեության ոլորտում աշխատանքային փորձ, և աշխատանքի են հրավիրվում ոլորտի բարձր որակավորում ունեցող մասնագետներ: Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը փորձառու ու առաջատար մասնագետներով ապահովելու գործում մասնաճյուղին մեծապես աջակցում են ԵՊՀ–ի համապատասխան ամբիոնները՝ մասնաճյուղ ուղարկելով մրցութային կարգով իրենց մոտ աշխատանքի անցած լավագույն կադրերին:

Մասնաճյուղում կիրառվում են աշխատանքային պայմանագրերի տարբեր ձևեր՝ հիմնական, ներքին և արտաքին համատեղություն: Գործում է նաև ժամավճարային աշխատաձևը, ինչը թույլ է տալիս երաշխավորել կրթական ծրագրերի ապահովվածությունը նեղ մասնագիտացում և գործնական հմտություններ ունեցող մասնագետներով:

Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմում զգալի թիվ են կազմում նաև մասնաճյուղի շրջանավարտները: 2011-2015թթ. ընթացքում գիտությունների թեկնածուի աստիճան ստացած 21 դասախոսներից 7-ը մասնաճյուղի շրջանավարտներ են: Շրջանավարտներին աշխատանքի ընդունելու նման քաղաքականությունը նախ և առաջ խթանում է մեր բուհի ուսանողների բարձր առաջադիմությանը, ապահովում է մասնաճյուղը տեղացի երիտասարդ հեռանկարային կադրերով, որոնք իրենց գործունեության ընթացքում լավագույնս օգտագործում են նոր տեխնիկական և դասավանդման արդիական միջոցները:

Ներկայումս կրթական ծրագրերը համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմով ապահովում են մասնաճյուղի և ԵՊՀ համապատասխան ֆակուլտետների ամբիոնները:

ԵՊՀ ԻՄ-ն հավատարիմ մնալով իր առաքելությանը, համահունչ պետական կրթական քաղաքականությանը, հավատարիմ մայր բուհի կրթական քաղաքականությանը և առաջնորդվելով կրթության որակի բարձրացման և բարելավման արդի պահանջներով վարում է ընտրված մասնագիտությունների կրթական ծրագրերի հաստատման, մոնիթորինգի և վերանայման հստակ քաղաքականություն, առաջնորդվելով ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ համապատասխան կարգերով.

- ԵՊՀ կրթական ծրագրերի հաստատման կարգ (ԳԽ 30.01.2014թ.)
- ԵՊՀ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգ (ԳԽ 30.01.2014թ.)
- ԵՊՀ ԻՄ կրթական ծրագրերի մոնիթորինգի և վերանայման կարգ (ԳԽ 06.10.2014թ.):

Այս կարգերը թույլ են տալիս համապատասխան ընթացակարգերով իրականացնել կրթական ծրագրերի հաստատումը, ապա նրանց մշտադիտարկման արդյունքում գնահատել նրանց արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում վերանայել դրանք:

Ծրագրերի կանոնավոր մոնիթորինգի նպատակն է գնահատել ծրագրերի մատուցման որակը և համապատասխանությունը սահմանված նպատակներին ու կրթական չափորոշչի պահանջներին: Նրա խնդիրն է գնահատել ծրագրի և նրա բաղկացուցիչ մասերի սահմանած կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը, դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման գործընթացների արդյունավետությունը, բացահայտել և վեր հանել ծրագրի թերություններն ու իրականացման դժվարությունները, կատարել նախորդ տարվա կատարողականի վերլուծություն և այլն:

Մասնաճյուղում գործում են կրթական ծրագրերի մշտադիտարկման և նրանց գնահատման մի շարք մեխանիզմներ, դրանցից են.

- <u>պորտֆոլիոները</u>, որոնցում դասախոսներն իրենց դասընթացների շրջանակներում իրականացնում են դասընթացի կատարողականի վերլուծություն, գնահատում են դասընթացի ուժեղ և թույլ կողմերը, դասընթացի արդյունավետ իրականցման վերաբերյալ իրենց կողմից կազմված հատուկ հարցաշարերի միջոցով հավաքագրում են ուսանողների կարծիքները և վերլուծություններն ամրագրում դասընթացի փաթեթում, ապա մշակում բարելավման նոր առաջարկներ՝ հաջորդ ուստարվա համար:
- ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում <u>արտաքին շահակիցների ընդգրկումը</u> և 2014-15 ուստարվանից մասնաճյուղում ներդրված այդ հանձնաժողովների <u>հաշվետվության նոր ձևաթուղթը</u>, որն ամփոփում է հանձնաժողովի կարծիքը շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքների մակարդակի վերաբերյալ, ավարտական աշխատանքների թեմաների, դրանց համապատասխանության և շրջանավարտների կողմից աշխատանքների ներկայացման հմտությունների վերաբերյալ և առաջարկություններ՝ շրջանավարտների կողմից դրանց իրականացման հետագա բարելավման ուղղությամբ:
- <u>հարցումները</u>՝ արտաքին և ներքին շահակիցների շրջանում: Մասնաճյուղի շրջանավարտների և պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքների, ուսանողների և շրջանավարտների մասնաճյուղում ուսումնառությունից բավարարվածության վերաբերյալ կարծիքների հավաքագրման և համապատասխան հարցերի արդյունքների վերլուծության միջոցով պարզաբանվում են կրթական ծրագրի արդյունավետությունը, նրա պահանջվածությունը և աշխատաշուկայի պահանջարկին բավարարելը:

Կրթական ծրագրերի պարբերական վերանայման նպատակը իրականացման լրիվ շրջափուլի արդյունքներով նրա արդիականության գնահատումն է, այն շարունակելու հիմնավորվածությունը, նրա մատուցման որակի ապահովումը: Մասնաճյուղի որակի ապահովման ներքին գործընթացները միտված են նպաստելու և խրախուսելու բոլոր աստիճաններում կրթական ծրագրերի արդյունավետության և որակի բարձրացումը, ապահովելու դրանց համապատասխանությունը մասնաճյուղի և տվյալ կրթական ծրագրի առաքելությանը:

Վերջին հինգ տարիների ընթացքում կրթական ծրագրերի վերանայման շրջանակներում իրականացված տարբեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ գործընթացը

ֆակուլտետների խորհուրդների ուշադրության կենտրոնում է, և մասնագիտական ամբիոններում վերանայվել են կրթական ծրագրի բաղկացուցիչ մաս հանդիսացող ուսումնական պլանները, ուսանողների ձեռքբերումների ստուգման և գնահատման ձևերն ու չափանիշները, դասընթացին հատկացված ժամաքանակները, դասընթացների թեմատիկան, կիրառական արվեստի ֆակուլտետում ուսումնառության ձևերը և այլն:

Թիվ	Ամբիոնի անունը	Իրականացված փոփոխությունը
1	Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	2014-15 ուստարվա «Սերվիս» մասնագիտության ուսումնական պլանում վերանայել ընդհանուր մասնագիտական և կամընտրական կրթամասի մոդուլների ժամաքանակները:
2	Ընդհանուր տնտեսագիտության	Ուսանողների պրակտիկ գիտելիքները խորացնելու նպատակով մասնագիտական կրթամասում 2015-19 ուստարվա «Տնտ. տեսություն» մասնագիտության ուսումնական պլանում որոշ մոդուլների գործնական դասընթացների ժամաքանակները ավելացվել են, ավելացվել են հատկացված կրեդիտները:
3	Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	«Տվյալների կառուցվածքներ» առարկայի գնահատման թեստային ձևը փոխարինվել է գրավոր քննությամբ, հաշվի առնելով առարկայի կարևորությունը, այն, որ ուսանողը չի կարող թեստերի միջոցով ինքնուրույն ընտրել խնդրի լուծման ճանապարհը և խնդրի լուծումն իրականացնել ծրագրավորման կառուցվածքների օգնությամբ:
		Ուսանողներին դասընթացի կառուցվածքի և բովանդակության ընկալելի և ընդգրկուն մատուցումը բարելավելու համար “Ալգորիթմների տեսություն” դասընթացի համար կատարվել է թեմատիկ փոփոխություն՝ թեմաների խմբավորման և միջազգային ընդունված տերմինալոգիայի օգտագործմամբ: Նաև ընթացիկ թեստային քննությունը փոխարինվել է գրավոր քննությամբ:
4	Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության	Վերանայվել են Տնտեսագիտության ֆակուլտետում «Մաթեմատիկական անալիզ», «Վերլուծական երկրաչափություն և գծային հանրահաշիվ» դասընթացների առարկայական ծրագրերը, որպեսզի ֆիքսվեն այն խնդիրները, որոնց լուծմանն է միտված առարկայական ծրագրում տրվող տեսական նյութը:
		«Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության 2015-16թթ. ուսումնական և աշխատանքային պլանների կազմում կատարվել է կրթական երկու մոդուլի փոփոխություն, «Տվյալների հենքեր» առարկան փոխարինվել է «Կադաստրային քարտեզագրում և հաշվառում» առարկայով, «Ինժեներական երկրաբանություն և գրունտագիտություն» առարկան՝ «Տեղագրական քարտեզագրում», հաշվի առնելով ամբիոնի դասախոս Ս.Դավթյանի առաջարկությունը և ուսումնասիրելով արտասահմանյան բուհերի նույն մասնագիտությունները:
5	Հայոց լեզվի և գրականության	Հաշվի առնելով ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքները, ամբիոնի վարիչի առաջարկով պակասեցվել են մի շարք դասընթացների դասախոսությունների քանակը և ավելացվել են գործնական, սեմինար դասընթացների ժամաքանակները: Կատարվել են որոշակի փոփոխություններ կամընտրական դասընթացներում, այնքան, որ դրանք միտված լինեն մագիստրոսական մասնագիտություններ շարունակող ուսանողների համար:
6	Օտար լեզուների	Հարցումների արդյունքների հիման վրա 2015-19 ուսումնական պլաններում մասնագիտական առարկաների ժամաքանակները 2-րդ և 4-րդ կուրսերում ավելացվել են:
7	Պատմության	2015-19 ուսումնական պլանի մասնագիտական կրթամասում «Հայոց

		պատմություն-1» դասընթացի 48ժ դաս., 16ժ սեմ. փոխարինվել է 64ժ դաս, 32ժ սեմ. և այլն:
8	«Գծանկարի, գունանկարի և քանդակի» և «Դեկորատիվ կիրառական արվեստի և դիզայնի»	2015-16 ուստարվա աշխատանքայի ուսումնական պլաններում ավելացվել է մասնագիտական դասընթացների ժամաքանակները՝ ոչ մասնագիտականների հաշվին. օրինակ՝ «Գծանկար-1» /4դ, 60գ/ - /6դ, 90գ/ «Գունանկար-2» /8դ, 56գ/ - /6դ, 74 գ/ և այլն
		Կիրառական արվեստի ֆակուլտետում դասախոսների առաջարկով ներդրվել է ուսումնառության կազմակերպման պլեներային մեթոդը:

❖ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում 2009թ.-ից գործում է ստացած և ցուցաբերած գիտելիքների ստուգման և գնահատման հստակ քաղաքականություն, որն արտահայտված է մշակված և կիրառվող համապատասխան կանոնակարգերով, ընթացակարգերով և չափանիշներով.

- Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում **(ԳԽ 30.05.2009թ.),**
- Բակալավրի կրթական ծրագրով կուրսային աշխատանքի կատարման և գնահատման կարգում **(ԳԽ 28.02.2012թ.)**,
- Բակալավրի կրթական ծրագրով ավարտական աշխատանքների գրախոսման կարգում **(ԳԽ 28.02.2012թ.)**,
- ԵՊՀ ԻՄ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգում **(ԳԽ 25.01.2012թ.),**
- ԵՊՀ ԻՄ-ի կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ բակալվրի պատրաստման կրթական ծրագրով ուսանողների գնահատման կարգում **(ԳԽ 28.02.2012թ.),**
- Դասընթացների փաթեթներում (2014թ.):

Մասնաճյուղում գործում են «ԵՊՀ ԻՄ ուսանոնղների բողոքների քննարկման կարգը» ***(ԳԽ 28.02.2012թ.)***, «ԵՊՀ ԻՄ ուսանոնղրեի դիմումների, բողոքների և առաջարկությունների քննարկման վերաբերյալ կանոնակարգը» ***(ԳԽ 18.04.2015թ.):***

ԵՊՀ ԻՄ-ում գնահատման կարգը ներկայացված է յուրաքանչյուր ֆակուլտետի համար ամենամյա լույս տեսնող "ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք"-ի 6-րդ բաժնում, ըստ որի ուսանողի ամփոփիչ գնահատումը կատարվում է 20 բալանոց համակարգով, գնահատման ձևավորման բաղադրիչներին հատկացված մասնաբաժիններին համապատասխան:

Ուսանողների ձեռքբերումների օբյեկտիվ գնահատման խնդիրը մասնաճյուղի համապատասխան ստորաբաժանումների ուշադրության կենտրոնում է, և մշտապես փնտրվում են գնահատման արդյունավետ ճանապարհներ: Ուսանողների միջանկյալ (ընթացիկ երկու քննությունների) գնահատման համար 2011/12 ուս. տարվանից ընտրվել էր թեստային գնահատման (8-ական հարց, յուրաքանչյուրը 0.5 միավոր) մեխանիզմը՝ նախկին առավելագույն 4 միավոր գնահատումով կազմված գրավոր տարբերակների փոխարեն: Որոշումը կայացվել էր ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենության նիստում (արձ. թիվ 24, 12.12.2011թ.): Ընթացիկ քննությունների անցկացման կարգում փոփոխություններ մտցնելը նպատակ ուներ ուսանողին զերծ պահել դասախոսի սուբյեկտիվ մոտեցումից և ազատ դրսևորել իր գիտելիքները: Թեստային համակարգում քննությունների արդյունքների ամփոփումը և այդ համակարգի վերաբերյալ

ուսանողների և դասախոսների բանավոր կարծիքները՝ արտահայտված ամբիոնների նիստերում, բացահայտեցին այդ համակարգի մի շարք բացասական կողմերը, մասնավորապես՝ պատահական նշումով միավոր վաստակելու հնարավորությունը, ոչ պատշաճ կազմված թեստերը և այլն: Դրա արդյունքում մասնաճյուղի տնօրենության նիստում (արձ. թիվ 17, 10.09.2012թ.) առաջարկվեց ուսանողների թեստային գնահատման նոր սկզբունք՝ 4 տարբեր թեմաներից երկու ենթահարց պարունակող թեստեր, յուրաքանչյուր թեման 1 միավոր գնահատումով, այսինքն, ուսանողը թեմայից վաստակում է 1 միավոր երկու ենթահարցերին ճիշտ պատասխան նշելու դեպքում: Այս մոտեցումը ենթադրում էր ուսանողից ակնկալել հերթական թեմայի լիարժեք իմացություն:

Գնահատման գործող համակարգի, նաև ուսանողների թեստային միջանկյալ գնահատման առավելություններն ու թերությունները վեր հանելու, շտկելու, զարգացնելու, նաև ըստ կրթական վերջնարդյունքների գնահատման նոր հնարավորությունների բացահայտման, գնահատաման արդյունավետության բարձրացման ուղիներ գտնելու համար մասնաճյուղում ՄԿՈԱ բաժնի կողմից 2015թ. հոկտեմբերից մշակվել և ներդրվել է **«Մասնաճյուղի ուսանողների գնահատման վերաբերյալ հարցման կանոնակարգը»**, իսկ հարցումներ գնահատման վերաբերյալ անց են կացվել 2013թ. ապրիլին և 2015թ. մայիսին՝ մշակված հատուկ 2 հարցաշարերով՝ դասախոսների և ուսանողների համար: Նոր կազմված հարցաշարերն ի տարբերություն նախորդի, պարունակում են նաև ուսանողների գնահատման չափանիշներին վերաբերող հարցեր, և խմբավորված են 4 բաժիններում. ուսանողի կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշները, ուսանողի կրթական վերջնարդյունքների գնահատման ձևերն ու նրանց արդյունավետությունը, ուսանողների գնահատման օբյեկտիվությունն ու թափանցիկությունը, ուսանողների գնահատման առաջարկվող ձևերի ընտրում: 2015թ.-ի հարցմանը մասնակցել են բոլոր մասնագիտություններից 31 դասախոսներ և առկա ուսուցման համակարգի 90 ուսանողներ:

Այս հարցումների նպատակն է պարզել, թե որքանով է ուսանողների գնահատման գործող համակարգը թույլ տալիս բացահայտել ուսանողի գիտելիքները, հմտությունները և կարողությունները, հնարավորություն տալիս գնահատել ուսանողի ձեքբերումները, և որքանով է այն օբյեկտիվ, թափանցիկ, և ինչը չի բացահայտվում գնահատման այս համակարգում, նաև տեղեկատվության հավաքագրման և մշակման միջոցով հետագայում բարելավել ուսանողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների գնահատման գործընթացի իրականացման ձևերի, չափանիշների, մեթոդների, գնահատման օբյեկտիվության և ուսանողի ցուցաբերած արդյունքների լիարժեք արտացոլման հնարավորությունը:

Հարցման արդյունքների հաշվառման և ամփոփման համար բաժնի մասնագետների կողմից ստեղծվել է տեղեկատվական համապատասխան համակարգ՝ բազա: Արդյունքներն ամփոփվել են ուսանողների և դասախոսների գնահատականների հիման վրա՝ առանձին փաթեթով, որոնց մեջ ներառված են նաև նախորդ հարցման արդյունքների հետ համեմատական տվյալներ: Արդյունքները տեղադրվել են մասնաճյուղի կայքում:

Ուրախությամբ պետք է նշել, որ հարցմանը մասնակցած դասախոսների 35.6+28.9=93.6%-ը, իսկ ուսանողների 45.2+48.4=64,5%-ը նշում է, որ դասընթացի կրթական վերջնարդյունքների <u>**գնահատման չափանիշները**</u> ուսանողներին ներկայացվում է կամ կիսամյակի սկզբում, կամ

կիսամյակի սկզբում և յուրաքանչյուր քննական գործընթացից առաջ, ինչը վկայում է դրանց հրապարակայնության և հետևողական կիրառման մասին:

Իսկ գնահատման չափանիշների պահպանման և ուսանողների առաջարկով նրանց փոփոխման վերաբերյալ դասախոսները և ուսանողներն ունեն հետևյալ կարծիքը.



2015թ. հարցման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ մասնաճյուղում ուսանողների **<u>կրթական վերջնարդյունքների գնահատման ձևերը</u>**՝ միջանկյալ բանավոր, գրավոր, թեստային քննություններ և ստուգումներ, եզրափակիչ բանավոր քննություններ հիմնականում բացահայտում և զարգացնում են ուսանողների գիտելիքները /դասախոսական հարցման միջին գնահատականը՝ 4.22, ուսանողական՝ 4.3/, և քիչ են նպաստում ուսանողների հմտությունների և կարողությունների զարգացմանը /միջին գնահատականն ըստ դասախոսների չի գերազանցում 4-ին/: Հմտություններն ու կարողությունները գնահատելու համար դասախոսների կողմից /ըստ դասընթացի փաթեթում պլանավորած մոտեցումների/ կիրառվում են որոշակի մեթոդներ, սակայն դրանք ամբողջությամբ չեն կարողանում արտացոլել ուսանողների բոլոր ձեռքբերումները, թեպետ ուսանողները գտնում են, որ իրենց հմուտությունների և կարողությունների գնահատման տեսանկյունից վերջին տարիներին առաջընթաց կա /միջին գնահատականն ըստ ուսանողների գերազանցում է 4-ին, սակայն չի գերազանցում 4.6-ը/:



Դասախոսները գտնում են, որ թեստերը չեն բացահայտում ուսանողների ձեռքբերումները.



Նշենք, որ ամբիոններում քննարկումների և դասախոսների փաստարկների ու հիմնավորումների արդյունքում 2014-15 ուստարվանից թեստերը կիրառվում են յուրաքանչյուր դասախոսի նախասիրությամբ: Հաշվի առնելով իրենց դասընթացների առանձնահատկությունները նրանք անցնում են միջանկյալ գրավոր քննությունների տարբերակին, որի արդյունավետության վերաբերյալ հարցման արդյունքները վկայում են. դասախոսների 39%-ը, իսկ ուսանողների 31%-ը, կողմնակից է միջանկյալ գրավոր քննությունների և եզրափակիչ բանավոր քննության տարբերակին:

Հարցմանը մասնակցած դասախոսների ավելի քան 80%-ը, իսկ ուսանողների ավելի քան 73%-ը գտնում է, որ գործող համակարգը հնարավորություն է տալիս դասախոսին լինել օբյեկտիվ և ուսանողները գնահատվում են թափանցիկ, թեպետ գտնում են, որ այն թույլ չի տալիս բացառել գրագողությունը, մասնավորապես թեստերը մեծացնում են արտագրելու հնարավորությունները, որի արդյունքում հնարավոր չի լինում խուսափել գրագողությունից (գրագողությունից խուսափելու համար դասախոսները կազմում են ուսանողների քանակին հավասար իրարից տարբեր թեստեր, հանձնարարում են տնային անհատական առաջադրանքներ, անց են կացնում տարբեր տարբերակներով ստուգողական աշխատանքներ, լսարանում վերահսկում և պահպանում են կարգապահությունը).



Եվ դասախոսները, և ուսանողները գտնում են, որ գնահատման կիրառվող մեթոդները դարձել են ավելի արդյունավետ և բարձրացրել են գնահատման օբյեկտիվությունը, ինչը

ամբիոններում իրականացվող բազմաբնույթ քննարկումների, փորձի փոխանակման և ձևավորված ուսանողակենտրոն միջավայրի ձևավորման և մոտեցումների արդյունք է.



Նշենք նաև, որ մասնաճյուղում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքները վկայում են, որ ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտները հիմնականում բավարարված են իրենց գիտելիքների գնահատման և ամփոփիչ ատեստավորման օբյեկտիվությունից և նրանց միջին գնահատականը վերջին տարիներին բարելավվել է.



Հարկ է նշել, որ մասնաճյուղը նպատակ ունի հասնել գնահատման ավելի օբյեկտիվ և արդյունավետ համակարգի: Մասնավորապես, նոր կրթական չափորոշիչներին համապատասխան ուսանողի մոտ պետք է ձևավորվեն որոշակի գիտելիքներ, ձեռք բերվեն գիտելիքների կիրառման որոշակի հմտություններ և իրեն դրսևորելու կարողություններ, հետևաբար գնահատման համակարգը պետք է բացահայտի ուսանողի վերջնարդյունքներն ըստ նշված 3 բաղադրամասերի: Այդ պատճառով, մշակվել և 2014թ. մայիսից դասախոսների և ուսանողների քննարկմանն են ներկայացվել գործող գնահատման համակարգում ուսանողի արդյունարար գնահատականի բաղադրամասերի հատուկ ձևավորմամբ համակարգերի նախագծեր: Դրանք ներառում են նաև գործնական, լաբորատոր, սեմինար դասընթացներից և ինքնուրույն աշխատանքներից ուսանողի ձեռքբերումների գնահատման տարրեր: Նախապես ընտրված փորձառու դասախոսներն այդ նախագծերը 2014-15 ուստարվա 1-ին կիսամյակում փորձարկել են գնահատման տարբեր ձևեր ունեցող (եզրափակիչ գնահատումով, առանց եզրափակիչ գնահատման և ստուգարքով ավարտվող) դասընթացների համար: Փաստենք, որ այդ արդյունքները գոհացուցիչ են:

Մասնաճյուղում ուսանողների գնահատումը և արդյունքների բողոքարկումն իրականացվում է համապատասխան ընթացակարգերով: Թափանցիկության և հրապարակայնության

ապահովման համար ընթացիկ քննությունների ձևաթղթերը, տետրերը ստուգվում են լսարաններում, բանավոր քննություններին կարող են մասնակցել ՈՒՄՎ-ի և ՈՒԽ-ի ներկայացուցիչներ, ուսումնական խորհրդատուն, դեկանը, ծնողներ, իսկ հրապարակայնության ապահովման համար քննաշրջանի արդյունքները փակցվում են ֆակուլտետների տեղեկատվական ցուցատախտակների վրա, տեղադրվում են մասնաճյուղի կայքում: Դա իրազեկում է ուսանողներին նաև իրենց ընկերների ցուցաբերած արդյունքների մասին՝ ապահովելով թափանցիկություն և անկողմնակալություն հետագա գործունեության համար: Բանավոր քննությունների դեպքում՝ տեղում, իսկ գրավոր քննությունների դեպքում՝ արդյունքների հրապարակումից հետո գնահատման արդյունքի հետ համաձայն չլինելու դեպքում ուսանողն այն կարող է բողոքարկել:

Ուսումնառողների գիտելիքների ստուգման և գնահատման, բողոքարկման ընթացակարգերը փակցվում են ֆակուլտետների տեղեկատվական ցուցատախտակների վրա: Այդ ընթացակարգերը **պարբերաբար վերանայվում են**, յուրաքանչյուր քննաշրջանից հետո քննարկվում և վեր են լուծվում արդյունքները, ըստ որի ուսումնական տարվա ավարտին կատարվում են համապատասխան փոփոխություններ: Կարգի ի ցույց դրված լինելը ուսանողին օգնում է ճիշտ ներկայացնել իր բողոքը և լինել տեղեկացված ու պաշտպանված:

❖ Դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների, մանկավարժական հմտությունների գնահատման և բարելավման, առաջավոր փորձի փոխանցման և տարածման համար գործում են մի շարք մեխանիզմներ և գործիքներ:

Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի գնահատումն առավել հավաստի արդյունքներ դարձնելու նպատակով մասնաճյուղում կիրառվում է ինչպես անհատական (ինքնագնահատում, գնահատում անմիջական ղեկավարի կողմից), այնպես էլ կոլեկտիվ (գնահատում գործընկերների, ուսանողների) գնահատման եղանակներ, որոնք միտված են բարձրացնելու դասավանդողների ինչպես մասնագիտական կոմպետեցիաները, այնպես էլ դասավանդման որակը:

Անհատական գնահատման ձևեր են.

- *դասախոսի անհատական զարգացման պլանը*, որը կազմվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին և ներկայացնում է տվյալ ուսումնական տարվա ընթացքում իր կողմից իրականացվելիք աշխատանքները, նշելով ուսումնասիրվելիք գրականության ցանկը, կատարվելիք գիտական, գիտամանկավարժական և գիտամեթոդական հետազոտությունները, մասնագիտական աճի ապահովման, գիտամանկավարժական կադրերի պատրաստման, վերապատրաստման, որակավորման բարձրացման և վերարակավորման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների ցանկը: Ուսումնական տարվա ավարտին դասախոսը ամբիոնի նիստում ներկայացնում է իր գործունեության հաշվետվությունը, թվարկելով իրականացրած աշխատանքները, նշելով և հիմնավորելով չիրականացրածները:
- *դասախոսի գիտամանկավարժական գործունեության գնահատման վարկանիշային թերթիկը*, որը ամբիոններում լրացվում է 2012թ.-ից: Այն լրացվում է դասախոսի, ամբիոնի վարիչի և դեկանի կողմից: Դասախոսը վաստակում է նաև լրացուցիչ միավորներ կրթության և գիտության համակարգի զարգացման ակնառու գործունեության համար:

- *դասընթացների փաթեթները (պորտֆոլիոները),* որը դասախոսի համար ծառայում է որպես սեփական գործունեության անդրադարձի /ռեֆլեքսիայի/ և ընթացիկ գնահատման, հաջողությունների ու անհաջողությունների վերլուծության շնորհիվ՝ գործունեության նորովի պլանավորման միջոց:
- *դասալսումները ամբիոնի վարիչի կողմից*, որը կանոնակարգվել է 2014թ.-ից (ԵՊՀ ԻՄ-ում դասալսումների անցկացման կանոնակարգ, ԳԽ 17.10.2014թ.) և անց են կացվում համաձայն ամբիոնների նիստում յուրաքանչյուր կիսամյակի սկզբում հաստատված ժամանակացույցերի, միտված են ուսումնառության պրոցեսի կատարելագործմանը, դասավանդման որակի բարելավմանը, նպաստում են դասախոսների մանկավարժական վարպետության աճին, թույլ են տալիս հետևել դասավանդման մեթոդների համապատասխանությանը կրթական վերջնարդյունքներին, ուսումնասիրել և տարածել դասավանդման լավագույն փորձը: Դասալսումների արդյունքները հաշվի են առնվում դասախոսի հետ նոր աշխատանքային պայմանագիր կնքելիս, դասախոսների վերապատրաստումների թեմաների ընտրության և ժամանակացույցների կազմման ժամանակ:

Կոլեկտիվ գնահատման ձևեր են.

– *փոխադարձ դասալսումները,* որոնք անց է կացվում ամբիոնի կողմից հաստատված ժամանակացույցով և միտված է դասախոսների միջև մասնագիտական և մեթոդական փորձի փոխանակմանը, դասի արդյունավետ վարմանը, երիտասարդ դասախոսների աջակցմանը և այլն: Դասալսմանը մասնակցող դասախոսը դասընթացի փաթեթի միջոցով նախապես ծանոթանում է դասի թեմային, համապատասխան գրականությանը, ուսումնաօժանդակ նյութերին, դասամատյանին, ուսանողների տետրերին, դասախոսի օրացուցային-թեմատիկ պլանին, ծրագրի համապատասխան բաժիններին: Նա գնահատում է ըստ հաստատված հարցաթերթի /Տե՛ս ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում դասալսումների անցկացման կանոնակարգի, Հավելված 1-ը/, գնահատում է դասը, այնուհետև կատարվում է դասալսման արդյունքների վերլուծություն:
– *բաց և ցուցադրական դասերը,* որոնք իրականացվում են դասավանդման նոր մեթոդներ և մանկավարժական հնարքներ փորձարկելու, ավելի փորձառու մասնագետների և գործընկերների կարծիքը, խորհուրդները և երաշխավորությունը ստանալու, դասավանդման փորձի ուսումնասիրման և ընդհանրացման նպատակով: Ցուցադրական դասերն իրականացնում են ավելի փորձառու դասավանողները՝ դասապրոցեսի արդյունավետ կազմակերպումը, դասավանդման մեթոդիկան, տեխնիկական ժամանակակից միջոցներով դասավանդումը, մեթոդական նոր արդյունավետ հնարքները ներկայացնելու և դասավանդման դրական փորձը փոխանցելու նպատակով: Առանձնահատուկ պետք է նշել 2013թ. հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին մասնաճյուղում իրականացված բաց դասերի մեծ շարքի մասին, որպես մասնաճյուղի նվաճում և առաջընթաց քայլ, որը նպատակ ուներ բարձրացնել դասավանդման և կրթական ծառայությունների մատուցման որակը և արդյունավետությունը, և այն ունի շարունակական բնույթ:
– դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումները, որոնց արդյունքներով մասնաճյուղի դասախոսների միջին միավորն ըստ ամբիոնների բարձր է 4.0-ից,

իսկ 2013-14 ուստարում նախորդ ուստարիների համեմատ այն բարելավվել է և բոլոր մասնագիտությունների գծով միջին թվաբանական միավորը հիմնականում բարձր է 4.5-ից:

Ամբիոնի անունը	Միջ. միավ.	2010-11 ուստարի		2011-12 ուստարի		2012-13 ուստարի		2013-14 ուստարի		2014-15 ուստ.
		1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս	2-րդ կիս	1-ին կիս
Անտառագիտության	**4,55**	4,57	4,58	4,5	**4,38**	4,64	4,45	4,63	**4,66**	
Բարձրագույն մաթեմատիկայի և ինֆորմատիկայի	**4,25**	4,24	4,24	4,23	4,09	**4,47**	**4,02**	4,41	4,34	
Գծանկարի, գունանկարի և քանդակի	**4,67**	4,67	**4,55**	4,58	4,58	4,64	4,7	**4,85**	4,82	4,80
Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի	**4,54**	4,67	4,54	**4,26**	4,35	4,62	4,61	**4,68**	4,61	4,76
Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության	**4,59**									**4,59**
Ընդհանուր տնտեսագիտության	**4,55**	4,56	4,55	4,57	4,59	4,53	4,63	**4,47**	4,53	**4,66**
Ընդհանուր ֆիզիկայի	**4,50**	4,53	4,5	**4,6**	4,56	4,49	**4,36**	4,44	4,55	
Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	**4,52**									**4,52**
Հայոց լեզվի և գրականության	**4,51**	4,57	4,53	4,49	**4,42**	4,51	4,46	4,59	4,5	**4,66**
Մանկավարժության և հոգեբանության	**4,64**	**4,51**	4,53	4,56	4,72	4,71	**4,51**	4,8	4,78	4,69
Պատմության և քաղաքագիտության	**4,51**	4,51	**4,38**	**4,56**	**4,56**	4,52	4,54	4,53	4,46	**4,56**
Տուրիզմի կառավարման և մշակութաբանության	**4,63**	4,75	4,51	4,65	**4,47**	4,69	4,51	4,66	4,76	**4,83**
Օտար լեզուների	**4,57**	4,54	**4,39**	**4,74**	4,48	4,61	4,58	4,66	4,6	4,48
Մասնաճյուղի միջին գնահատականը	***4,54***	***4,56***	***4,48***	***4,52***	***4,47***	***4,58***	***4,49***	***4,61***	***4,60***	***4,66***

– ստացած կրթությունից շրջանավարտների բավարավածության հարցումը, որի արդյունքներով 2015թ.-ի հարցմանը մասնակցած շրջանավարտների 96%-ը բավարաված է պրոֆեսորադասախոսական անձնակազմից և այն բարելավվել է.





– որակավորման բարձրացման դասընթացներ, որոնք ԵՊՀ-ի աջակցությամբ կազմակերպվում են մասնաճյուղում:

Պրոֆեսորադասախոսական անձնակազմի կատարած աշխատանքները գնահատվում են նաև Ուսումնամեթոդական վարչության կողմից առարկայական ծրագրերի կատարողականի, դասամատյանների լրացումների և ուսանողների դասախոսությունների տետրերի ստուգման միջոցով: Արդյունքները զեկուցվում են տնօրենության նիստերում:

Դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների գնահատման անուղղակի մեխանիզմ է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կողմից ասվող գոհունակության խոսքերը:

Օրինակ. 2013-14 ուստարվա առկա ուսուցման ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կարծիքը քննությունների վերաբերյալ.

1. ԵՊՀ ԻՄ տնտեսագիտության ֆակուլտետի 2013-14 ուստարվա առկա ուսուցման շրջանավարտների տնտեսագիտության տեսական գիտելիքները լավ էին, ինքնուրույն մտածելու և արտահայտվելու կարողությունները բավարար էին (***Հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ Էկոնոմիկայի փոխնախարար Գ.Բաղալյան***):
2. Գոհ եմ 2013-14 ուստարվա «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքներից, շրջանավարտների գիտելիքների որակը՝ բարձր: Շարունակեք սկսած հրաշալի գործընթացը ***(Հանձնաժողովի նախագահ՝ բան.գ.թ., դոցենտ Լ.Միրզոյան)***
3. Ցանկանում եմ գոհունակությունս արտահայտել կատարված բարձր որակի աշխատանքների համար ***(«Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտության 2013-14 ուստարվա հանձնաժողովի նախագահ՝ բան.գ.թ.,դոցենտ Մ.Ղազարյան)***
4. Կարծում եմ, որ ԵՊՀ ԻՄ-ն ամփոփիչ քննության և ավարտական աշխատանքների ու դրանց պաշտպանության մակարդակով, դասախոսական կազմով, ուսանողների առաջադիմությամբ, իր կազմակերպվածությամբ և բուհին ներկայացվող պահանջներով բավարարում է "Սերվիս" մասնագիտությամբ բակալավր պատրաստելու ժամանակակից պահանջներին և ոլորտում պահանջարկին համապատասխանող կադրեր պատրաստելու ներուժ ունի ***(2013-14 ուստարվա հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչության պետ Մ.Ապրեսյան)***

Դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների և մանկավարժական հմտությունների գնահատման նշված բոլոր մեխանիզմների արդյունքում բարձր արդյունքներ և գնահատականներ, դասավանդման ժամանակակից մեթոդների և տեղեկատվական տարբեր համակարգերի կիրառմամբ դասընթացներն իրականացնող դասախոսները խրախուսվում են մասնաճյուղում գործող խրախուսման տարբեր ձևերով (պարգևատրում, պատվոգիր, հուշամեդալ և այլն):

❖ ԵՊՀ փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում 2013թ. հունիսի 19-ին մասնաճյուղի 4 աշխատակիցներ և 2 ուսանողներ տնօրենի հետ միասին ներկայացրել են մասնաճյուղը ԵՊՀ-ում փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբին: Խումբը պատասխանել է արտաքին

փորձագետների հարցերին՝ ներկայացնելով մասնաճյուղի գործունեությունը կրթության որակի ապահովման և որակի մշակույթի ներդրման գործում, իսկ հունիսի 24-ին փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խումբը այցելել է մասնաճյուղ: Խումբն ըստ ժամանակացույցի հանդիպումներ է ունեցել մասնաճյուղի կառավարման միջին օղակի ներկայացուցիչների, ԿՈԱԳ (ՄԿՈԱ) բաժնի և ինքնավերլուծություն իրականացնող խմբի անդամների, դասախոսների, ուսանողների հետ, ուսումնասիրել են մասնաճյուղի փաստաթղթերը, դիտարկել մասնաճյուղի ռեսուրսները: Նրանք հարցերի միջոցով պարզաբանել են, թե որքանով է արդյունավետ կառավարվում ուսումնական հաստատությունը, ինչ մակարդակի վրա են կրթական և հետազոտական գործունեությունը և հասարակությանը մատուցվող ծառայությունները, արդյոք մասնաճյուղում ձևավորված է որակի մշակույթ, կրթական միջավայրը նպաստում է ուսանողների մոտ ձևավորել աշխատաշուկայի հարափոփոխ պահանջներին համապատասխան գիտելիքներ, հմտություններ, կարողություններ, ապահովվում են ազգային և միջազգային մակարդակներում ուսումնական հաստատության կողմից մատուցվող ծառայությունների համադրելիությունը և մրցունակությունը, ինչպես նաև թափանցիկությունը և այլն:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատել հանդիպման մասնակիցների բաց քննարկումները, մասնավորապես ուսանողների հետ հանդիպումը բնորոշվել է որպես շատ կառուցողական հանդիպում: Ավելին՝ գրադարան, լաբորատորիաներ, դեկանատներ և այլ կենտրոններ կատարած նրանց այցերը, ինչպես նաև ուսանողների և անձնակազմի հետ հանդիպումները շատ օգտակար էին և խորհրդատվական: Խմբի անդամներն ընդհանուր առմամբ գոհ էին հանդիպման արդյունքներից, և փորձագիտական խումբն իր դրական կարծիքը մասնաճյուղի վերաբերյալ ներկայացրել է ԵՊՀ արդյունքների հետ միասին:

Արտաքին շահակիցների համար մասնաճյուղի որակի ներքին ապահովման և ինքնագնահատման գործընթացները ամբողջությամբ լուսաբանվում են: Ինքնավերլուծության առաջին 2 զեկույցները տեղադրվել են կայքում, ներկայացվել են մասնաճյուղի աշխատակիցներին, ուսանողներին և գործատուներին, SWOT-վերլուծություններն ուղարկվել են համապատասխան ստորաբաժանումներին՝ իրենց հետագա գործունեության բարելավման համար: Ինքնավերլուծության գործընթացներում, Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի աշխատակիցներից բացի, ընդգրկված են եղել նաև ուսանողներ, դասախոսներ և այլ աշխատակիցներ:

2014թ. ստեղծվել են որակի ներքին ապահովման գործընթացներին աջակցող ուսանողական և դասախոսական աշխատանքային խմբեր:

Տպագրվել և կայքում տեղադրվել են ըստ ռազմավարական ծրագրի իրականացման «ԵՊՀ ԻՄ գործունեության գնահատման առանցքային ցուցանիշներ 2009-14»-ի (ԳԱՑ-ի) համալրված տարբերակը: Փաստաթուղթն ընդգրկում է մեծաքանակ տվյալներ և համապատասխան վերլուծություններ, ներկայացնում է մասնաճյուղի՝ վերջին 4-5 տարիների գործունեության, ձեռքբերումների և տարբեր խնդիրների ինքնագնահատումը:

Որակի գնահատման բոլոր գործընթացներում, մասնավորապես ինստիտուցիոնալ կարողությունների ինքնագնահատման 3 զեկույցների պատրաստման գործընթացում ընդգրկվել են ուսանողներ: Վերլուծություններն իրականացվել են ըստ ինքնագնահատման չափանիշների

կազմված խմբերը: Խմբերում ընդգրկված ուսանողներն իրենց կարծիքներով, առաջարկություններով աջակցել են թիմի աշխատանքին:

2014թ. ստեղծվել են որակի ներքին ապահովման գործընթացներին աջակցող ուսանողական և դասախոսական աշխատանքային խմբեր:

Արտաքին շահակիցներն ընդգրկված են կրթական ծրագրեր կազմող աշխատանքային խմբերում՝ կրթական վերջնարդյունքների ձևակերպման գործում աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կոմպետենցիաներ ձևակերպելու և համապատասխան մասնագետներ պատրաստելու գործընթացում նպատակային խորհրդատվության, առաջարկների և աջակցման համար:

Արտաքին շահակիցներն ընդգրկված են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմում: Այդ հանձնաժողովների մասնակից գործատուներն իրենց կարծիքներն արտահայտում են բաժնի կողմից մշակված հատուկ <u>ձևաթղթի</u> մեջ՝ ժամանակակից կրթական պահանջներին, դուբլինյան նկարագրիչներին համապատասխան մոտեցումներով և վերլուծություններով հաշվետվություններում: Նոր հաշվետվությունն ուղղորդում է, թե հաշվետվություն գրելիս նախագահներն ինչ տեսակետների պետք է ուշադրություն դարձնեն, շրջանավարտների որ ձեռքբերումների և բացթողումների մասին բարձրաձայնեն: Հաշվետվության մեջ ներկայացվում է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կարծիքը շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքների մակարդակի վերաբերյալ, ավարտական աշխատանքների թեմաների, դրանց համապատասխանության և շրջանավարտների կողմից աշխատանքների ներկայացման հմտությունների վերաբերյալ և առաջարկություններ՝ շրջանավարտների կողմից դրանց իրականացման հետագա բարելավման ուղղությամբ (Հավելված 2): Ամբիոններն ուսումնառության գործընթացի արդյունավետ կազմակերպման, կրթական ճիշտ արդյունքների ձեռք բերման համար ուշադրություն են դարձնում ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կարծիքներին և առաջարկներին:

Խնդիր I գ) Ապահովել կրեդիտային համակարգի կիրառությունը մասնաճյուղի բոլոր կրթական ծրագրերում և ուսուցման ձևերում:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ 2008թ. մասնաճյուղի առկա ուսուցման համակարգում ներդրված է ուսումնառության կրեդիտային համակարգը, 2009թ. նաև հեռակա ուսուցման համակարգում, իսկ 2011թ. մասնաճյուղը լիարժեքորեն անցել է ուսուցման կրեդիտային համակարգին: Մասնաճյուղում գործում է «Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգը», որը միասնական նորմատիվային, կանոնակարգային և կազմակերպական հենք է ապահովում առկա և հեռակա ուսուցման համակարգում բակալավրի և մագիստրոսի կրեդիտային համակարգով պատրաստման կրթական ծրագրերի իրականացման համար: Մասնաճյուղը բակալավրի կրթական աստիճանի համար ամբողջությամբ անցել է մոդուլացված, կրեդիտային հենքով ճկուն ուսումնական ծրագրերի, որոնցում մեծացված է ընտրովի դասընթացների հաշվեկշիռը:

❖ Կրեդիտային համակարգի ներդրման և ծրագրային վերակառուցման արդյունքում հիմնավորված կերպով կրճատվել է ուսանողի լսարանային բեռնվածությունը, որը հնարավորություն է ընձեռել կրեդիտների չափաքանակին համապատասխան ավելացնելու ուսանողի ինքնուրույն աշխատանքի աշխատածավալը՝ սահմանելով ուսանողի լսարանային և ինքնուրույն աշխատածավալների միջև արդյունավետ հարաբերակցություն, ուսումնական պլաններում յուրաքանչյուր դասընթացի համար հստակ սահմանվել են ինքնուրույն աշխատանքին հատկացվող ժամաքանակները: Որոշ դասընթացների շրջանակներում փորձարկվել են ինքնուրույն աշխատանքների դերի բարձրացման և գնահատման տարբեր մեխանիզմներ, մի շարք դասախոսներ ինքնուրույն աշխատանքներից ստացած միավորները ներառել են ուսանողի արդյունարար գնահատականի մեջ, մասնավորապես, Կիրառական արվեստի ֆակուլտետում բարձրագույն միավորներով գնահատելու համար միավորներում ներառվել է ինքնուրույն աշխատանքների գնահատումը՝ ճեպանկարներ կատարելու միջոցով: Մշակման փուլում է գտնվում նաև ինքնուրույն աշխատանքների կազմակերպման ու գնահատման կանոնակարգը: Առկա և հեռակա ուսուցման համակարգերում դասախոս-ուսանող կապը արդյունավետ իրականացվում է էլեկտրոնային փոստերի միջոցով, որը խթանում է ծրագրային նյութի ընկալմանը, չյուրացրած թեմաների շուրջ պարզաբանումներ ստանալուն, ինքնուրույն աշխատանքների հանձնարամանը և գնահատմանը:

❖ Մասնաճյուղում կամընտրական առարկաների ընտրությունը կանոնակարգելու նպատակով մշակվել և կիրառվում է համապատասխան կարգ՝ «Ուսանողների կողմից դասընթացների ընտրության և դրանցում ընդգրկվելու համար գրանցման» (ԳԽ 27. 05.2014թ.):

❖ Ըստ կրեդիտային բեռնվածության՝ ուսման վարձերի վճարումը իրականացվում է ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսանողների հեռացման (ազատման) և վերականգնման կարգի» (27.12.2011թ.): Սակայն ՀՀ բարձրագույն կրթության օրենսդրական դաշտի անկատարության հետևանքով դեռևս հնարավոր չի եղել ներմուծել մասնակի բեռնվածության կամ անհատական ծրագրով ուսումնառություն:

❖ Ուսումնական գործընթացի կազմակերպման և կառավարման համար մասնաճյուղում 2011 թվականից ներդրված է ԵՊՀ-ի կողմից մշակված Վեբ հենքով էլեկտրոնային տեղեկատվական «SuperVision» համակարգը: Համակարգի միջոցով իրականցվում է ուսումնական պլանների, ամբիոնների և դասախոսների բեռնվածության ավտոմատ բաշխում, ուսանողների ուսումնական տվյալների հավաքագրում, մշակում և առաջադիմության վերահսկում (այն նաև հիմք է հանդիսանում ուսանողական զեղչերի, փոխատեղումների իրականացման ժամանակ), դիպլոմի համաեվրոպական նմուշի հավելվածի պատրաստում:

2012 թվականից մասնաճյուղի դեկանատներում ներդրված է ուսանողների հաճախումների հաշվառման, քննական արդյունքների մշակման, դասացուցակի ներմուծման և դասաժամի իրավիճակի հաշվառման տվյալների բազա: Համակարգը նախատեսված է ֆակուլտետների դեկանատների մի շարք աշխատանքների ավտոմատացման համար: Այն հնարավորություն է

տալիս ամբողջ կիսամյակի ընթացքում իրականացնել ուսանողների հաճախումների և կիսամյակի վերջում գնահատման միավորում ուսանողի մասնակցությունների միավորի ավտոմատ հաշվառում, կիսամյակային քննական գնահատականների հաշվառում, քննաշրջանի ընթացքում կուրսերի և ֆակուլտետների առաջադիմությունների վերլուծում և ամփոփ հատուկ տեղեկանքների ստացում, նաև կիսամյակային դասացուցակի ներմուծում, խմբագրում և տարբեր պահանջներին համապատասխան դասացուցակների ստացում, ֆակուլտետում ընթացիկ դասաժամի իրավիճակի ֆիքսում:

❖ Կրթական ծրագրերի կառուցվածքում դասընթացների բովանդակությունը և ուսումնառության արդյունքների գնահատման չափանիշները համապատասխանում են ԵՊՀ-ի (քանի որ մասնաճյուղի կրթական ծրագրերի համար հիմք են հանդիսացել ԵՊՀ համապատասխան մասնագիտությունների կրթական ծրագրերը) և հանրապետության տարբեր բուհերի առաջավոր փորձին: 2014 թվականից ***մասնաճյուղն ունի*** մասնագիտության կրթական ծրագրերի բարելավման, ուսումնական գործընթացների կազմակերպման և կառավարման առաջավոր փորձի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) իրականացման իր քաղաքականությունը: Մասնաճյուղը շահագրգռված է և ունի բավարար պայմաններ ու նախադրյալներ արդյունավետ բենչմարքինգի իրականացման և փորձի փոխանակման համար: Նա կարևորում է բենչմարքինիգի դերը ողջ ուսումնական գործընթացների մշտադիտարկման գործում:

2013թ.-ից սկսած մասնաճյուղի համապատասխան ստորաբաժանումներում ինքնավերլուծության շրջանակներում իրականացվել են ներքին համեմատական մի շարք վերլուծություններ՝ ըստ կրթական ծրագրերի կառուցվածքի (կրթամասերի), կրթական ծրագրի կրթամասերի կրեդիտային բաշխվածության, ընդհանուր մասնագիտական կրթամասերում ներառված դասընթացների, Որակավորումների ազգային շրջանակի հետ մասնագիտության կրթական ծրագրի համադրելիության, դասընթացների բովանդակային հուսալիության և այլն: Նշենք, որ մասնաճյուղի տարբեր բաժինների աշխատակիցներ և դասախոսներ գործուղվում են տարբեր բուհեր համապատասխան բաժինների աշխատանքների ուսումնասիրման, գնահատման և անհրաժեշտության դեպքում մասնաճյուղում այդ գործընթացների բարելավման համար:

❖ ԵՊՀ ԻՄ-ում կրեդիտային համակարգի ամբողջական կիրառմանը դասախոսներին, ուսանողներին և ուսումնական վարչակազմին նախապատրաստելու նպատակով մշակվել և իրականացվել է վերապատրաստման դասընթաց՝ «Ուսումնական գործընթացի կազմակերպման կրեդիտային համակարգը» թեմայով: Դասընթացն իրականացվել է ըստ թիրախային խմբերի՝ դասախոսների, դեկանների, Ուսումնամեթոդական վարչության աշխատակիցների համար: Միաժամանակ ապահովվել է մասնաճյուղի դասախոսների և վարչական անձնակազմի մասնակցությունը մասնաճյուղից դուրս (բուհական համակարգում) կազմակերպված նմանատիպ տարբեր դասընթացների: Առկա և հեռակա ուսուցման համակարգերում բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների համար հրատարակվել են «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» տեղեկատվական փաթեթները, որոնք պարունակում են ուսանողներին անհրաժեշտ տեղեկատվություն՝ իրենց ուսումնառությունը կրեդիտային համակարգով կազմակերպելու

համար: Այժմ ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական անձնակազմը և ուսումնական վարչակազմը ամբողջությամբ տիրապետում են կրեդիտային համակարգին, իսկ յուրաքանչյուր տարվա սկզբին համապատասխան մասնագիտության խորհրդատուները առաջին կուրսեցիներին ծանոթացնում են կրեդիտային համակարգին:

Խնդիր I դ) Ստեղծել նպաստավոր պայմաններ և խթանող մեխանիզմներ՝ ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ Մասնաճյուղում առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման, դասավանդման և ուսումնառության առավել արդյունավետ մեթոդների ընտրման, ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման ու կատարելագործման, դասախոսական կազմի դասավանդման որակի էական բարելավման նպատակով ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի որոշմամբ (17.10.2014թ.) ստեղծվել է «ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոն», որը մասնագիտական վարպետության բարձրացման կարևորագույն օղակ է ինչպես սկսնակ, այնպես էլ ստաժավոր դասախոսների համար: Կենտրոնի վարիչի կողմից կազմվել և տնօրենի կողմից հաստատվել է Կենտրոնի պարապմունքների թեմատիկ պլանը: Պլանավորված դասընթացներով ապահովվելու է սկսնակ դասախոսների մոտ մասնագիտական գիտելիքների, ունակությունների և հմտությունների տիրապետելու մակարդակը, զարգացվելու է կրթական նոր մեթոդների և ուսուցման նորագույն տեխնոլոգիաների կիրառումը և այլն: Կենտրոնը թույլ է տալիս բարձրացնել դասախոսների որակավորումը, նպաստում է սկսնակ և ստաժավոր դասախոսների ստեղծագործական և մտավոր ներուժի զարգացմանը:

2014-15 ուսումնական տարվա ընթացքում ըստ պլանի իրականացվել են շուրջ մեկ տասնյակ դասախոսություններ և սեմինար պարապմունքներ բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդման կազմակերպման և մեթոդիկայի վերաբերյալ: Դասընթացները շարունակվում են և ընդգրկելու են մանկավարժական գործունեության սոցիալ-հոգեբանական հիմքերին, ուսուցման գոնրծընթացում մուլտիմեդիայի և ինտերակտիվ տեխնոլոգիաների օգտագործմանը վերաբերող թեմաներին:

❖ Ըստ մշակված չափորոշիչների՝ մասնաճյուղում պրոֆեսորադասախոսական, վարչատնտեսական և ուսումնաօժանդակ անձնակազմի խրախուսումն իրականացվում է մի քանի ընթացակարգերի միջոցով՝ «Երիտասարդ դասախոսների խրախուսման» կարգի, «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի աշխատակիցներին խրախուսելու կարգ սահմանելու մասին» կանոնակարգի (25.12.2014թ., ԳԽ), ինչպես նաև իրենց նորարարական, ստեղծագործական և գիտամանկավարժական ակտիվ գործունեության համար տնօրենի հրամանով դասախոսների պարգևատրման միջոցով:

2010թ. հոկտեմբերից մասնաճյուղում գործում է ***«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում երիտասարդ դասախոսների խրախուսման կանոնակարգը»***, որը սահմանում է մասնաճյուղի երիտասարդ

դասախոսների խրախուսման ողջ գործընթացը, նրա կարգավորման ենթակա խնդիրները: Երիտասարդ դասախոսները խրախուսվում են հետևյալ չափանիշներով.

- դասախոսը մասնակցել է որակավորման բարձրացման կրթական ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, մասնաճյուղում կազմակերպվող գիտագործնական և հետազոտական աշխատանքներին,
- ուսանողների շրջանում անցկացված հարցումների արդյունքով ստացել է բարձր գնահատական,
- հասարակության, արտաքին շահառուների, ինչպես նաև աշխատանքային կոլեկտիվի անդամների կողմից բնութագրվում է դրական կողմերով:

Վերջին 5 տարիների ընթացքում դրամական խրախուսում են ստացել 105 երիտասարդ դասախոսներ.

Ֆակուլտետ	2011	2012	2013	2014	2015	Ընդ.
Բնական գիտությունների	2	5	4	5		**16**
Հումանիտար գիտությունների	9	10	8	26	17	**70**
Տնտեսագիտության		3	2	3	4	**12**
Կիրառական արվեստի	1	3	1	2		**7**
Ընդամենը՝	**12**	**21**	**15**	**35**	**21**	**105**

ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոնը նախատեսում է մշակել առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման նոր մեխանիզմներ, սահմանել ամենամյա մրցանակներ՝ դասավանդման նորարարական մեթոդները հաջողությամբ կիրառող դասախոսների խրախուսման համար:

Դասավանդման որակի շարունակական բարելավման նպատակով աշխատակիցների գործունեության գնահատման համար մասնաճյուղում 2014թ. դեկտեմբերից ներդրված է **«ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի աշխատակիցներին խրախուսելու կարգ սահմանելու մասին»** կանոնակարգը (ԳԽ 25.12.2014թ.): Այդ կանոնակարգում առանձին տեղ է հատկացվել պրոֆեսորադասախառսական կազմի խրախուսման չափանիշներին: Նյութական խրախուսման համար աշխատակիցների գործունեության գնահատումն իրականացվում է 20 միավորանոց համակարգով, ըստ սահմանված չափանիշների: Ըստ այդ կանոնակարգի, դասախոսը միավոր է ձեռք բերում ուսումնամեթոդական հետևյալ աշխատանքների խրախուսման դեպքում.

- Դասագրքի, ուսումնական կամ ուսումնամեթոդական ձեռնարկի հրատարակման համար /ամբողջ ուսումնական տարվա ընթացքում/,
- «Դասընթացի փաթեթի» (պորտֆոլիոյի) մշակման, նոր դասընթացի իրականացման համար /կիսամյակի ընթացքում/,
- Ուսումնառության ժամանակակից ակտիվ, ինտերակտիվ նաև տեղեկատվական մեթոդների կիրառման համար (համապատասխան մեթոդական ուղեցույցի առկայությամբ)
- Բուհական ուսանողական կոնֆերանսների, սեմինարների, տարբեր օլիմպիադաների, մրցույթների կազմակերպման համար,
- Ֆակուլտետի խորհրդի կողմից լավագույն համարված բաց դասի համար,

- Դասալսումների արդյունքում ամբիոնի վարիչի տված բարձր գնահատականի և մասնագետ գործընկերների հատուկ կարծիքների համար,
- Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցումից ստացած լավ գնահատականի համար:
- նրա գիտական գործունեությունը բնութագրող բարձր պարամետրերի համար,
- հասարակական ակտիվ գործունեության համար և այլն:

Խրախուսման կիրառվող մեխանիզմները նպաստում են ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների արդյունավետ ներդրմանը, իսկ առանձնահատուկ խրախուսվում են դասավանդման նորարարական մեթոդները հաջողությամբ կիրառող դասախոսները:

Վերջին 5 տարիների ընթացքում տարբեր ձեռքբերումների համար դրամական խրախուսում են ստացել 260 դասախոսներ, որը կազմել է 7280000 դրամ.

Դրամական խրախուսում ստացած դասախոսների թիվը և ստացած դրամական չափը													
N	Ֆակուլտետ /ամբիոն	2011		2012		2013		2014		2015		Ընդամենը	
		Թիվը	Դրամ /հազար/	Թիվը	Դրամ /հազար/	Թիվը	Դրամ /հազար/	Թիվը	Դրամ /հազար/	Թիվը	Դրամ /հազար/	Թիվը	դրամ /հազար/
1	Բնական գիտությունների	3	110	11	280	14	500	14	365	13	420	**55**	**1675**
2	Հումանիտար գիտությունների	15	405	25	610	19	590	38	1055	30	910	**127**	**3570**
3	Տնտեսագիտու-թյան	4	80	9	190	9	290	12	280	13	360	**47**	**1200**
4	Կիրառական արվեստի	1	20	8	190	3	60	9	305	6	140	**27**	**715**
5	Համամասնա-ճյուղային ամբիոն			2	70	1	20			1	30	**4**	**120**
Ընդամենը		**23**	**615**	**55**	**1340**	**46**	**1460**	**73**	**2005**	**26**	**1860**	**260**	**7280**

Մասնաճյուղում պարբերաբար իրականացվում են վերապատրաստումներ: Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմը մասնակցում է ԵՊՀ Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման հնգամյա անհատական ծրագրին:

❖ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում 2009թ.-ից գործում է ստացած և ցուցաբերած գիտելիքների ստուգման և գնահատման հստակ քաղաքականություն, որն արտահայտված է ԵՊՀ ԻՄ-ի կրեդիտային համակարգով առկա և հեռակա ուսուցմամբ բակալվրի պատրաստման կրթական ծրագրով ուսանողների գնահատման կարգում **/ԳԽ 28.02.2012թ./**, բակալավրի կրթական ծրագրով կուրսային աշխատանքի կատարման և գնահատման կարգում, բակալավրի կրթական ծրագրով ավարտական աշխատանքների գրախոսման կարգում (ԳԽ 28.02.2012թ.), ԵՊՀ ԻՄ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգում:

Մասնաճյուղում կրթական ծրագրերի ներդրմամբ վերանայվել են ուսանողների գնահատման ձևերը՝ ներմուծելով ուսումնառության ելքային կրթական արդյունքներով պայմանավորված գնահատման նոր ձևեր, սահմանելով ավարտական առանձին պահանջներ: Այդ ուղղությամբ կարևոր ձեռք բերում է մասնաճյուղի կրթական ծրագրերում գնահատման մեթոդների ներառումը, որոնք ընտրվում են <u>կրթական ծրագրի կազմման ժամանակ</u>, մտած են ծրագրի կառուցվածքի մեջ և

ամրագրված են կրթական վերջնարդյունքներին: Այսինքն, թվարկված են գնահատման այն մեթոդները, որոնց միջոցով գնահատվում են ուսանողների գիտելիքները և իմացությունը, գործնական մասնագիտական և ընդհանրական կարողությունները:

Գնահատման մեթոդների ընտրության ժամանակ հաշվի են առնվել «ԵՊՀ կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներում» տրված գնահատման մեթոդների ընտրության մոտեցումները, դասական մեթոդների փորձը, փորձառու մանկավարժների առաջարկությունները, ուսումնասիրվել են այլ առաջատար բուհերի գնահատման ձևերը և մեթոդները, տարբեր հեղինակների կողմից առաջակվող գնահատման ժամանակակից մոտեցումները: Ուսանողների գնահատման համար ընտրվել են ուսումնառության արդյունքների գնահատման այնպիսի մեթոդներ, որ հնարավոր լինի գնահատել ուսանողի յուրաքանչյուր ձեռքբերում, բացահայտել և գնահատել նրա մասնագիտական հմտություններն ու կարողությունները, տրված են ընտրության հնարավորությունները: Մասնաճյուղում կիրառվում են գնահատման հետևյալ մոտեցումները, օրինակ.

1. <u>գիտելիքների և իմացության գնահատման</u> համար հիմնականում կիրառվում են գործնական և տնային անհատական առաջադրանքներ, սեմինար պարապմունքներ, տեսության բանավոր հարցումներ, միջանկյալ գրավոր և բանավոր քննություններ, միջանկյալ ստուգումներ, եզրափակիչ բանավոր քննություններ, կուրսային և ավարտական աշխատանքների պաշտպանություն և այլն,
2. <u>հմտությունների գնահատման</u> համար կիրառվում են գործնական, ստուգողական աշխատանքներ, թեստավորում, միջանկյալ գրավոր և բանավոր քննություններ, միջանկյալ ստուգումներ, եզրափակիչ բանավոր քննություններ, կուրսային և ավարտական աշխատանքների պաշտպանություն և այլն,
3. <u>կարողությունների գնահատման</u> համար կիրառվում են գործնական առաջադրանքներ, զեկուցումներ, ռեֆերատներ, նախագծեր, խմբային աշխատանքներ, օտարալեզու մասնա-գիտական գրականության ընթերցում, ուսումնական և արտադրական պրակտիկաներ, կուրսային և ավարտական աշխատանքների պաշտպանություն և այլն:

Գնահատման գործող յուրաքանչյուր համակարգ, իհարկե, իր մեջ ներառում և նախատեսում է ուսանողի ձեռքբերումների գնահատումը, սակայն կա ***խնդիր,*** մասնավորապես, այն չի ընդգրկում գործնական, սեմինար ու լաբորատոր դասընթացներից և ինքնուրույն աշխատանքներից ուսանողների ձեռքբերումները, որի պատճառով թուլանում է ուսանողների հետաքրքրվածությունը այդ դասերի նկատմամբ, այն չի ապահովում նաև ուսանողների համաչափ ծանրաբեռնվածությունը ամբողջ կիսամյակի ընթացքում: 2013թ. հունիսին ՄԿՈԱ բաժնի աշխատակիցների կողմից մշակվել են «Ըստ ուսումնառության արդյունքների ուսանողների գնահատման համակարգ»-ի նախագծեր, որով քայլ է կատարվել ուսանողների գնահատման գործընթացի բարելավման ուղղությամբ: Նախագծերն ուղարկվել են բոլոր ամբիոններին՝ քննարկման և առաջարկների համար: Այդ նախագծերում արժևորված է այն գաղափարը, որ **<u>առանց գիտելիքի, կարողության և հմտության կոմպետենցիա չի ձևավորվում, իսկ առանց կոմպետենցիաների գիտելիքները չեն արտահայտվում</u>**: Նշենք, որ այդ նախագծերի սկզբունքներով այժմ առաջնորդվում են մասնաճյուղի դասախոսների մեծ մասը, ինչն արտահայտված է դասընթացների փաթեթներում դասախոսի կողմից ներկայացվող գնահատման չափանիշների միջոցով:

Դասընթացի ուսումնամեթոդական փաթեթը ապահովում է դասընթացի բովանդակային կազմակերպման ողջ փաստաթղթային համախումբը, որը մասնավորապես ներառում է նաև դասընթացի գնահատման չափանիշները, գործիքները և ընթացակարգը: Գնահատման չափանիշները նախ ներառում են դասընթացի ***գնահատման ընդհանուր ռազմավարությունը***: Ռազմավարության հիմքում ընկած է գնահատման մեթոդների համապատասխանեցումը դասընթացի ելքային արդյունքներին. տարբեր բնույթի ելքային արդյունքներ գնահատելիս կիրառվում են նախապես պլանավորված տարբեր տիպի գնահատումներ: Ներկայացվում են նախատեսվող ***գնահատման ձևերը***՝ ընթացիկ ստուգում կամ քննություն, եզրափակիչ գնահատմամբ կամ առանց եզրափակիչ գնահատման, հանրագումարային քննություն, ինչպես նաև գնահատման սկզբունքները:

Ուսումնառության արդյունքների ձեռքբերման/յուրացման մակարդակի ***գնահատման չափանիշներով*** նկարագրվում են, թե ինչ պետք է իմանա, կարողանա և ինչին պետք է տիրապետի ուսանողը դրանց գերազանց, լավ, բավարար յուրացման ցուցադրման համար:

Թվարկվում են գնահատման գործիքները (քննական տոմսեր, թեստեր, խնդիրներ, առաջադրանքներ, ինքնուրույն աշխատանքներ, ռեֆերատներ, զեկուցումներ և այլն): Ակնհայտ է, որ ընտրված գնահատման գործիքը պետք է թույլ տա գնահատել համապատասխան կոմպետենցիան: *Ընթացակարգում* ներկայացվում են ստուգման, ամփոփման կամ գնահատման հստակ ձևերը, դրանց իրականացման ժամկետները, անհրաժեշտության դեպքում կազմակերպման մանրամասնություններ:

Գնահատման տարբեր ձևերը և ուսանողի ու դասախոսի համագործակցությունն այդ գործընթացում աջակցում են ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը, նվազեցնում հակասական իրավիճակների քանակը, ուսանողին սովորեցնում արդարացի գնահատել իր ձեռքբերումները, դիտողությունների, սխալների նկատմամբ լինել համբերատար և իրեն դրսևորել համապատասխան ձևով:

Ուսանողներին հանձնարարված ռեֆերատները, զեկուցումները, պրեզենտացիաները, անհատական առաջադրանքները, ստուգողական աշխատանքները և այլն հնարավորություն են տալիս ուսանողներին վերլուծել իրենց ուժեղ և թույլ կողմերը, գնահատել իրենց ինքնուրույն կատարած աշխատանքների մակարդակը և դրանց կատարումից իրենց ձեռքբերումները, օգտագործել շնորհանդեսների ստեղծման և ներկայացման արդյունավետ տեխնոլոգիաներ, հետևել իրենց ընկերներին և նրանց իրական առաջընթացը, անընդհատ գնահատել նրանց յուրաքանչյուր ձեռքբերում:

❖ Յուրաքանչյուր տարի մասնաճյուղի բյուջեից գումարներ են հատկացվում մասնաշենքերի, լաբորատորիաների ու մասնաճյուղի այլ շինությունների վերանորոգման և արդիականացման համար, որի արդյունքում վերոնշյալ կառույցները հնարավորինս կահավորված և տեխնիկապես հագեցված են: ԵՊՀ Իմ-ում գործում են ուսումնական 4 լաբորատորիաներ, համակարգչային 4 սրահներ, ինտերակտիվ ուսուցման 2 լսարաններ: Համաձայն պայմանագրի մասնաճյուղի ուսանողները լաբորատոր փորձեր են կատարում նաև ԵՊՀ-ի լաբորատորիաներում:

2012թ. հիմնվել է ինտերակտիվ ուսուցման լսարան (On-line)՝ անհրաժեշտ էլեկտրոնային սարքավորումներով (smart-գրատախտակ, պրոյեկտոր, համակարգիչ):

2014թ. սեպտեմբերին վերազինվել են Կիրառական արվեստի ֆակուլտետի արվեստանոցները, վերանորոգվել լսարանները, միջանցքներն ու ուսումնական այլ տարածքները, ստեղծվել է «Դիզայնի» լաբորատորիա և «Հագուստի մոդելավորման» արվեստանոց:

2013թ. «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության բացմանը զուգընթաց ստեղծվել է 20 համակարգչով 2-րդ համակարգչային լաբորատորիան, որոնք միացված են ներքին ցանցին, ապահովված են գերարագ և անվճար ինտերնետով: Տարածքում հասանելի է նաև անվճար WiFi կապ:

2014թ. Տնտեսագիտական ֆակուլտետում մասնագիտական առարկաների /Հաշվապահական հաշվառում, էկոնոմետրիկա, միկրո և մակրոտնտեսագիտություն, վիճակագրություն և այլն/ գործնական պարապմունքները ավելի արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև դասավանդման ընթացքում տարբեր մասնագիտական նախագծերի կիրառման համար ստեղծվել է 11 համակարգչով լաբորատորիա՝ գերարագ և անվճար ինտերնետային կապով:

2014 թ. մասնաճյուղի և Խաղաղության կորպուսի համատեղ ջանքերով ստեղծվել է անգլերեն լեզվի ուսուցման կենտրոն՝ հագեցած մասնագիտական գրականությամբ և անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով, որը նպատակուղղված է անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության ուսանողների գիտելիքների և հաղորդակցական կարողությունների զարգացմանը: Խաղաղության կորպուսի ջանքերով կենտրոնը շարունակաբար համալրվում է գեղարվեստական գրականությամբ, ուսումնամեթոդական ձեռնարկներով, ամսագրերով, ֆիլմերով և լեզվի ուսուցման համար նախատեսված խաղերով: Կենտրոնի ռեսուրսներից օգտվում են ոչ միայն մասնաճյուղի ուսանողները և դասախոսները, այլև Իջևան քաղաքի դպրոցականները, որոնք ընդգրկված են կենտրոնում գործող «Անգլերեն լեզվի ակումբ»-ի և «Կինո ակումբ»-ի կազմերում: Կենտրոնը դասընթացներ է կազմակերպում նաև մասնաճյուղի ոչ մասնագիտական բաժինների ուսանողների համար:

2015թ. ապրիլին ֆրանսիական Լիոն քաղաքի «AYO» կազմակերպության հովանավորությամբ մասնաճյուղում ստեղծվել է ֆրանսերեն լեզվի կենտրոն՝ հագեցած ժամանակակից տեխնիկական միջոցներով, շուրջ 800 կտոր մասնագիտական գրականությամբ (մեթոդական և գեղարվեստական), որը հնարավորություն է տալիս ֆրանսերեն լեզվի դասերը վարելու ժամանակակից տեսա-ձայնային մեթոդներով:

Բնական գիտությունների ֆակուլտետում գործում է ֆիզիկայի գծով վիրտուալ լաբորատորիա:

Մասնաճյուղի աշխատակազմը և ուսանողությունը ապահովված են անվճար ինտերնետ կապով, գործում է միասնական համակարգչային ցանց, որին միացված են շուրջ 134 համակարգիչներ: Եվ հարկ է նշել, որ մասնաճյուղի շրջանավարտները բավարարված են մասնաճյուղի լսարանների, ուսումնական լաբորատորիաների և համակարգչային սրահների կահավորանքից, և առանձնահատուկ՝ համակարգչային սրահների մատչելիությունից.



նաև նրանք բավարարված են համացանցի մատչելիությունից և նրա արագությունից.



Բարելավվել և հարստացվել են նաև գրադարանային պաշարները՝ ինչպես էլեկտրոնային, այնպես էլ գրքային: Մասնաճյուղի ուսանողությունը և պրոֆեսորադասախոսական անձնակազմը լիարժեքորեն օգտվում են ԵՊՀ Մարի և Սարգիս Իզմիրլյանների անվան գրադարանային պաշարներից: Բնական գիտությունների և կիրառական արվեստի ֆակուլտետների ուսանողների և գիտամանկավարժական անձնակազմի համար մասնաճյուղի թիվ 2 մասնաշենքում ստեղծվել է երկրորդ գրադարանը՝ հարմարավետ ընթերցասրահով: Մասնաճյուղի կողմից օպտիկական կապի ձեռք բերման շնորհիվ մայր բուհի կողմից տրամադրվել է գերարագ ինտերնետ կապ, որը հնարավորություն է տալիս օգտվելու մայր բուհի գրադարանի պայմաններից lib.ysu.am էլեկտրոնային հասցեի միջոցով: Գրադարանում հաշվետու ժամանակաշրջանում ավելացվել է նաև համակարգիչների թիվը, տեղադրվել է նոր տպող սարք, լուսապատճենահանման սարք/սկաներ/:

Նշենք, որ վերջին տարիներին բարելավվել է գրադարանի և ընթերցասրահների սպասարկումը, կահավորանքը, նրանք հագեցվել են մասնագիտական գրականությամբ, ինչի մասին վկայում են շրջանավարտների կողմից տրված գնահատականները.



2015թ.-ին մասնաճյուղից ներքին շահակիցների հարցման արդյունքներով կարող ենք վկայել, որ մասնաճյուղի և պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմը և ուսանողները բավարարված չեն մասնագիտական գրականությամբ հագեցվածությունից և լսարանների տեխնիկական կահավորումից, թեպետ շատ թե քիչ բավարարված են լսարանների ընդհանուր կահավորանքից և ընթերցասրահների հարմարավետությունից: Այս տվյալները բավականին խնդիրներ են առաջադրում և ուսումնական գործընթացի հետագա ավելի արդյունավետ կազմակերպման համար ակնկալում նոր լուծումներ.



Խնդիր I ե) Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը մասնաճյուղի ուսումնական գործընթացներում:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտը ԵՊՀ ԻՄ-ի ղեկավարության ուշադրության կենտրոնում է: 2013-14 ուստարում նշված ուղղությամբ նյութական և մարդկային զգալի ռեսուրսներ են հատկացվել, ինչի արդյունքում այսօր ԵՊՀ ԻՄ-ի համակարգչային ցանցն իր ծավալներով, տեխնիկական հագեցվածությամբ և որակական բնութագրերով լիովին համապատասխանում է ներքին շահակիցների պահանջներին: Մասնաճյուղը բավականին միջոցներ է ներդրել միասնական ինֆորմացիոն միջավայր ստեղծելու համար՝ ինտերնետային անվճար կապ, համակարգչային ներքին ցանց, որին միացված են գրեթե 140 համակարգիչներ, SuperVision YSU էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, ինչը հնարավոր է դարձնում ստորաբաժանումների միջև ինֆորմացիայի արագ փոխանակությունը և նվազեցնում

թղթաշրջանառությունը: Ստորաբաժանումները, ուսումնաօժանդակ անձնակազմն ու դասախոսներն ունեն էլեկտրոնային հասցեներ և օգտվում են էլեկտրոնային փոստի ծառայություններից:

Մասնճյուղի 4 համակարգչային սրահները, On-line լսարանը ապահովված են ինտերնետային կապով, միացված են համակարգչային ցանցին, ապահովված են անհրաժեշտ տեխնիկական միջոցներով՝ տեսասարքով, սկաներով, տպող սարքով, մարկեր գրատախտակներով և այդ միջոցների արդյունավետ օգտագործումն ապահովում է դասընթացից լիարժեք և համակարգված գիտելիքների և կարողությունների ձեռքբերմանը:

Եվ այդ առումով, հարկ է նշել, որ ուսումնական գործընթացների արդյունավետ իրականացման համար մասնաճյուղի դասախոսների մեծամասնությունը առկա և հեռակա ուսուցման համակարգերում դասընթացները վարում են տեղեկատվական և տեխնիկական համապատասխան միջոցների և համակարգերի կիրառմամբ: Դրան նպաստել են նաև կրեդիտային համակարգով դասավանդողների վերապատրաստման շրջանակներում իրականացված «Լսարանային ցուցադրություն» վերապատրաստման դասընթացները (մասնաճյուղում այդ դասընթացի վերապատրաստում է անցել 60 դասախոս (53%)): ՄԿՈԱ բաժնի կողմից 2013 թվականից իրականացվում են նաև «Ինչպես պատրաստել արդյունավետ պրեզենտացիաներ» թեմայով թրեյնինգներ:

Պետք է փաստել, որ մասնաճյուղի գրեթե բոլոր դասախոսներն օգտագործում են ուսանողների հետ հաղորդակցման էլեկտրոնային փոստերի հնարավորությունները, ինչին օգնում է անվճար և գերարագ ինտերնետ կապը: Առանձնապես այն իր կարևոր և նշանակալի դերն ունի հեռակա ուսուցման համակարգում, որտեղ սովորող հենաշարժողական սահմանափակումներ ունեցող ուսանողների համար էլեկտրոնային հաղորդակցումը խիստ անհրաժեշտություն է, նրանք ակտիվորեն օգտվում են էլեկտրոնային համակարգի ընձեռած հնարավորություններից և կարողանում են լիարժեք կրթություն ստանալ, ինչը տալիս է իր դրական արդյունքները:

Համակարգչային սրահների և գրադարանի ռեսուրսները հասանելի են բոլոր ուսանողներին, այդ թվում անվճար Wi-Fi անկյուններ կան Բնագիտական ֆակուլտետում և մասնաճյուղի գրադարանում: Աշխատանքներ են տարվում միջազգային գրադարանային ցանցին մասնակցությունն ընդլայնելու նպատակով:

Նշենք, որ հարցումների միջոցով իրականացրած արդյունքներով ուսանողների 78.9%-ը և դասխոսների 67.8%-ը բավարարված են մասնաճյուղի ռեսուրսային ապահովվածությունից:

❖ Հեռակա ուսուցման բաժինը 2014-15 ուստարվանից հիմնել է առանձին կայքէջ (heraka.com), որտեղ ներբեռնվում են հեռակա ուսուցման համակարգի ուսանողների համար ուսումնառության և ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութերը. դասացուցակները, քննաշրջանի գրաֆիկները, դասախոսությունների սղագրերը, մասնագիտական գրականությունը և այլն: Դասախոսները կիրառում են ուսանողների հետ էլեկտրոնային փոստով աշխատելու մեթոդը: Հեռակա ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով նրանք ուսանողներին ապահովում են անհրաժեշտ էլեկտրոնային գրականությամբ, դասախոսություններով, ինքնուրույն

աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ նյութերով, մեթոդական ուղեցույցներով, անհատական առաջադրանքներով և այլն:

❖ Լիարժեք տեղեկույթի մատուցումը բուհական կյանքի նորությունների, նախատեսվող ու անցկացվող բազմաբնույթ միջոցառումների, գիտաուսումնական ոլորտում ձեռքբերումների, ուսումնառության կազմակերպման, դասավանդման և խորհրդատվական ծառայությունների իրականացման, քննաշրջանների արդյունքների մասին մասնաճյուղի կայքը՝ **/http://www.ijevan.ysu.am/** դարձրել են գործունեության արդյունավետության ապահովման անփոխարինելի միջոց: Միաժամանակ հարկ է չմոռանալ, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտը ամենաարագ փոփոխվողներից է և պահանջվում է կայքի պատասխանատու մասնագետների կողմից վերապատրաստման ու վերառրակավորման ամենօրյա պատրաստակամություն, մասնաճյուղի ղեկավարության կողմից համապատասխան տեխնիկական միջոցների նորացման պատրաստակամություն, և, որ պակաս կարևոր չէ, օգտագործողների՝ դասավանդողների և առանձնահատուկ սովորողների կողմից տվյալ ոլորտի նորամուծություններին շահախնդրորեն ծանոթանալու և օգտվել կարողանալու պատրաստակամություն:

Կառավարման և ուսումնական գործընթացի թափանցիկության, աշխատակիցների և սովորողների իրազեկվածության, ուսանողներին համապատասխան խորհրդատվության ապահովման համար, գործունեության և ուսման մեջ տեղեկույթի փոխանակման տեսանկյունից անհնար է թերագնահատել կայքի, որպես աշխատանքի արդյունավետության գերժամանակակից գործոնի դերը: Ի պատիվ այս գործի պատասխանատուների, նրանց արհեստավարժ ու նվիրված գործունեության, ընդամենը երեք տարվա պատմություն ունեցող մասնաճյուղի կայքը դարձել է մասնագետների պատրաստման գործընթացում առանցքային պատասխանատուների՝ դասախոսների, լաբորանտների, գործավարների և ուսանողների «սիրելին»:

Այդ են փաստում կայքում առկա համապատասխան բաժինները: Կայքում տեղադրված են մասնաճյուղի ուսումնական գործընթացները կանոնակարգող բոլոր փաստաթղթերը, գործում է հարց ու պատասխանի բաժին, որի միջոցով ուսանողներն առաջադրում են իրենց հուզող հարցերը և համապատասխան ստորաբաժանումների կողմից ստանում սպառիչ պատասխաններ ու անհրաժեշտ խորհրդատվություն, տեղադրված են բակալավրի կրթական ծրագրի տեղեկագրքերը, մասնագիտությունների ուսումնական պլանները, կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագրքերը, դասացուցակն ու քննաշրջանի ժամանակացույցները, ուսանողների առաջադիմության ամփոփները, ամբիոնների աշխատանքային պլանները, խորհրդատվական ծառայությունների, ամբիոնների նիստերի և փոխադարձ դասալսումների ժամանակացույցները:

Ուուսումնասիրությունները ցույց են տվել, որ պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի (ՊԴԿ և ՈւՕԿ) 79%-ը և ուսանողների 63%-ը հաճախ է օգտվում կայքից, և բավարարված են նրա տեղեկատվության ստացման հարմարավետությունից (միջին միավորը համապատասխանաբար՝ 4.67 և 4.72), լիարժեքությունից (միջին միավորը՝ 4.41 և 4.61), նորությունների լուսաբանումից (4.4 և 4.73):

Մասնաճյուղի շրջանավարտներին թափուր աշխատատեղերի մասին իրազեկելու, նրանց կարիերային նպաստելու նպատակով կայքում դրվում են խորհրդատվություններ և հայտարարություններ՝ «Մրցույթներ, թափուր հաստիքներ», «Խորհրդատվություն», «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն», «Գրանցում» ենթաբաժիններում: Ուսանողների հետ դասավանդման և խորհրդատվական տեղեկատվությունը դասխոսներն ապահովում են նաև էլեկտրոնային փոստերի միջոցով:

Ընթացքի մեջ է մասնաճյուղի էլեկտրոնային կայքի ռուսալեզու և անգլալեզու տարբերակի ստեղծման գործընթացը:

Իսկ ուսանողների գնահատման համար որոշ դասախոսներ օգտագործում են էլեկտրոնային թեստավորման տարբեր համակարգեր, օրինակ classmarker.com, որոնց միջոցով դասախոսները ստեղծում են իրենց թեստերը, ստուգում ու գնահատում ուսանողների ձեռքբերումները: Դրանք նաև հնարավորություն են տալիս ուսանողին անմիջապես տեսնել իր վաստակած միավորը, տեսնել իր սխալները և այլն: Նախատեսվում է իրականացնել վերապատրաստման դասընթացներ էլեկտրոնային գնահատման համակարգերի ավելի լայն կիրառման համար:

Ռազմավարական այս նպատակի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Թեև մասնաճյուղում իրականցվում են կրթական ծրագրերից արտաքին և ներքին շահակիցների բավարարվածության վերաբերյալ հարցումներ, սակայն գնահատման արդյունքների վերլուծություններն առայժմ բավարար չափով չեն կիրառվում կրթական ծրագրերի վերանայման գործընթացում:
- ԵՊՀ ԻՄ-ում դեռևս չի կիրառվում դասախոսական կազմի մասնագիտական կարողությունների ամենամյա գնահատում:
- Դեռևս մշակված չեն ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան՝ կադրային ռեսուրսային ապահովվածության մեխանիզմներ:
- ԵՊՀ ԻՄ-ի կրթական ծրագրերում դեռևս ցածր է կամընտրական դասընթացների հաշվեկշիռը, որը փոքրացնում է ծրագրերի ճկունությունը:
- Անհատական ծրագրով ուսումնառություն չի կազմակերպվում:
- Մասնակի բեռնվածությամբ ուսումնառություն չի կազմակերպվում:
- Դասախոսական անձնակազմի ամենամյա բազմաչափ գնահատման գործընթացները և չափանիշները դեռևս ներդրված չեն:
- Ուսանողների գնահատումը դեռևս լիարժեքորեն չի իրականացվում կրթական վերջնարդյունքների հիման վրա սահմանված գնահատման չափանիշների օգնությամբ:
- Վիրտուալ լաբորատորիաների կիրառումը դեռևս լայնորեն ընդգրկված չէ ուսումնական գործընթացներում:
- Դեռևս չեն ձևավորվել անհրաժեշտ կադրային, տեխնոլոգիական և մեթոդական ռեսուրսներ՝ էլեկտրոնային եղանակով ուսուցման դասընթացների ամբողջական մշակման և ներդրման համար:
- Ձեռք չի բերվել և ներդրվել Վեբ ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ:
- Ուսումնական գործընթացում դեռևս լայնորեն չեն կիրառվում վիրտուալ լաբորատորիաներ:

II. Գիտական հետազոտություններ և նորարարություն

Մեծացնել մասնաճյուղի գիտական ներուժի ներդրումը տարածաշրջանի տնտեսական զարգացման և հասարակության բարեկեցության բարձրացման գործում, խրախուսել դասախոսական կազմի ակտիվ ներգրավումը հետազոտական աշխատանքներում:

<u>2-րդ գերակա նպատակը</u> մասնաճյուղում գիտական հետազոտությունների և նորարարության ծավալի մեծացումն ու գիտական ներուժի ներդնումն է: Այստեղ մասնաճյուղը՝ որպես բակալավրիական կրթություն իրականացնող հաստատություն, լուրջ խնդիրներ ունի և այդ նպատակի իրականացման 10 գործողությունների միայն 20%-ն է լիարժեք իրականցրել, նրանցից 40%-ը իրականցվել մասնակի, ընդ որում՝ դա սահմանափակվել է միայն դասախոսների գիտական գործունեության աջակցման և խրախուսման մեխանիզմներ ներդնելով, գիտական նստաշրջաններ և գիտաժողովներ կազմակերպելով և «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուի հրատարակումներով: 2011-15թթ. ժամանակահատվածում մասնաճյուղի դասախոսների գիտական գործունեության մասին են վկայում հրատարակված 6 դասագրքերը, 18 մենագրությունները, 63 ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկները, 503 հոդվածները և 27 զեկուցումների թեզիսները, օտարերկրյա միջազգային գրախոսվող 8, ԱՊՀ երկրներում գրախոսվող 14, Հայաստանյան գրախոսվող 27 մասնագիտական ամսագրերում հրատարակված հոդվածները: Մասնաճյուղի դասախոսները մասնակցել են 13 տարածաշրջանային, 30 հանրապետական և 30 միջազգային գիտաժողովների ու գիտական նստաշրջանների: Նշվածների թվում՝ 1 միջազգային և 5 հանրապետական գիտաժողովներն անց են կացվել մասնաճյուղում:

Խնդիր II ա) Ստեղծել նախադրյալներ և նպաստող մեխանիզմներ՝ հետազոտությունների ծավալի աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ Հետազոտությունների ծավալի աճի և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և ուսանողների ներգրավվածության ընդլայնման համար մասնաճյուղը վարում է հստակ քաղաքականություն ու կիրառում համապատասխան ընթացակարգեր, որոնք բխում են ԵՊՀ-ի և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրություններից, ՀՀ Կրթության և գիտության նախարարության, ԲՈՀ-ի կողմից սահմանված կանոնակարգերից և ամրագրված են ԵՊՀ ԻՄ-ի կանոնակարգերում ու ծրագրային փաստաթղթերում: Դրանք միտված են ստեղծելու և զարգացնելու մասնաճյուղի հետազոտական ուղղությունները, և նպաստում են մասնաճյուղի հետազոտական աշխատանքների ակտիվացմանը՝ կարևորելով դասախոսների հետազոտական աշխատանքների արդյունքներն ու ձեռքբերումները գիտական աստիճաններ կամ կոչումներ շնորհելիս (թեկնածու, դոկտոր, դոցենտ, պրոֆեսոր և այլն), նաև նրանց աշխատավարձի չափը սահմանելիս:

Մասնաճյուղի դասախոսները կայուն զբաղված են գիտական գործունեությամբ: Նրանց կողմից հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել են դասագրքեր, մենագրություններ, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ, հոդվածներ և զեկուցումների թեզիսներ: Ստորև ներկայացված են այդ տվյալներն ըստ ուսումնական տարիների.

Ուստարի	Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիսներ	Ընդամենը
2010-11	3	1	6	6	128	5	**149**
2011-12	1	4	3	8	90	4	**110**
2012-13	-	3	1	7	91	7	**109**
2013-14	-	4	3	14	81	11	**104**
2014-15	2	6	1	14	113	-	**136**
Ընդամենը	***6***	***18***	***14***	***49***	***503***	***27***	***608***

Գիտական ներուժի արդյունավետությունը բարձրացնելու և հետազոտությունների ոլորտում ծավալի աճ ապահովելու համար՝ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ձգտում է բարելավել հետազոտական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ տարածքային և նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել մասնաճյուղի ուսումնական բազան աշխատակիցներին և ուսանողությանը տրամադրելով գիտակրթական ռեսուրսներ, որոնք նպաստել են թեկնածուական ատենախոսություն պաշտպանած աշխատակիցների թվի աճին: Դրան նպաստել է նաև 2011թ.-ից հրատարակվող «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն, որտեղ անվճար տպագրվում են աշխատակիցների հոդվածները: Ընդգրկված լինելով ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակ»-ում, ապահովում է մասնաճյուղի, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի պրոֆեսորադասախոսական աշխատակազմի կողմից իրականացված գիտամեթոդական աշխատանքների հրապարակայնությունը, նպաստում տարածաշրջանում գիտական մտքի զարգացմանը: 2011-2014թթ. ընթացքում «Ակունք» հանդեսում տպագրվել է 263 հոդված, որի 51%-ը՝ բուհի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից.

Հեղինակ		2011		2012		2013		2014		2015		Ընդամենը	
		Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%	Քանակ	%
1	ՀՀ այլ բուհերից հրավիրված դասախոսներ	11	21%	12	18%	10	12%	4	13%	2	8%	39	**51%**
2	Տեղացի դասախոսներ	27	51%	28	41%	18	21%	13	41%	8	32%	94	
3	Այլ հեղինակներ	15	28%	28	41%	57	67%	15	46%	15	60%	130	49%
Ընդամենը՝		**53**		**68**		**85**		**32**		**25**		**263**	

Գիտական հանդեսի հրատարակման ծախսերը հիմնականում հոգում է մայր բուհը, թեև մասնաճյուղը նույնպես ունենում է իր ներդրումը՝ վճարելով հանդեսի հերթական համարի խմբագրման ու համակարգչային ձևավորման համար:

Մասնաճյուղի գիտական ներուժի աճն ըստ ուսումնական տարիների ունի հետևյալ պատկերը.

Ուստարի	Գիտ. թեկնածու	Գիտ. դոկտոր	ՀՀ Նկարիչների միության անդամ	ՀՀ Դիզայներների միության անդամ	Ասպիրանտներ/ հայցորդներ
2011	2	-	3	1	7
2012	3	1	1	1	8
2013	8	-	1	-	18
2014	6	-	-	-	11
2015	6	-	-	-	11
Ընդամենը՝	26	1	5	2	35

Մասնաճյուղն օժանդակում է հետազոտական աշխատանքների ակտիվացմանը՝ դասախոսների գիտական ձեռքբերումներն ընդգրկելով հավելավճարների որոշման ցուցանիշներում, մասնաճյուղի աշխատակիցներին խրախուսելու կանոնակարգում՝ դասախոսների կողմից հավաքվող միավորների մեջ ներառելով միավորներ հրատարակած մենագրության, հոդվածների, թեզերի, գիտական կոնֆերանսներին ունեցած մասնակցության, գիտական կոնֆերանսների ժողովածուներում զեկույցների թեզիսների հրատարակման, դոկտորական կամ թեկնածուական ատենախոսության պաշտպանության, թեկնածուական մինիմումների հանձնման համար:

Մասնաճյուղում մշտապես գործում են նաև դասախոսների ինքնակրթության, գիտական գործունեության խրախուսման այլ մեխանիզմներ.

- գործուղումներ տարբեր վերապատրաստման դասընթացների (2013թ. «Մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով եռափուլ դասընթացներ ՈԱԱԿ-ում (մասնակցել են մասնաճյուղի 5 դասախոսներ), 2014թ. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի կողմից կազմակերպված ամառային դպրոց՝ «Քանակական հետազոտության մեթոդաբանություն» թեմայով (մասնակցել են 2 աշխատակիցներ),

- դրամական պարգևատրումներ,

- աջակցություն դասախոսներին ուսումնական և մեթոդական ձեռնարկների անվճար հրատարակության գործում,

-աջակցություն դասախոսների հրատարակած գրքերի շնորհանդեսների կազմակերպման գործում,

- «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում դասախոսների հոդվածների անվճար տպագրում,

- պարգևատրումներ թեկնածուական և դոկտորական ատենախոսությունների պաշտպանության համար. օրինակ վերջին հինգ տարիների ընթացքում թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել մասնաճյուղի 16 երիտասարդ դասախոսներ (մինչև 35 տարեկան), որոնցից 4-ը արժանացել է բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի, 2-ը՝ պատմական գիտությունների թեկնածուի, 1-ը՝ հոգեբանական գիտությունների թեկնածուի, 3-ը՝ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածուի, 1-ը՝ տեխնիկական գիտությունների թեկնածուի, 1-ը՝ կենսաբանական գիտությունների թեկնածուի աստիճանի և այլն, և հարկ է նշել, որ նրանցից 12-ը տեղացի դասախոսներ են, ընդ որում 9-ը՝ մասնաճյուղի նախկին շրջանավարտներ:

Դասախոսի ձեռքբերումներն ամրագրվում են նաև դասախոսների որակավորման բարձրացման կրթագիտական ծրագրում:

Մասնաճյուղում 2015-16 ուստարում աշխատում են գիտությունների 67 թեկնածու և 3 դոկտոր:

Հետազոտական նախագծերի մասնակցում են հիմնականում ԵՊՀ-ից հրավիրված դասախոսները, մասնաճյուղն ընդառաջում և աջակցում է նրանց հետազոտական գործունեությանը: Համաձայն ԳԱՑ-ի մասնաճյուղը վերջին 5 ուսումնական տարիների համար ունի գիտական գործունեության հետևյալ ցուցանիշները.

Ցուցանիշ	*2010-11*	*2011-12*	*2012-13*	*2013-14*	*2014-15*
Հետազոտական նախագծերում ընդգրկված դասախոսների թիվը	4	-	2	10	1
Գիտական հրատարակությունների թիվը	133	94	107	113	136
Արտաքին գործընկերների հետ համատեղ հրատարակությունների թիվը	22	30	23	21	22

Նշենք, որ մասնաճյուղի բյուջեն ձևավորվում, հաստատվում և բաշխվում է ըստ ԵՊՀ ԻՄ հաշվապահության կանոնադրության, և դրանում գիտահետազոտական աշխատանքների իրականացման ֆինանսավորման համար հատուկ հոդված սահմանված չէ, սակայն մասնաճյուղն այդ ուղղությամբ որոշակի ծախսեր է կատարում՝ հատկացնելով որոշակի գումարներ գիտաժողովների, կոնֆերանսների, կրթական բարեփոխումների, վերապատրաստումների մասնակցության համար գործուղումների, նյութատեխնիկական միջոցների ձեռքբերման և այլնի համար.

Գիտահետազոտական աշխատանքների համար նախատեսված ֆինանսներ						
Նպատակը	**2012**		**2013**		**2014**	
	գումարը	**%**	**գումարը**	**%**	**գումարը**	**%**
Կրթական բարեփոխումներ	500,0	**0.14%**	500,0	**0.14%**	3000,0	**0.7%**
Մասնագիտական կրթության և որակի ապահովում	-	**-**	-	**-**	2500,0	**0.6%**
Լաբորատոր սարքավորումների ձեռքբերում	900,0	**0.3%**	900,0	**0.2%**	900,0	**0.2%**
Քիմիական և լաբորատոր նյութերի ձեռքբերում	500,0	**0.14%**	500,0	**0.14%**	300,0	**0.1%**

❖ Թեպետ մասնաճյուղում ուսանողների ներգրավմամբ հատուկ գիտահետազոտական ծրագրեր գրեթե չեն իրականացվում, սակայն բակալավրական կրթական ծրագրի շրջանակներում դասախոսների նախաձեռնությամբ և անմիջական աջակցությամբ ուսանողները գիտական զեկուցումներ են կարդում գիտաժողովներում, իրենց ֆակուլտետներում, տպագրում հոդվածներ, ինչի համար նրանք խրախուսվում են մասնաճյուղում գործող մեխանիզմներով:

Ուսանողների գիտա-ուսումնական գործունեությանը էապես նպաստում է ակտիվ գործող Ուսանողական գիտական ընկերությունը (ՈԻԳԸ):

2012թ. մասնաճյուղի 1 ուսանող մասնակցել է միջազգային, 2 ուսանողներ՝ հանրապետական գիտաժողովների: 2013թ. 8 ուսանողներ մասնակցել են հանրապետական գիտաժողովի:

2012թ. դեկտեմբերին Երևանի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության 2012-2013 ուստարվա առաջին կիսամյակի գործունեության ամփոփման արդյունքում ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ՈՒԳԸ-ն (նախագահ՝ Ս.Ալավերդյան) ընդհանուր հաշվարկով զբաղեցրել էր 5-րդ տեղը՝ նախորդ կիսամյակի համեմատ բարելավելով ցուցանիշը երկու տեղով և արժանացել «գերազանց վերապահումով» գնահատականին, և ակտիվ գործունեության համար պարգևատրվել է նաև ՈՒԳԸ-ի անդամ, «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողուհի Աննա Ադամյանը:

2013թ. փետրվարին Հայաստանի երիտասարդական հիմնադրամի և ՎիվաՍել-ՄՏՍ-ի հովանավորությամբ ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմակերպած «Լավագույն ուսանող» հանրապետական մրցույթում «Գիտահետազոտական աշխատանք» անվանակարգում հաղթող են ճանաչվել մասնաճյուղի 2 ուսանողներ (1-ին տեղ՝ «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության ուսանող Ս. Ալավերդյան և 2-րդ տեղ՝ «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության ուսանող Ն.Ճաղարյան), և որպես առանձնահատուկ ձեռքբերում՝ նրանք մասնաճյուղի տնօրենության կողմից ստացել են դրամական պարգև (50.000-ական դրամ):

Համալսարանը կարևորում է նաև երիտասարդ գիտնականների ու ուսանողների ներգրավումը հետազոտական նախագծերում: 2012-2014թթ. Շվեյցարիայի Ֆրայբուրգի համալսարանի կողմից մրցութային կարգով տրամադրված «Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ-ում» (ASCN) դրամաշնորհային ծրագրի աշխատանքներում ընդգրկված են եղել նաև մասնաճյուղի տնտեսագիտության ֆակուլտետի 4 լավագույն ուսանողներ:

Հարկ է նշել, որ ուսանողների հետ գիտահետազոտական աշխատանքներն արտացոլվում են ուսանողների կուրսային և ավարտական աշխատանքներում, որոնց թեմատիկան ընդգրկում է դասախոսների գիտական գործունեության ուղղությունները:

2013-2014 ուստարում «Անտառագիտության» ամբիոնի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել են սեմինարներ, որոնք վերաբերել են Հայաստանի հյուսարևելյան տարածաշրջանի կենսաբազմազանության պահպանության հիմնախնդիրներին, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործմանը և անտառային էկոհամակարգերի վրա անտրոպոգեն ազդեցության հիմնական ուղություններին: Ամբիոնի դասախոսները նաև անհատական աշխատանքներ են իրականացրել ուսանողների հետ, որոնց արդյունքում պատրաստվել են Տավուշի մարզի կենսաբազմազանության տարբեր ասպեկտներին վերաբերող զեկույցներ: Նույն ամբիոնը սերտ համագործակցել է նաև «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ, որի արդյունքում բարձր կուրսերի ուսանողները պարբերաբար այցելություններ և գործնական պարապմունքներ են իրականացրել կենտրոնի մասնագետների հետ, մասնակցել են «Զիկատար» անտառային գիտափորձարարական կենտրոնում իրականացվող դասընթացներին, որի ժամանակ նրանք ձեռք են բերել մասնագիտական գիտելիքներ և հմտություններ:

2014թ. հոկտեմբերի 2-ին «Մանկավարժություն և հոգեբանություն» մնասնագիտության ուսանողները մասնաճյուղի տնօրենության աջակցությամբ և Վ.Բրուտյանի գլխավորությամբ

գործնական և հետազոտական նպատակով այցելել են Վանաձորի մանկատուն, որտեղ մանկատան մանկավարժահոգեբանական աշխատակազմը նրանց ծանոթացրել է նախադպրոցական խմբի երեխաների հետ, ներկայացրել նրանց խնդիրները, իրավունքներն ու պարտականությունները, բարձրացրել նախադպրոցական հոգեբանության արդի գիտա-ուսումնական ձեռքբերումներն ու նշել զարգացման ուղղությունները:

Բնական գիտությունների ֆակուլտետի և հեռակա ուսուցման բաժնի «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության ուսանողները կուրսային և ավարտական աշխատանքների իրականացման շրջանակներում պարբերաբար այցելում են Բյուրականի աստղադիտարան:

2014թ. նոյեմբերին ԵՊՀ ԻՄ-ի առկա և հեռակա ուսուցման համակարգերի «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության առաջին կուրսերի ուսանողները ԵՊՀ հարակից այգու տարածքում իրականացրել են «Կադաստրային գործի ներածություն» և «Տեղագրություն գեոդեզիայի հիմունքներով» առարկաների գործնական-հետազոտական աշխատանքներ. ժամանակակից էլեկտրոնային տախեոմետրի միջոցով կատարել են չափագրումներ՝ գործնականորեն ամրապնդելով իրենց տեսական գիտելիքները, ապա ստացված դաշտային չափումների տվյալները «AutoCad» ծրագրով մշակել են մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի համակարգչային սրահում:

2014-15 ուս. տարում «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի կողմից կազմակերպվել է ուսանողական գիտական կոնֆերանս «Եվրասիական Տնտեսական Միությանը Հայաստանի ինտեգրման հիմնախնդիրները» խորագրով, որտեղ մասնաճյուղի ուսանողները կարդացել են զեկուցումներ, ընթացել է քննարկումներ, որի ընթացքում ուսանողներն ստացել են թեմայի շրջանակներում իրենց հետաքրքրող հարցերի պատասխանները:

Կիրառական արվեստի ֆակուլտետում կազմակերպվել է Արշիլ Գորկուն նվիրված ուսանողական գիտաժողով: Կազմված անհատական և խմբային թեմատիկ ցուցահանդեսների կազմակերպման ժամանակացույցով պարբերաբար իրականացվել են միջոցառում-ցուցահանդեսներ՝ ուսանողների, շրջանավարտների և այլ աջակցողների շնորհները և ներդրումային աշխատանքները լուսաբանելու և հանրությանը ներկայացնելու համար: Կազմակերպվել են պլեներային նկարչության դասեր՝ պատմամշակութային կոթողներում:

2011-15 թթ. ժամանակահատվածում մասնաճյուղի ուսանողների կողմից կարդացվել են շուրջ 90 ուսումնական և ուսումնագիտական զեկուցումներ:

Հաշվի առնելով վերջին տարիներին ուսանողների կողմից տպագրված աշխատանքների և գիտաժողովների մասնակցության քանակի նվազման միտումը, 2015 թ. մայիսի 2-ին մասնաճյուղում ուսանողների և երիտասարդ դասախոսների համար կազմակերպվել է «Ինչպես կատարել գիտահետազոտական աշխատանք» թեմայով սեմինար՝ գիտահետազոտական աշխա-տանքների կատարման հիմնական սկզբունքներին ծանոթացնելու նպատակով: Մասնաճյուղն աջակցում և խրախուսում է երիտասարդ հետազոտողներին և ուսանողներին՝ մասնակցելու մայր բուհի և այլ կազմակերպությունների կողմից պարբերաբար կազմակերպվող ամառային դպրոց-ներին և կոնֆերանսներին, տրամադրվում են մեթոդականներ, որտեղ ներկայացված են գիտական աշխատանք կատարելու, ինչպես նաև ռեֆերատներ, կուրսային և ավարտական աշխատանքներ գրելու համար անհրաժեշտ հիմնական տեղեկատվությունը:

Տարբեր հարցումների և ուսումնասիրությունների միջոցով գնահատվել է մասնաճյուղում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման գործընթացներից բավարարվածությունը, ըստ որի ուսումնառողների 91%-ը, դասավանդողների 78%-ը և գործատուների 79%-ը բավարարված է այդ գործընթացներից:

2014թ. փետրվարին «Հայկյան-2013» մրցանակաբաշխությունում մասնաճյուղի ՈՒԳԸ-ն հաղթող է ճանաչվել «Լավագույն մարզային ուսանողական ինքնակառավարման մարմին» անվանակարգում:

Մասնաճյուղի ուսանողները ակտիվ մասնակցում են տարաբնույթ մրցույթների և ուրախությամբ պետք է նշել, որ ցուցաբերում են բավականին լավ արդյունքներ:

Ուսանողների միջազգային օրվան նվիրված «ԵՊՀ լավագույն ուսանող-2013» ամենամյա մրցանակաբաշխությունում 2013թ. նոյեմբերին հաղթող 15 ուսանողների շարքում էր ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի Տնտեսագիտության ֆակուլտետի 4-րդ կուրսի մեր ուսանողուհին:

2014թ. մայիսին մասնաճյուղի ուսանողները մասնակցել են «WRITE ON! COMPETITION 2014» միջազգային մրցույթին (12 պետությունների մասնակցությամբ), որի ազգային փուլում մեր 3 ուսանողուհիները գրավել են 1-ին և 2-րդ տեղերը, իսկ միջազգային փուլում մասնաճյուղի «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտության մեր ուսանողուհին գրավել է 1-ին տեղը:

Մասնաճյուղի տնօրենությունը խրախուսման տարբեր ձևերով աջակցում է մասնաճյուղի ուսանողների մասնակցությանը միջբուհական գիտաժողովների:

Տնօրենության կողմից դիպլոմներով ու գովասանագրերով պարգևատրվում են նաև ԵՊՀ-ի կողմից ամենամյա կազմակերպվող դպրոցական օլիմպիադայում հաղթած աշակերտները:

❖ Մասնաճյուղը կարևորում է տարատեսակ պրակտիկաների /ուսումնական, մանկավարժական, արտադրական, հաշվողական/ կազմակերպումը և նրանց արդյունավետ անցկացումը, և աջակցում դրանց կիրառական-հետազոտական ուղղվածության զարգացմանը՝ խրախուսելով ուսանողների առաջարկները և նորովի մոտեցումները պրակտիկայի գործընթացին: Պրակտիկաները կազմակերպվում են «Պրակտիկաների կազմակերպման և անցկացման կարգ»-ի (ԳԽ 28.02.2012թ.) դրույթներով, միտված են ուսանողների գործնական գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը, ինքնազարգացմանը և ստեղծագործական մտքի ու կազմակերպչական ձիրգի դրսևորմանը:

Մասնաճյուղը զգալիորեն ընդլայնել է մարզում գործող հիմնարկ-ձեռնարկությունների, հանրակրթական դպրոցների և բանկային կազմակերպությունների հետ պայմանագրային բազան, ուսանողների ուսումնառությանը զուգահեռ աշխատանքային փորձի ձևավորման ու տիրապետման նպատակով միջոցներ են ձեռնարկվել նրանց ուսումնաարտադրական պրակտիկան ավելի նպատակային կազմակերպելու ուղղությամբ: Այդ նպատակով պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ մարզում գործող բանկերի, վարկային կազմակերպությունների, հիմնարկ ձեռնարկությունների հետ: Մասնագիտական ամբիոններում կազմվում են համապատասխան պրակտիկաների ծրագրերը: Մանկավարժական պրակտիկան առավել արդյունավետ կազմակերպելու համար մշակվել է պրակտիկայի ծրագրի մակետ, մեթոդական բաշխիչ նյութեր:

Պրակտիկաների ընթացքում ուսանողների կողմից կատարվում են հետազոտական աշխատանքներ, որոնց նյութերն օգտագործվում են կուրսային, ավարտական աշխատանքներում: Պրակտիկաներին ուսանողների պատրաստվածության մակարդակի բարձրացման համար ուսումնական պլաններում ավելացվում են պրակտիկ դասընթացների ժամաքանակները՝ հիմք ընդունելով նաև ուսանողների առաջարկները, վերանայվում են մասնագիտական դասընթացների թեմատիկ պլանները՝ կարևորելով ուսանողների մոտ գործնական հմտությունների և կարողությունների ձևավորումը: Ուսանողները մանկավարժական պրակտիկայի պասիվ ժամանակաշրջանն անցնում են մասնաճյուղում, վերստին հարստացնելով տեսական գիտելիքները, իսկ ակտիվ շրջանն անցնում են դպրոցներում:

Պրակտիկաների նպատակային իրականացման և տեսանելի ձեռքբերումների ակնկալիքով մասնաճյուղը փոխհանագործակցության պայմանագրեր է կնքել մարզում գործող շուրջ երկու տասնյակ պետական և մասնավոր կազմակերպությունների հետ:

2014 թ. դեկտեմբերին պրակտիկայի կազմակերպման և անցկացման վերաբերյալ պայմանագրեր են կնքվել մասնաճյուղի և մարզի ավագ դպրոցների միջև:

2014-2015 ուստարում պայմանագրեր են կնքվել նաև Տավուշի մարզային արխիվի, Իջևանի երկրագիտական թանգարանի, Տավուշի մարզային գրադարանի և ՀՀ ՊՆ թիվ N զորամասի հետ:

Օրինակ, Հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության ուսանողներն իրենց ակտիվ պրակտիկան անցնում են մարզի տարբեր հաստատություններում, այդ թվում SOS մանկական գյուղեր ծրագրի Իջևանի կենտրոնում:

2013թ. մարտին Տավուշի թեմի առաջնորդ Եզնիկ սրբազանը՝ Սուրբ Աստվածածին եկեղեցու սպասավոր, կաթողիկոսի առաջնորդարանում աշխատող Անդրեյ Անտոնյանը այցելել են մասնաճյուղի կիրառական արվեստի ֆակուլտետ: Սրբազանի աջակցությամբ Կիրառական արվեստի ֆակուլտետի նկարչական ձիրքով օժտված և գեղանկարչությունից ակադեմիական գիտելիքներ ունեցող ուսանողներից ստեղծվել է խումբ և հիմնադրվել սրբանկարչության դպրոց, որը նպաստում է նրանց պրակտիկ գործունեության զարգացմանը և մասնագիտական կողմնորոշմանը:

2013-14 ուստարում Եվրամիության կողմից ֆինանսավորվող և WWF-ի կողմից իրականացվող «Հարավային Կովկասի երկրներում անտառների տրանսֆորմացիայի միջոցով անտառային էկոհամակարգերի կայունության բարձրացում կլիմայի փոփոխության նկատմամբ» ծրագրի շրջանակներում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Նոյեմբերյանի անտառտնտեսության Կողբի անտառապետությունում գտնվող «Նոյեմբերյան» տարածքը (մոտ 78 հա) դարձել է ավարտական աշխատանքի թեմայի համար հետազոտման և ուսումնասիրման օբյեկտ:

2013-14 ուստարում մասնաճյուղի Բնական գիտությունների ֆակուլտետի «Անտառագիտության» ամբիոնը սերտ համագործակցել է «Զիկատար» բնապահպանական կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ, որի ընթացքում ամբիոնի բարձր կուրսերի ուսանողները պարբերաբար այցելել են բնապահպանական կենտրոն, որտեղ կայացել են մասնագիտական դասընթացներ, իրականացվել են գործնական պարապմունքներ, մասնագետները էական խորհուրդներ են տվել կուրսային և ավարտական թեմաների շրջանակներում, օգնել են իրականացնել հետազոտական աշխատանքներ:

2014թ. ապրիլին Տնտեսագիտության ֆակուլտետի 2-րդ կուրսի ուսանողները ճանաչողական պրակտիկայի շրջանակներում այցելել են ՀՀ կենտրոնական բանկ և Երևանի կոնյակի գործարան: Ուսանողները հետաքրքրվել են դրամանիշերի պատմությամբ, Կենտրոնական բանկի գործունեությամբ, դրամավարկային քաղաքականությամբ, նրանց ներկայացրել են ԿԲ-ում շրջանառվող պարտատոմսերը, մուրհակները, չեկերը և այլ արժեթղթեր, հանդիպումն ուղեկցվել է հարց ու պատասխանով և ճիշտ պատասխանների համար ուսանողները ստացել են անվանական տետրեր: Հայաստանի կարևոր խորհրդանիշներից և մշակութային արժեքներից մեկի՝ Երևանի կոնյակի գործարանում տեխնիկական միջոցներով պատրաստված առանձին ցուցասրահներում ուսանողները 3D լայնամասշտաբ անիմացիոն տեսանյութերով ծանոթացել են «ArArAt» կոնյակի պատմությանը, արտադրության գործընթացին, մասնաճյուղի անունից ուսանողները գրառում են կատարել Խաղաղության տակառի մոտ:

2014-15 ուստարում ԵՊՀ ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի «Սերվիս» մասնագիտության մի խումբ ուսանողներ «Տավուշի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի ղեկավար Հովհաննես Ղահրամանյանի գլխավորությամբ ամառային պրակտիկան իրականացրել են մարզի Լուսահովիտ (նախկինում՝ Ծռվիզ) գյուղում, որը նպատակ ուներ ուսանողների մոտ զարգացնել հետազոտելու և գնահատելու ունակությունները, մասնավորապես նրանք ուսումնասիրել են գյուղի հարավ-արևմտյան ձորակի աջ ափին գտնվող Մորու ձորի վանքի զբոսաշրջային ներուժը, հրաշք բնության գրկում ծավալել են ռեկրեացիոն հզոր ռեսուրսների մասին քննարկումներ և գնահատել գյուղի և վանքի զբոսաշրջային ներուժը: Նույն մասնագիտության ուսանողները ճանաչողական այցով մեկնել են Վրաստանի մայրաքաղաք, որի նպատակն է եղել ուսանողներին ծանոթացնել վրացերենի նրբություններին ու լեզվական առանձնահատկություններին, մոտիկից ծանոթանալու մերձավոր սփյուռքի այդ համայնքի հետ, ինչպես նաև կիրառելու իրենց լեզվական հմտությունները:

Նշենք, որ Տնտեսագիտության ֆակուլտետի «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության ուսանողներն իրենց պրակտիկաներն անց են կացնում տնտեսության տարբեր ոլորտի հիմնարկ-ձեռնարկություններում, ինչպես նաև, այդ մասնագիտության լավագույն ուսանողները, մրցույթային կարգով, իրենց արտադրական պրակտիկաներն անց են կացնում հեռահաղորդակցության օպերատորներ «ՎԻՎԱ ՍԵԼ- ՄՏՍ» և «Օրանժ» ընկերություններում, իսկ 2015 թ.-ից նաև ՀՀ ԿԲ-ի Դիլիջանի մասնաճյուղում:

Տնտեսագիտության ֆակուլտետի «Սերվիս» մասնագիտության ուսանողներն արտադրական պրակտիկան անց են կացնում մարզի ծառայության ոլորտի կազմակերպություններում:

Հարկ է նշել, որ ուսանողների հետ պրակտիկ աշխատանքների մակարդակի բարձրացումը տվել է իր արդյունքները, այդ են վկայում մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ արտաքին շահակիցների շրջանում անցկացրած հարցումների արդյունքները, որի համաձայն մեր ուսանողների մոտ էապես բարելավվել են գործնական հմտությունները և մասնագիտական խոսքը.



ինչպես նաև զարգացել է նրանց ստեղծագործական մոտեցումն իրենց գործունեության նկատմամբ.



Մասնավորապես, մանկավարժները կատարել են մի շարք արդյունավետ առաջարկներ պրակտիկանտ-ուսանողների մասնագիտական և մանկավարժական որակների հետագա բարելավման ուղղությամբ, ինչը նաև մասնաճյուղի մեթոդիկա դասավանդող դասախոսների համար առաջ է քաշում բավականին խնդիրներ այդ դասընթացների առավել նպատակային և չափորոշիչների պահանջներին համապատասխան կազմակերպելու վերաբերյալ: Նրանք նշում են, որ պրակտիկանտներն ավելի շատ ուշադրություն դարձնեն իրենց բանավոր խոսքի կազմակերպմանը, բառերի ճիշտ շեշտադրմանը, լինե առավել ազատ ու անկաշկանդ, ինքնավստահ, պահանջկոտ, ավելի շատ կարդան մեթոդական ուղեցույցներ, տիրապետեն դասավանդման ժամանակակից մեթոդներին՝ այն կառուցելով ավանդականի վրա: Նաև նշում են, որ պրակտիկայի կազմակերպման գործընթացը կբարելավվի մեթոդիստի, մանկավարժական ամբիոնի դասախոսի, դպրոցի ուսուցչի սերտ համագործակցության դեպքում, նրանց աշխատանքների կոորդինացմամբ, ընդլայնելով պրակտիկայի համար նախատեսված ժամանակը, այն դարձնելով հաճախակի, որովհետև պրակտիկայի կազմակերպման հաճախակի գործընթացը կարող է լիովին բարձրացնել ուսանողների պրակտիկ կարողությունները:

Բացի այդ, 2015թ. անցկացրած պրակտիկայից բավարարվածության հարցման արդյունքներով մասնաճյուղի ուսանողները բավարված են պրակտիկայի կազմակերպման գործընթացից (միջին միավորը՝ 4.66), նրանք գտնում են, որ ուսումնառության ընթացքում ձեռք

բերած տեսական գիտելիքները և յուրացրած մեթոդները բավարարել են պրակտիկայի արդյունավետ իրականացմանը (միջին միավորը՝ 4.6), իսկ ամենակարևորը, նրանք գտնում են, որ պրակտիկան նպաստեց նրանց մասնագիտական կարողությունների և հմտությունների դրսևորմանը.



❖ Քանի որ մասնաճյուղն իրականացնում է բակալավրիական կրթություն, հետազոտական նախագծեր, գիտահետազոտական ծրագրեր չեն իրականացվում, սակայն մասնաճյուղի դասախոսները մասնաճյուղի համապատասխան ամբիոնների նախաձեռնությամբ 2011-15թթ. ակտիվ մասնակցել են ԵՊՀ-ի, հանրապետության այլ բուհերի և նաև հենց ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերպված հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտաժողովների, գիտական նստաշրջանների, որոնք, օրինակ, նվիրված են եղել ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի հիմնադրման 5-ամյակին, Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ֆրանսերենի ամբիոնի հիմնադրման 75-ամյակին, Բուհերի կառավարման համակարգի բարելավման ժամանակակից հիմնախնդիրներին, Սայաթ-Նովայի ծննդյան 300-ամյակին, Հայ գիտական բարբառագիտության հիմնադրման 100-ամյակին, Հայաստանի արտաքին առևտրատնտեսական կապերի զարգացման հիմնախնդիրներին, Հայաստանի հյուսիս-արևելյան տարածաշրջանի կենսաբազմազանության պահպանության հիմնախնդիրներին, Բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և անտառային էկոհամակարգերի վրա անտրոպոգեն ազդեցության հիմնական ուղություններին, Միջմշակութային համատեքստում լեզվին, գրականությանը և արվեստին:

Դասախոսների մասնակցությունը ՀՀ-ում և արտերկրում կազմակերպվող գիտաժողովներին							
N	**Կազմակերպման վայրը**	**2011**	**2012**	**2013**	**2014**	**2015**	**Ընդհանուր**
1	Տարածաշրջանային	3	1	1	4		**9**
2	Հանրապետական գիտաժողովներ	3	5	8	11	3	**22**
3	Միջազգային գիտաժողովներ	3	7	10	9	2	**26**
Ընդհանուր		**9**	**13**	**19**	**24**	**5**	**57**

Հպարտորեն պետք է նշել, որ 2011-15թթ. մասնաճյուղում տեղի են ունեցել տարածաշրջանային 9, հանրապետական 5 և միջազգային 2 գիտաժողովներ:

Մասնաճյուղի տնօրենությունը խրախուսման և աջակցման տարբեր ձևերով նպաստել է մասնաճյուղի դասախոսների գիտական գործունեությանը:

Հետազոտական աշխատանքներում կարևորվում են նաև տարածաշրջանի խնդիրները, օրինակ, 2011թ. մասնաճյուղի կողմից կազմակերպվել և իրականացվել են «Տավուշի մարզի հիմնախնդիրների զարգացման հեռանկարները» թեմայով գիտաժողով, 2014թ.՝ «Հայաստանի հյուսիս-արևելյան տարածաշրջանի կենսաբազմազանության պահպանության հիմնախնդիրները» խորագրով գիտական սեմինար, 2014թ.՝ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից հրատարակված «Տավուշ: Սոցիալ-մշակութային գործընթացներ (Ավանդույթ և արդիականություն)» գրքի շնորհանդեսը, իսկ 2015թ.՝ «ՀՀ սահմանամերձ գոտու ազգաբնակչության հոգեբանամանկավարժական հիմնախնդիրները» թեմայով միջբուհական հանրապետական գիտաժողովը:

Մասնագիտական առանձնահատկությունից ելնելով տարածաշրջանի թեմատիկ ուսումնասիրություններ կատարվել են նաև ավարտական աշխատանքների ձևաչափով: Օրինակ՝ վերջին երեք տարիների կտրվածքով «Անտառագիտություն» ամբիոնի դասախոսների կողմից ղեկավարված 113 ավարտական թեմաներից (առկա և հեռակա) 67-ը նվիրված են եղել Տավուշի մարզին, «Տուրիզմի կառավարում և մշակութաբանություն» ամբիոնում ղեկավարված 59 ավարտական թեմաներից (առկա) 24-ը նվիրվել են տարածաշրջանին: Նշված ամբիոնների դասախոսների կողմից պաշտպանության ներկայացված ատենախոսական երկու թեմաները ևս վերաբերել են Տավուշի մարզի ուսումնասիրությանը:

Կիրառական արվեստի ֆակուլտետը մասնաճյուղի գիտական գործունեության մեջ իր ներդրումն իրականացնում է ցուցահանդեսների, արվեստի տոնավաճառների, ինչպես նաև յուրահատուկ ավարտական աշխատանքների միջոցով: Միայն 2012-15թթ. ընթացքում ֆակուլտետի աշխատակիցները կազմակերպել կամ մասնակցել են շուրջ 79 ցուցահանդեսների, նվիրված ուսանողի օրվան, Եղեռնի 100-ամյակին, Մայրության տոնին, «Դիլիջան»-ի տոնին, «Արաբկիր- Զեյթուն» համայնքի օրվան և այլն:

❖ Հայաստանյան, ԱՊՀ երկրներում և արտասահմանյան միջազգային գիտական հանդեսներում մասնաճյուղի դասախոսների կողմից հրատարակած տարբեր գիտական հրատարակումների քանակը վերջին 5 տարիներին հետևյալն է.

	Մասնագիտական ամսագրի վարկանիշը	2011	2012	2013	2014	2015 (հունիս)	*Ընդամենը*
1	ՀՀ-ում գրախոսվող	83	96	119	53	29	***380***
2	ԱՊՀ երկրներում գրախոսվող	1	2	2	7	2	***14***
3	Օտարերկրյա միջազգային գրախոսվող	1	3	2	1	1	***8***
	Ընդամենը՝	***85***	***101***	***123***	***61***	***32***	***402***

Արտասահմանյան երկրների գիտական հանդեսներում մասնաճյուղի դասավանդողների հրատարակած գիտական աշխատանքների թիվը 2011-2015թթ. կազմել է ընդհանուր հրատարակությունների (402) թվի 5.5% -ը: Ներկայացված աղյուսակը ցույց է տալիս, որ դեռևս սահմանափակ է ԱՊՀ և օտարերկրյա գրախոսվող ամսագրերում հրապարակումների թիվը և հարկավոր է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ԱՊՀ և միջազգային գրախոսվող ամսագրերում գիտական հրապարակումներն ընդլայնելու ուղղությամբ:

❖ Թեև մասնաճյուղում իրականացվում է գիտական գործունեություն, սակայն դեռևս արտասահմանյան գիտահետազոտական կազմակերպություններում դասախոսների գիտական ստաժավորման, մասնաճյուղում նրանց փորձի ակտիվ ներդրման, տեղական և միջազգային դրամաշնորհային տարբեր ծրագրերի մշակման ու իրագործման մեջ մասնագետների մասնակցության, տարբեր գիտաժողովներին մասնակցության աջակցման բավարար մեխանիզմներ չեն գործում, ուղղակի կայքի միջոցով մասնաճյուղը տեղեկատվություն է տալիս հայաստանյան և արտասահմանյան տարբեր գիտական միջոցառումների մասին, նաև ամբիոնների (կամ անհատական) նախաձեռնությամբ մասնաճյուղի դասախոսներն իրենց մասնակցությունն են ունենում ԵՊՀ-ի և ՀՀ հանրապետության այլ բուհերի կողմից կազմակերպվող միջազգային գիտաժողովներին: 2011-2015թթ. ընթացքում մասնաճյուղի դասախոսները մասնակցել են մի շարք միջազգային գիտաժողովների, զեկուցումներով հանդես եկել նաև արտերկրի միջազգային գիտաժողովներում (Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան): Հետազոտությունների միջազգայնացմանը նպաստող կարևոր ձեռքբերումներից է 2014թ. «Հայաստանի տարածաշրջանները հօգուտ եվրասիական ինտեգրման» և 2015թ. «Ղազախստանի և Հայաստանի համագործակցությունը արդի ժամանակաշրջանում» միջազգային համաժողովների կազմակերպումը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում:

Սեփական փորձի ակտիվ ներդրման նախապայմաններ են նաև մասնաճյուղի դասախոսների մասնակցությունը տարբեր միջազգային գիտաժողովների, գիտա-ուսումնական այցերը արտերկրի ուսումնական հաստատություններ և այլն:

Օրինակ, ***2011-2012 ուստարում*** Օտար լեզվի ամբիոնի դասախոսները մասնակցել են ԵՊՀ-ում կայացած «Լեզուն, գրականությունը և արվեստը միջմշակույթային համատեքստում» խորագրով երրորդ միջազգային գիտաժողովին, որտեղ հանդես են եկել զեկուցումներով: Ամբիոնի ֆրանսերեն լեզվի դասախոսները մասնակցել են Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանի ֆրանսերենի ամբիոնի հիմնադրման 75-ամյակին նվիրված չորրորդ միջազգային գիտաժողովին՝ հանդես են եկել «Աշխարհի լեզվական հայելին» խորագրով զեկուցումներով:

Միջազգային համագործակցության ասպարեզում մեծ ներդրում է ունեցել «ֆրանս-հայկական բարեկամության» ասոցիացիան: 2011-2012 ուստարվա ընթացքում ԳՌԵՖ-ի ներկայացուցիչներն իրենց գարնանային առաքելության շրջանակներում մանկավարժական վերապատրաստումներ են իրականացրել համալսարանում:

Կազմակերպվել է հանդիպում Ֆրանսիայի Վալանս քաղաքի տեխնոլոգիական համալսարանի ներկայացուցիչների հետ, և երկու բուհերի միջև կնքվել է փոխհամագործակցության պայմանագիր:

2012-2013 ուստարում մասնաճյուղը գործնական քայլեր է ձեռնարկել արտերկրի բուհերում ուսանողների և պրոֆեսորական անձնակազմի փոխանակման ծրագրերում ընդգրկվելու ուղղությամբ: Նման հաջողված փորձ է կատարվել Ֆրանսիայի Վալանս քաղաքի տեխնոլոգիական համալսարանի հետ համագործակցության շրջանակներում. մասնաճյուղի մեկ դասախոս և 5 ուսանողներ մեկամսյա վերապատրաստման դասընթացներ են անցել Վալանսում՝ ստանալով համապատասխան հավաստագրեր: ՀՀ ԿԳ նախարարության և ՀՀ ֆրանսիայի դեսպանատան աջակցությամբ շարունակվել է համագործակցությունը ֆրանսիական ԳՌԵՖի հետ, որոնց միջոցով օտար լեզուների ամբիոնը համալրվել է արժեքավոր բուհական դասագրքերով և մեթոդական ուղեցույցներով:

2013-2014 ուստարում ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի «Թարգմանության տեսության և պրակտիկայի» ամբիոնի հիմնադրման 5 - ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովին մասնակցել է Օտար լեզուների ամբիոնի չորս դասախոս, ովքեր հանդես են եկել գիտական զեկուցումներով:

2013-14 ուստարում Տնտեսագիտության ֆակուլտետի «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի դասախոս Պ. Ասիլբեկյանը որպես մասնագետ այցելել է Գերմանիա և մասնակցել Տավուշի մարզպետարանի կողմից իրականացվող «Հարավային Կովկասի երկրների համագործակցություն» ծրագրի շրջանակում Գերմանիայի Դաշնության Ռեյլանդ Պֆալց երկրամասում կազմակերպված թափոնների վերամշակման և էկոլոգիական դաստիարակության սեմինար պարապմունքներին:

2014-2015 ուստարում Օտար լեզուների ամբիոնի մի շարք դասախոսներ մասնակցել են Հայաստանում Բրիտանական Խորհրդի կողմից նախաձեռնած մի շարք միջոցառումների, այդ թվում՝ «Պահանջիր ավելին, որ դարձնես քերականական դասն ավելի աշխույժ», «Դասարանի կառավարման հմտություններ (Ջոն Սկրավեներ)» վերապատրաստմանը և «Ընդհանրական կապեր» գիտաժողովին:

Մասնաճյուղն իրականացրել և շարունակում է իրականացնել մի շարք միջազգային ***համագործակցային ծրագրեր***, որոնք ընդգրկում են աջակցման տարբեր ձևեր՝ վերապատրաստման դասընթացներ, դասընթացներ ուսանողների համար, արժեքավոր բուհական դասագրքերի և մեթոդական ուղեցույցների տրամադրում, բարձր կուրսերի ուսանողների պարբերաբար այցելություններ ու մասնագիտական գործնական պարապմունքներ և այլն: Այդ նպատակով հաճախակի մասնաճյուղում իրականացվում են հանդիպումներ արտասահմանցի անվանի գործիչների, գիտնականների, բուհերի ղեկավարների հետ և այլն:

Օրինակ՝

- 2013թ. ապրիլին հայագիտության ու գրականագիտության անվանի ներկայացուցիչներ ֆրանսիացի հայագետ Ժան-Պիեռ Մահենի, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսորներ Հ.Էդոյանի (բանաստեղծ), Ավ.Իսահակյանի, Զ.Ավետիսյանի, Վլ.Կիրակոսյանի, Մ.Գիլավյանի, Ս.Աբրահամյանի, բան. գիտ. դոկտոր, դոցենտ Վ.Դևրիկյանի, բան. գիտ. թեկն. Հր.Սարիբեկյանի այցը մասնաճյուղ,
- 2013թ. մայիսին Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեյիսի՝ տնտեսական հարցերով խորհրդական Ռըզա Մուստաֆայի

ուղեկցությամբ այցը մասնաճյուղ, դեսպանը խոստացել է օժանդակել մասնաճյուղին՝ ստեղծելու պարսկերենի ուսուցման ժամանակակից կենտրոն:

- 2013թ. օգոստոսին ՀՕՄ-ի ատենապետուհի ու Ֆրանսիայում գործող Հայ օգնության միության (ՀՕՄ) դպրոցի պատասխանատու Էլիզաբեթ Ալաշյանի և ուսուցչուհի Թամար Ստեփանյանի ուղեկցությամբ դպրոցի աշակերտների այցը մասնաճյուղ, որի նպատակն էր փոխադարձ այցերի միջոցով ամրապնդել Հայաստանի և սփյուռքի միջև կապը՝ մասնավորապես մշակույթի ոլորտում: Իջևանը պատահական չի ընտրված, քանի որ Տավուշի մարզկենտրոնը և ֆրանսիայի Վալանս քաղաքը քույր քաղաքներ են:
- 2013թ. Բավարիայի Այխշտետ Ինգոլշտադ համալսարանի դոկտոր, պրոֆեսոր Հարալդ Պեխլաները և նույն համալսարանի տուրիզմի բաժնի մագիստրատուրայի առաջին կուրսի մի խումբ ուսանողների այցը մասնաճյուղ: Նրանց ուղեկցում էին Գերմանիայի Միջազգային Համագործակցության (GIZ) «Քաղաքների ցանց Հարավային Կովկասում» նախաձեռնության շրջանակներում Տավուշի մարզի ու Ռեգենի տարածաշրջանի միջև համագործակցության գերմանական կողմի գործընկերներ Հերբերթ Ուննաշը, Սուսաննե Վագները և Ռեգինա Քաուշինգերը: Այցելության նպատակը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և Ռեգենի տարածաշրջանի բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցության ուղղությամբ նախնական քայլեր ձեռնարկելն էր:
- 2014թ. ապրիլին Մոսկվայից հրավիրված ՀՀ ժող. վարպետ Յու. Ս. Հովսեփյանի այցը մասնաճյուղ, որի ընթացքում նա անց է կացրել ավանդական գոբելենագործության վարպետության դասեր:
- 2015թ. սեպտեմբերին Վալանսի փոխքաղաքապետի գլխավորությամբ Վալանսի պատվիրակության ներկայացուցիչների այցը մասնաճյուղ, որի ընթացքում քննարկվել են մասնաճյուղում ֆրանսերեն լեզվի ուսուցման, ուսանողների փոխանակման, դասընթացներ ու դասալսումներ կազմակերպելու վերաբերյալ մի շարք հարցեր: Առաջարկվել է 2016թ. գարնանը Իջևանի քույր քաղաք Վալանս մեկնող պատվիրակության կազմում ընդգրկել մասնաճյուղից ներկայացուցիչներ, հետագայում կնքել համաձայնության հուշագիր:

❖ Կարևորելով ուսումնառողների և դասավանդողների մասնակցությունը միջազգային գիտական և գիտատեխնիկական նախագծերին ու դրամաշնորհներին, մասնաճյուղը տրամադրում է անհրաժեշտ տեղեկատվություն միջազգային դրամաշնորհային ծրագրերի և գիտական նախագծերի մասնակցության վերաբերյալ, օժանդակում դրանց հայտադիմումների ձևակերպմանը: 2011-2015թթ. ընթացքում մասնաճյուղի դասախոսները թեև քիչ թվաքանակով (հիմնականում ԵՊՀ-ից հրավիրված) ընդգրկվել են արտասահմանյան մի շարք դրամաշնորհային ծրագրերում.

- «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնի պրոֆեսոր, տ.գ.դ. Հ.Մարզպանյանը և ասիստենտ, տ.գ.թ. Գ.Սիրոյանը 2012թ. հոկտեմբերից մինչև 2014թ. նոյեմբերն ընգրկված են եղել Շվեյցարիայի Ֆրայբուրգի համալսարանի կողմից միցութային կարգով տրամադրված դրամաշնորհային ծրագրում՝ «Միգրացիայի և մարդկային կապիտալի վերարտադրության փոխառնչությունները ՀՀ-ում» (ASCN) թեմայով: Ծրագրի աշխատանքներում ընդգրկվել են նաև Տնտեսագիտության ֆակուլտետի բարձր կուրսի ուսանողներ՝ իրենց կուրսային աշխատանքերի

համապատասխան թեմատիկայով: Կոլեկտիվ հետազոտության արդյունքներն ամփոփվել են 130 էջանոց մենագրության ձևով: Մենագրությունը խմբագրվել է և թարգմանվել անգլերեն:

- «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոնի ասիստենտ, աշխ.գ.թ., ԵՊՀ-ից համատեղությամբ աշխատող Տ.Սարգսյանը 2012-13թթ. ընդգրկված է եղել 2 արտասահմանյան դրամաշնորհային ծրագրերում: Առաջինը՝ Հունգարիայի գիտությունների ակադեմիայի աշխարհագրական հետազոտությունների ինստիտուտի միջազգային վիշեգրադյան հիմնադրամի կողմից մրցութային կարգով տրամադրված «Երևանի բնակելի թաղամասերում բնակության միջավայրի վիճակի ուսումնասիրություն» (11210038) թեմայով դրամաշնորհային ծրագիրն էր: Այդ փոքր դրամաշնորհի շրջանակներում ուսանողների ներգրավմամբ իրականացվել են դաշտային հետազոտություններ Երևան քաղաքում: Երկրորդը՝ Եվրամիության TEMPUS ծրագրի և Յադեի համալսարանի (Գերմանիա) «Զբոսաշրջության կայուն կառավարման ոլորտում մագիստրոսական միջազգային առարկայական ծրագրերի և ուսումնական պլանների կազմում» (530561, Tempus 1-2012-1-DE) թեմայով դրամաշնորհային ծրագիրը: Այդ ծրագիրն ակնկալել է Հայաստան-Վրաստան-Ադրբեջան համագործակցության շրջանակներում կազմել միջազգային մագիստրոսական կրթական ծրագրեր զբոսաշրջային կրթության ոլորտում:

- 2014-2015 ուստարում «Հայոց լեզվի և գրականության» ամբիոնի դասախոս Վ. Ավագյանը ընդգրկված է եղել համաշխարհային բանկի կողմից իրականացվող TASS-2014 (Trendis in armenistic subjects study) ծրագրի մշակման աշխատանքային խմբում, որը թեստեր է կազմում հայագիտական առարկաներից: Շարունակվում են նույն ամբիոնի դասախոս Գ. Մկրտչյանի մասնակցությամբ ՀՀ ԿԳՆ ԳՊԿ-ի կողմից տրամադրվող ֆինանսական աջակցության շնորհիվ իրականացվող հետազոտության աշխատանքները՝ *№ SCS* 13-6B382 գիտական թեմայի շրջանակներում:

Կարևորելով արտաքին կապերի ընդլայնումը և ԵՊՀ ԻՄ-ում օտարերկրյա ՄՈՒՀ-երի հետ շահավետ համագործակցության հնարավորություններ ստեղծելու, առաջավոր փորձի փոխանակման, համատեղ գիտաժողովներ և սիմպոզիումներ կազմակերպելու, ուսանողների, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի փոխանակման գործընթացը, ինչպես նաև այդ աշխատանքները պլանավորելու և իրականացնելու համար 2015թ. սեպտեմբերին ԵՊՀ ԻՄ–ի կազմում ստեղվծել է «Միջազգային կապերի բաժին»:

❖ Մասնաճյուղի դասախոսների համար գիտական գործունեության աջակցման ամենալավ միջոցը 2010թ.-ից լույս տեսնող «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուն: Հանդեսի խմբագրական խորհրդի կազմում ընդգրկված են մեկ տասնյակից ավել գիտական ճանաչում և վաստակ ունեցող գիտնականներ, հանդեսում տպագրվում են միայն խմբագրական խորհրդի կողմից երաշխավորված և գրախոսված հոդվածները: Այն հնարավորինս բացառում է գրագողությունն ու նպաստում ակադեմիական ազնվությանն ու օբյեկտիվությանը: Այն ունի հումանիտար ուղղվածություն, և ներառում է նաև ուսումնամեթոդական հոդվածներ: Հանդեսում բացի մասնաճյուղի դասախոսների գիտական և մեթոդական աշխատանքներից տպագրվում են նաև այլ հեղինակների աշխատանքներ, ինչը վկայում է ժողովածուի ճանաչվածության և բարձր հեղինակության մասին.

N	Տարեթիվը	Համարը	Հրատարակությունների ընդհանուր թիվը	Հեղինակներ		
				ԵՊՀ-ի և այլ բուհերի հետ համատեղությամբ աշխա-տողներ	Տեղացիներ	Այլ հեղինակներ
2	2011	№1	18	4	12	2
3	2011	№2	20	3	8	9
4	2011	№3	15	4	7	4
5	2012	№1	16	1	6	9
6	2012	№2	14	2	4	8
	2012	Հավելված	16	7	9	-
7	2012	№3	22	2	9	11
8	2013	№1	28	4	6	18
9	2013	№2	23	2	5	16
10	2013	№3	34	4	7	23
11	2014	№1	32	4	13	15
12	2015	№1	25	2	8	15
Ընդամենը՝			285	50	105	130

Պետք է փաստել, որ վերջին 2 տարիներին տարբեր պատճառներով նվազել է «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուի հրատարակման հաճախականությունը, որը հոդվածների բացակայության խնդիր չէ, այլ ավելի շատ կապված է տեխնիկական խնդիրներից: Այս առումով մասնաճյուղն ունի լուրջ խնդիրներ:

Ռազմավարական այս նպատակի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Առայժմ մասնաճյուղի հիմնական (տեղացի) դասախոսական կազմն ընդգրկված չէ հետազոտական նախագծերում, և հետևաբար չեն իրականացվում նաև միջդիսցիպլինար գիտահետազոտական ծրագրեր:
- Առայժմ ուսանողների հետ պլանավորված գիտահետազոտական աշխատանքներ բավարար չափով չեն իրականացվում:
- Առայժմ չկան արտասահմանյան գիտական հանդեսներում դասախոսների հրապարակումների համար խրախուսման հստակ մեխանիզմներ:
- Առայժմ չեն գործում տեղական և միջազգային դրամաշնորհային ծրագրերի մշակմանն ու իրագործմանը մասնաճյուղի մասնագետների մասնակցության աջակցման մեխանիզմներ:

III. Հանրային ներգրավում և ծառայություններ

Աջակցել տարածաշրջանի հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացին՝ նպաստելով մասնաճյուղի ու նրա գործունեության ճանաչմանն ու արտաքին օժանդակությանը:

Մասնաճյուղը բավականին ձեռքբերումներ ունի տարածաշրջանի հասարակության մտավոր, կրթական, տնտեսական, գիտական և մշակութային առաջընթացի աջակցման գործում, որը նրա **3-րդ գերակա նպատակն է**: Այս նպատակի իրականացման 12 գործողություններից 6-ը լիարժեք իրականացվել են, մասնավորապես՝ ԵՊՀ ԻՄ-ն իր ամբողջ գործունեության վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն ապահովում և թափանցիկ կերպով լուսաբանում է 2011թ. հոկտեմբերից գործող մասնաճյուղի պաշտոնական կայքէջով, համագործակցում է տարբեր լրատվական ծառայությունների հետ և միայն 2014-15թթ. նրանց միջոցով լուսաբանվել են մասնաճյուղի 7 իրադարձություններ, 2012-2014թթ. «Երևանի համալսարան» ամսաթերթում տպագրվել է մասնաճյուղի ուսանողական առօրյային, Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների աշխատանքների ցուցահանդեսներին, մասնաճյուղում կազմակերպված գիտաժողովներին, արտասահմանյան բուհերի ներկայացուցիչների այցերին վերաբերող ***10 հոդված,*** 2011 թվականից պարբերաբար իրականացվում են այցելություններ մարզի դպրոցներ, **2014թ. հոկտեմբերից** Կիրառական արվեստի ֆակուլտետում «Գծանկար», «Գունանկար», «Կոմպոզիցիա» առարկաներից իրականացվում են նախապատրաստական դասընթացներ և այլն:

Խնդիր III ա) Ապահովել հասարակության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում մասնաճյուղի առավելագույնս ներգրավումը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ Հասարակայնության հետ կապերի հետագա զարգացման և հանրային ծրագրերում մասնաճյուղի առավելագույն ներգրավման համար իրականացվել են մի շարք գործընթացներ: Մասնաճյուղի դրական հեղինակության պահպանման և ամրապնդման, նրա հասարակական վարկանիշի բարձրացման նպատակով մասնաճյուղն իրականացնում է տեղեկատվության տարածման և մասնաճյուղի զովազդային-լրատվական, քարոզչական բազմազան գործունեություն՝ դրա համար կիրառելով տարբեր մեխանիզմներ: Մասնաճյուղն ունի հասարակայնության հետ աշխատելու իր PR քաղաքականությունը (27.05.2014):

Մասնաճյուղի տնօրենի, կառուցվածքային ստորաբաժանումների, հասարակական միավորումների (արհբյուրո, ուսանողական գիտական ընկերություն, ուսանողական խորհուրդ և այլն), այլ պաշտոնատար անձանց գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկման աշխատանքները 2012 թվականից համակարգում և իրականացնում է հասարակայնության հետ կապերի և մամուլի պատասխանատուն:

“Facebook” սոցիալական ցանցում գործում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի էջը: Մասնաճյուղի մասին տեղեկատվություն և նկարագրություններ են տպագրվում «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆ», «YEREVAN STAT UNIVERSITY”, «ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ», “IJEVAN” տեղեկագրքերի մեջ, «Սփյուռ» տեղեկատվական կենտրոնի հրատարակած «Հայաստանի դեղին էջեր» ժողովածուում և նրանց ինտերնետ-կայքում: Մասնաճյուղը համագործակցում է 1-ին լրատվականի թղթակիցների հետ և լուսաբանում կատարված կարևոր իրադարձությունները («ԵՊՀ ԻՄ-ի շրջանավարտների խնդիրները արտաքին շահակիցների ուշադրության կենտրոնում» /2014թ. փետրվարի 10/, «Մասնաճյուղում բացվեց «Տավուշ» ռազմահայրենասիրական ակումբը» /2014թ. փետրվարի 24/, «Մասնաճյուղում կայացավ հայ գիտական բարբառագիտության հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով» /2014թ. ապրիլի 25/, «Գրական երաժշտական միջոցառում սահմանային զորամասում» /2014թ. նոյեմբերի 28/ և այլն): Տեղական լրատվական ալիքով նույնպես ներկայացվում են մասնաճյուղում տեղի ունեցած միջոցառումները:

Մասնաճյուղի գործընթացների հասանելիությունն ապահովող մյուս մեխանիզմը **«Երևանի համալսարան» ամսաթերթն** է:

2012-2014թթ. «Երևանի համալսարան» ամսաթերթում տպագրվել է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողական առօրյային, Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողների աշխատանքների ցուցահանդեսներին, մասնաճյուղում կազմակերպված գիտաժողովներին, արտասահմանյան բուհերի ներկայացուցիչների այցերին վերաբերող ***10 հոդված***.

1. «Ուսանողների միջազգային օրը Իջևանի մասնաճյուղում» /N10(2145), նոյեմբեր, 2012, էջ 22/,
2. «Բանակցում էին ԻՄ ուսանողները» / N10(2145), նոյեմբեր, 2012, էջ 22/,
3. «Աշնանային գույներ»-ը աշնանային Իջևանում» / N10(2145), նոյեմբեր, 2012, էջ 28/,
4. «Ուսանողներին հանձնվեցին կրթաթոշակի հավաստագրերը» /N3(2149), մարտ, 2013, էջ 11/,
5. «Ժան-Պիեռ Մահեի այցը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ» / N3(2149), մարտ, 2013, էջ 21/,
6. «Ցուցադրվել են ԵՊՀ ԻՄ ուսանողների աշխատանքները» / N3(2149), մարտ, 2013, էջ 32/,
7. «Տավուշի գույները՝ ուսանողուհու մեկնաբանմամբ» /N5(2151), մայիս, 2013, էջ 32/,
8. «Ես ամեն մարդու մեջ մի գույն տեսնում եմ» /N6-7(2152), հունիս-հուլիս, 2013, էջ 23/,
9. «Ցուցահանդես՝ ավարտական աշխատանքների ներկայացմամբ» /N6-7(2152), հունիս-հուլիս, 2013, էջ 24/,
10. «Հրատապ խնդիր է ՀՀ բարբառային ատլասի ստեղծումը» /N6-7(2161), հունիս-հուլիս, 2014/:

2015թ. մայիսի 3-ին ԵՊՀ ԻՄ-ի «Սերվիս» մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողներն իրենց դասախոսների ուղեկցությամբ ճանաչողական այց են կատարել Վրաստանի մայրաքաղաք: Մասնաճյուղի պատվիրակության այցի մասին Վիրահայոց թեմի մամլո դիվանը չորս լեզուներով (հայերեն, վրացերեն, ռուսերեն և անգլերեն) տեղեկատվություն է տարածել թեմի և «Հայարտան» կայքերում:

❖ ԵՊՀ ԻՄ-ի գործունեության լուսաբանման, թափանցիկության և տեղեկատվության մատչելիության ապահովման համար 2011թ. հոկտեմբերի 1-ից գործում է մասնաճյուղի ինտերնետային կայքը /http://www.ijevan.ysu.am/: Մասնաճյուղը կարևորում է իր գործունեության կանոնակարգումն ու թափանցիկությունը և կայքի միջոցով ապահովում է տնօրենի հրամանների, բոլոր ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի, դիմորդների ընդունելության և ուսանողների ուսումնառության գործընթացի կազմակերպման, մասնաճյուղում որակի ներքին գործընթացների իրականացման, դասախոսների գիտական գործունեության

հրապարակայնությունը և մատչելիությունը: Պաշտոնական կայքում պարբերաբար տեղադրվում են ուսանողական նպաստերից, պետական և ներբուհական կրթաթոշակներից օգտվող, անվանական կրթաթոշակ ստացող ուսանողների ցուցակները, քննաշրջանների գրաֆիկները և արդյունքները, ուսանողների հետ դասախոսների և ուսումնական խորհրդատուների աշխատանքի գրաֆիկները և այլն: Առանձնահատուկ լուսաբանվում են մասնաճյուղի իրադարձությունները, կազմակերպված միջոցառումները, հարցազրույցները, տեղադրվում են հայտարարություններ, ուսանողական կյանքին և միջավայրին վերաբերող նորություններ: Կայքում առկա է նաև հարցեր ուղղելու և պատասխանները ներկայացնելու հնարավորություն: 2012թ. սեպտեմբերից մինչև այժմ տեղադրվել է 33 հարցուպատասխան:

ԵՊՀ ԻՄ-ի տեղեկատվական քաղաքականության իրականացման նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարության, ԵՊՀ-ի պաշտոնական կայքերից ձեռք են բերվում անհրաժեշտ տեղեկություններ և մասնաճյուղի պաշտոնական կայքի միջոցով լուսաբանվում:

Կայքում առանձին բաժնով տեղադրվում են ՀՀ ԲՈՀ-ի կողմից հաստատված «Ակունք» գիտական հոդվածների բոլոր ժողովածուները և գիտական այլ ժողովածուներ, որոնք ապահովում են մասնաճյուղի դասախոսների գիտական աշխատանքների հրապարակայնությունը և նպաստում տարածաշրջանում ու ՀՀ-ում գիտական մտքի զարգացմանը, մասնաճյուղի գովազդմանը: Նույն նպատակն է հետապնդում կայքի առանձին բաժինը շրջանավարտների համար՝ «Մրցույթներ, թափուր հաստիքներ», «Խորհրդատվություն», «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն», «Գրանցում» ենթաբաժիններով, որտեղ պարբերաբար տեղադրվում են համապատասխան նյութեր:

ԵՊՀ ԻՄ-ի պաշտոնական կայքէջի «Ինֆորմացիա» բաժնի «**ԶԼՄ-ները մեր մասին**» էջում տեղադրված են 2010 թվականից մինչ օրս մասնաճյուղի մասին տարբեր ԶԼՄ-ների կողմից հրապարակված **հոդվածներն ու տեսանյութերը**:

Կայքի նորաստեղծ՝ **«Համալսարանականներ»** էջում (2015թ.) զետեղված են մասնաճյուղի աշխատակիցների կենսագրական և գիտական գործունեության մասին տվյալները:

Կայքը պարբերաբար կատարելագործվում է: Մասնաճյուղի էլ.կայքը 2015թ. մարտի 1-ի դրությամբ ունի 154 էջ, տեղադրված է 870 նյութ՝ հայտարարություններ, նորություններ և այլն, 3614 ֆայլ, որոնցից 2327-ը նկարներ են:

Մասնաճյուղի էլ.կայքի վերաբերյալ՝ որպես նրա գործընթացների հրապարակայնության և թափանցիկության ապահովման գլխավոր միջոցի, 2015թ. բուհում անցկացվել են ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից ուսանողների, պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի, շրջանավարտների բավարարվածության հարցումներ, որոնց միջոցով պարզվել է հարցման մասնակիցների կարծիքը կայքի կառուցվածքի, տեղեկատվության ստացման հարմարավետության, լիարժեքության, նորությունների լուսաբանման, կայքի ընդհանուր գրավչության /դիզայնի/ վերաբերյալ:



Ներկայացված դիագրամը ցույց է տալիս, որ հարցման մասնակիցները բավարարված են հատկապես կայքի կառուցվածքից, նրա միջոցով տեղեկատվության ստացումից, նորությունների լուսաբանումից: Իսկ ամենակարևորը, հարցմանը մասնակցած 486 ուսանողների 91%-ը տեղեկացված է մասնաճյուղի էլ.կայքի մասին և նրանց 62%-ը ու պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի 79%-ը հաճախակի է օգտվում կայքից.



❖ Հանրային կապերի (PR-public relations) ոլորտում ԵՊՀ ԻՄ-ի քաղաքականության իրականացման շրջանակներում մասնաճյուղը պարբերաբար բարելավում է տեղեկատվության տարածման ձևերը՝ օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների արդի միջոցները: ԵՊՀ ԻՄ-ի տեղեկատվական քաղաքականության իրականացման նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի պետական համալսարանի և այլ պաշտոնական կայքերից ձեռք են բերվում անհրաժեշտ տեղեկություններ և լուսաբանվում մասնաճյուղի պաշտոնական կայքի միջոցով:

ԵՊՀ ԻՄ-ի հասարակական վարկանիշը բարձրացնելու, նրա գովազդարշավն ընդլայնելու և ակտիվացնելու նպատակով տպագրվել և դպրոցներին, հիմնական գործատուներին ու շահագրգիռ այլ կազմակերպությունների են տրամադրվել.

- ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բուկլետը (2014թ.), որում զետեղված են նրա հիմնադրման, կառուցվածքի, ուսումնամեթոդական և գիտական գործընթացի կազմակերպման, ստորաբաժանումների վերաբերյալ տեղեկություններ:

- կիրառական արվեստի ֆակուլտետի բուկլետը (2014թ.), որում ներկայացված են ոչ միայն ֆակուլտետի մասին տեղեկություններ, այլ զետեղված են նաև ուսանողների արվեստի տարբեր ճյուղեր ներառող հաջողված աշխատանքներ:

- հեռակա ուսուցման բաժնի գովազդային բուկլետը (2015թ.), որում հայերենով և վրացերենով տրված են բաժնի ստեղծման, գործող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկություններ:

Մասնաճյուղը պարբերաբար ապահովում է գործող մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը՝ տարածաշրջանի հանրակրթական հաստատություններին անվճար տրամադրելով ԵՊՀ հրատարակած «Դիմորդի ուղեցույց»-ը, ընթացքի մեջ է մասնաճյուղի վերաբերյալ տեսաֆիլմ նկարելու գործընթացը:

Համաձայն տնօրենության կողմից ներկայացված պահանջի ձեռնարկվել են միջոցառումներ մասնաճյուղի աշխատակիցների վերաբերյալ անձնական տվյալների էլեկտրոնային բազա ստեղծելու համար:

Երեք տարիների ընթացքում պրոֆեսորադասախոսական համակազմից պահանջվել և նրանց անձնական գործերին է կցվել հաշվետու ժամանակահատվածում կատարած գիտամեթոդական գործունեության վերաբերյալ տվյալները:

❖ Մասնաճյուղի գովազդային-լրատվական, քարոզչական և մարքեթինգային բոլոր կարողությունները ուղղված են նրա հասարակական վարկանիշի բարձրացմանը և դրան նպատակաուղղված կարևոր աշխատանքներից է դիմորդների հետ աշխատանքը: 2011 թվականից պարբերաբար իրականացվում են այցելություններ մարզի դպրոցներ: 2012թ. սեպտեմբերից այդ գործընթացը կազմակերպվում և իրականցվում է Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկայի կազմակերպման բաժնի կողմից: Այցելություններ են իրականացվել մարզի շուրջ 24 դպրոցներ, ապագա դիմորդներին ներկայացվել են մասնաճյուղի մասնագիտությունները, ընդունելության կարգը և նրանց հետագա մասնագիտական աճը, աշխատանքի հնարավորությունները, իսկ մասնաճյուղի դասախոսներն անց են կացրել մասնագիտական դասընթացներ:

Ուսանողներն ակտիվ մասնակցում են գիտաժողովների, հանրապետական և տեղական տարբեր ստեղծագործական, գրական, սպորտային միջոցառումների և ակցիաների:

❖ Մասնաճյուղի գործունեությունը տարածաշրջանի հասարակության արդի պահանջմունքներին համահունչ դարձնելու նպատակով մասնաճյուղի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությունները կատարվում են միայն արտաքին շահակիցների՝ գործատուների, շրջանում անցկացվող մասնաճյուղի շրջանավարտների և պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ հարցումների միջոցով: Հարկ է նշել, որ բուհից դուրս մասնաճյուղի շրջանավարտների և պրակտիկանտների լավագույն դրսևորումներն ակնհայտորեն բարձրացնում են մասնաճյուղի վարկանիշը և ձևավորում հանրային կարծիք, իսկ նրանց այդ դրսևորումների

ձևավորողը մասնաճյուղն է՝ իր բարձրակարգ պրոֆեսորադասախոսական կազմով, ուսումնական գործընթացի հոգատար կազմակերպիչներով, ...:

Ըստ հարցման տվյալների, տարբեր կազմակերպություններում աշխատող մասնաճյուղի շրջանավարտների 65.7%-ն աշխատում է իր մասնագիտությամբ և նրանցից 79.7%-ը աշխատանքի է ընդունվել մրցույթով:

Արտաքին շահակիցները բարձր են գնահատում մեր շրջանավարտների միջավայրում, թիմում աշխատելու և գործելու կարողությունները (միջին միավորը՝ 4.33), նրանց պատասխանատվությունը աշխատանքի նկատմամբ (միջին միավորը՝ 4.43), գործընկերներին գնահատելու ու նրանց օգտակար լինելու կարողությունները (միջին միավորը՝ 4.38), հաղորդակցվելու և կազմակերպչական կարողությունները (միջին միավորը համապատասխանաբար՝ 4.57 և 4.38) և այլն: Բոլոր այս չափանիշներով 2014-15 ուստարվա արդյունքերն էապես բարձր են նախորդ ուստարիների արդյունքներից.

Թիվ	Շրջանավարտների ընդհանրական կարողությունները.	Միջին միավորը		
		2013թ.	2014թ.	2015թ.
1	հաղորդակցվելու կարողությունները		3,75	4,57
2	կազմակերպչական կարողությունները		3,75	4,38
3	տարբեր իրավիճակներում արագ և ճիշտ կողմնորոշվելու կարողությունները	3,06	3,52	3,95
4	աշխատանքային պատասխանատվությունը		3,88	4,43
5	թիմային աշխատանք կատարելու ունակությունները	3,5	3,87	4,33
6	գործընկերներին գնահատելու և նրանց օգտակար լինելու կարողությունները		3,87	4,38

Հարցման արդյունքները վկայում են, որ մասնաճյուղի հեղինակությունը տարածաշրջանում (4.57) և հարցմանը մասնակցած կազմակերպություններում (4.38) լավ է և բարձրացել է նախորդ ուստարիների համեմատ: Եվ հարցմանը մասնակցած արտաքին շահակիցների 94.59%-ը խորհուրդ կտա իր մերձավորներին և ընկերներին դիմել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ:

Ուսումնական պլաններին համապատասխան մասնաճյուղի կողմից կազմակերպվող տարբեր պրակտիկաները մարզի ուսումնական հաստատություններում և կազմակերպություններում դառնում է մասնաճյուղի գովազդման, հանրությանը նրան ներկայացնելու, իսկ պրակտիկանտների արդյունավետ դրսևորումները՝ նրա վարկանիշի բարձրացման ուղղակի միջոց: Ընդ որում, պետք է փաստել, որ մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ դպրոցների ուսուցիչների գնահատականները գոհացուցիչ են, որի մասին նշվել է վերևում, մասնավորապես, նրանք բավարարված են մասնագիտական գործընթացում մեր ուսանողների ստեղծագործական մոտեցման մակարդակից, որը էապես բարելավվել է.



իսկ ամենակարևորը, նրանք բավարարված են մեր ուսանողների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաներ կիրառելու կարողություններից.



Հավաքագրելով տվյալներ նոր մասնագիտությունների պահանջարկի վերաբերյալ և գնահատելով կոնկրետ մասնագիտության իրականացման իր հնարավորություններն ու որակավորումների հետ կապված պետական որոշումները մասնաճյուղը յուրաքանչյուր ընթացիկ ուստարում պլանավորում և հաստատում է հաջորդ ուստարվա ընդունելության մասնագիտությունների ցանկը: Նշենք, որ շահակիցների հետաքրքիր, ուսման որակի բարելավմանն ուղղված և տարածաշրջանի պահանջարկի բավարարմանը միտված առաջարկություններն իրենց անդրադարձն են ունենում մասնագիտությունների վերանայման և նոր մասնագիտությունների բացման, դասընթացների ծրագրերի վերանայման և գործնական ու պրակտիկ աշխատանքների արդյունավետ իրականացման գործընթացում:

Վերջին 5 տարիների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ տարածաշրջանում մեծ պահանջարկ կա սոցիալական աշխատողի, հատուկ մանկավարժի ու հոգեբանի, տարրական դասարանների ուսուցչի, ռուսաց լեզվի և գրականության ուսուցչի և այլն: Նոր մասնագիտությունների վերաբերյալ շահակիցների առաջարկությունների ցանկն ունի հետևյալ պատկերը (մասնակի).

Թիվ	2011	2013	2014	2015
1	• սոցիալական աշխատանք, • հատուկ մանկավարժություն, • լոգոպեդիա • Սոցիոլոգիա	• մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա	սոցիալական աշխատող	• սոցիալական աշխատանք • հատուկ մանկավարժություն • լոգոպեդիա, • սուրդոմանկավարժություն • ներառական կրթության նեղ մասնագետներ, • սոցիալական մանկավարժություն • հոգեբան (ռազմական)
2	տարրական դասարանների ուսուցիչ	տարրական դասարանների ուսուցիչ		տարրական դասարանների ուսուցիչ
3	ռ.լեզու և գրականություն	ռ.լեզու և գրականություն	ռ.լեզու և գրականություն	ռ.լեզու և գրականություն
4		աշխարհագրություն	աշխարհագրություն	աշխարհագրություն
5		• Իրավաբանություն • իրավագիտություն • օրենք և իրավունք • միջազգային հարաբերություններ	• Իրավաբանություն, • իրավագիտություն	• իրավաբանություն • տնտեսագետ-իրավագետ • միջազգային հարաբերություններ,
6		• հաշվապահ-տնտեսագետ		• հանրային կառավարում, • մենեջմենթ • տնտեսագետ-մենեջմենթ
7		• քիմիա	• կենսաքիմիա, • քիմիա, • կենսաբանություն	դեղագիտություն

Մասնաճյուղը պատրաստվում է 2016-17 ուստարում կատարել ընդունելություն «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» և «Համակարգչային գրաֆիկա» նոր մասնագիտություններով, որոնց կրթական ծրագրերի կազմման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Խնդիր III բ) Զարգացնել հարատև ուսումնառության համակարգը մասնաճյուղում՝ սոցիալական պատվերին համահունչ:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ Մասնաճյուղը հարատև կրթության հատուկ քաղաքականություն չի վարում, առաջնորդվում է հարատև կրթության շրջանակներում ԵՊՀ-ի համապատասխան գործընթացներով: Մասնաճյուղում արտաքին շահակիցների շրջանում անցկացրած հարցումների ժամանակ նրանց կողմից ներկայացված առաջարկությունների միջոցով ուսումնասիրվել է համալսարանական մի շարք մասնագիտությունների պահանջարկը: Քանի որ դպրոցներում իրականացվում է ներառական կրթություն, մարզում կան երեխայի զարգացման, վերականգնողական կենտրոններ, հետևաբար կա պրակտիկ հոգեբանների, սոցիալական աշխատողների, հատուկ մանկավարժների պահանջարկ: Բանկերի բազմաթիվ մասնաճյուղերի առկայությունը մարզի քաղաքներում պահանջում է հաշվապահներ, վարկային աշխատողներ, համակարգչային լավ իմացությամբ տնտեսագետներ և այլն: Մասնաճյուղը համագործակցում է

մարզի զբաղվածության կենտրոնի հետ, նախատեսվում է գործազուրկների համար կազմակերպել համապատասխան դասընթացներ:

Միևնույն ժամանակ կայքում պարբերաբար տեղադրվում են հարատև կրթության տարատեսակ և տարաբնույթ հայտարարություններ:

Կրեդիտային համակարգով դասախոսների վերապատրաստման հնգամյա ծրագիրը կրթության որակի ապահովման գործընթացների տարածումն է հարատև ուսումնառության ծրագրի շրջանակներում:

Ռազմավարական այս նպատակի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Դեռևս չի մշակվել և իրագործվել հարատև կրթության հայեցակարգը:
- Բավարար չափով չի ուսումնասիրվել հարատև կրթության պահանջարկն ըստ թիրախային խմբերի և առաջարկը՝ ըստ մասնագիտությունների:
- Դեռևս չեն կազմակերպվել մասնաճյուղի վերաբերյալ հանրային կարծիքի համակողմանի ուսումնասիրություններ՝ նրա գործունեությունը տարածաշրջանի հասարակության արդի պահանջմունքներին համահունչ դարձնելու նպատակով:
- Հանրային կապերի ոլորտում ԵՊՀ ԻՄ-ի գործողությունների համապարփակ մոնիթորինգը և համապատասխան զեկույցների ներկայացումը պարբերական բնույթ չի կրել, իրականացվել է տարերայնորեն:
- Միասնական մասնագիտացված մարքեթինգային ծառայություն չի ստեղծվել:

Աջակցող 3 նպատակների կատարողականի վերաբերյալ նշենք, որ մասնաճյուղն իր ռազմավարության շրջանակներում հաշվետու ժամանակահատվածում պլանավորել էր ուսումնական գործընթացում ներգրավել որակյալ կադրային ներուժ, ստեղծել որակյալ ենթակառուցվածքներ, մատուցել որակյալ ծառայություններ: Այս նպատակներին հասնելու համար իրականացրել է պլանավորված գործողությունների համապատասխանաբար՝ 73%-ը, 77%-ը և 100%-ը: Ուրախալի փաստ է, որ դասախոսական աշխատանքում այժմ ներգրավված են 3 պրոֆեսոր, 33 դոցենտ (29.2%), 45 ասիստենտ և 32 դասախոս (68%), որոնցից գիտական աստիճանով՝ 3 դոկտոր և 54 թեկնածու: Ընդ որում՝ 2011-15թթ. ընթացքում մասնաճյուղի 1 դասախոս պաշտպանել է դոկտորական, 24-ը՝ թեկնածուական ատենախոսություն, նրանցից 13-ը տեղացի դասախոսներ են, որոնցից 8-ը մասնաճյուղի նախկին շրջանավարտներ են: Նշենք, որ թեկնածուական թեզ պաշտպանածների 64%-ը երիտասարդ դասախոսներ են: Ստեղծվել են տեխնիկապես հագեցած լսարաններ, լաբորատորիաներ, համակարգչային սրահներ, արվեստանոցներ և այլն, համապատասխան լսարանները և աշխատատեղերը հագեցվել են 50 տպող սարքերով (26 բազմաֆունկցիոնալ, 22 տպիչ և 2 գունավոր բազմաֆունկցիոնալ), գործում է ներքին համակարգչային ցանց, 2 Wi-Fi անկյուն և նույն հնարավորությամբ նիստերի դահլիճ: Ընթացքի մեջ է «Հոգեբանություն», «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտությունների համար ուսումնական լաբորատորիաների ձևավորումը: Մասնաճյուղում ստեղծվել է շրջանավարտների «Կադրային բանկ», 2014թ. հունվարին ստեղծվել է ԵՊՀ ԻՄ-ի գրադարանային խորհուրդը և այլն:

IV. Որակյալ կադրային ներուժ

Ներգրավել բարձրորակ դասախոսական կազմ՝ նրանց տրամադրելով շարունակական կատերալագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր:

Խնդիր IV ա) Համալրել և բարելավել դասախոսական կազմը՝ որակի հավաստման համալսարանական չափանիշներին համապատասխան:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ Դասախոսական կազմի համալրման և բարելավման նպատակով մասնաճյուղում որոշակի մեխանիզմների միջոցով իրականացվում է բազմաչափ գնահատում, անհրաժեշտության դեպքում մշակվում, կամ փնտրվում են նոր մեխանիզմներ դասախոսական կազմի մասնագիտական պատրաստության, մանկավարժական վարպետության, անձնային որակների և տարիքային կազմի պարբերաբար գնահատման համար:

2009 թվականից իրականացվում է մասնաճյուղի գործունեության առանցքային ցուցանիշների գնահատում (ԳԱՑ), որի երկրորդ բաժնի մի շարք ցուցանիշների համալրումը

ներկայացնում է մասնաճյուղի դասախոսական կազմի գնահատումը տարբեր ասպեկտներից, մասնավորապես հիմնական դասախոսական կազմի բաշխումն ըստ պաշտոնների և գիտակարգերի, ըստ աշխատանքային պայմանագրի ձևերի, տարեկան համալրման, տարիքային բաշխման, սեռային հաշվեկշռի, որակավորման բարձրացում անցածների թվի, ուսանող դասախոս հարաբերակցության, տարեկան ուսումնական բեռնվածության, հրատարակումների քանակի և ուսանողական հարցման ֆակուլտետային արդյունքների:

Դրանցից մի քանիսը ներկայացված է տարբեր ցուցանիշներից վերցված հետևյալ հավաքական աղյուսակում.

Ցուցանիշներ	2011-12	2012-13	2013-14	2014-15
Ընդհանուր դասախոսական կազմը	121	117	129	111
Դասախոսական կազմի համալրումը	-12	-2	10	-18
Մինչև 35 տարեկան	16	21	25	27
35-65 տարեկան	73	68	80	75
65-ից բարձր	10	8	10	9
Միջին տարիքը	49,1	48	48	49
Իգական սեռի հաշվեկշիռը	51,5%	53,6%	57%	54%

Դասախոսական կազմի մասնագիտական պատրաստության, մանկավարժական վարպետության, անձնային որակների գնահատման մեխանիզմներ են դասալսումների տարբեր ձևերը և բաց դասերը, «Դասընթացի փաթեթ»-ի միջոցով ինքնագնահատումը (գործընթացը սկսված է 2014թ. սեպտեմբերից):

❖ Մասնաճյուղի կադրային ապահովվածությունն ըստ գիտակարգերի՝ 3 գիտությունների դոկտոր, 67 գիտությունների թեկնածու, ընդ որում՝ գիտական աստիճան ունեցող դասախոսների հաշվեկշիռը մոտենում է 50%-ին, և վերջին 5 տարիներին թեկնածուական ատենախոսություն են պաշտպանել 26, իսկ դոկտորական ատենախոսություն՝ 1 դասախոս:

2015-16 ուստարում մասնաճյուղի ամբիոնների ապահովվածությունը պրոֆեսորադասախոսական անձնակազմով (ըստ պաշտոնների և գիտական աստիճանների) ունեցել է հետևյալ պատկերը (01.01.2016թ. դրությամբ).

Թիվ	Ամբիոնի անունը	ՊԴԱ քանակն ըստ պաշտոնների					ՊԴԱ թիվն ըստ գիտակարգերի և նրանց հաշվեկշիռը (%)				
		պրոֆեսոր	դոցենտ	ասիստենտ	դաս./հայց.	Ընդամենը	ֆմգդ	ֆմգթ	տեխգթ	այլ	
Բնական գիտությունների ֆակուլտետ											
1.	Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության		12	6	4	22		10	1	5	73%
2.	Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների		3	3	3	9		2	2		45%
Ընդամենը ֆակուլտետում՝			**15**	**9**	**7**	**31**	գդ	գթ 20			**65%**

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ											
3.	Հայոց պատմության և քաղաքագիտության	2	5	6	6/1	19/1	պգդ 2	պգթ 6	քգթ 1		47%
4.	Հայոց լեզվի և գրականության		3	8	1/1	12/1	բգդ 	բգթ 11			92%
5.	Մանկավարժության և հոգեբանության		4	3	5/2	12/2	մգդ 	մգթ 1	հգթ 3	այլ 1	42%
6.	Օտար լեզուների		4	7	18	29	բգդ 	բգթ 7			24%
Ընդամենը ֆակուլտետում՝		**2**	**16**	**24**	**30/4**	**72**	**գդ** **2**	**գթ** **31**			**46%**
Տնտեսագիտության ֆակուլտետ											
7.	Ընդհանուր տնտեսագիտության	1	4	3	7/3	15/3	տգդ 1	տգթ 6	տեխգթ 1		53%
8.	Տուրիզմի կառավարման և մշակութաբանության		4	7	1	12	աշխ.գդ 	աշխ.գթ 3	պգթ 2	այլ 2	58%
Ընդամենը ֆակուլտետում՝		**1**	**8**	**10**	**8/3**	**27**	**գդ** **1**	**գթ** **14**			**56%**
Կիրառական արվեստի ֆակուլտետ											
9.	Գծանկարի, գունանկարի և քանդակի		1	5		6	ՆՄ անդ. 5	ԴՄ անդ. 1			-
10.	Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի			5	2	7	ՆՄ անդ. 4	ԴՄ անդ. 	արվ. գ.թ. 1	այլ 1	29%
Ընդամենը ֆակուլտետում՝			**1**	**10**	**2**	**13**	**ՆՄ անդ.** **9**	**ԴՄ անդ.** **1**	**գթ** **2**		**15%**
Համամասնաճյուղային ամբիոն											
11.	Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի			1	2	3	Սպ. միջ. վարպետ 1				
Ընդամենը մասնաճյուղում՝		**3**	**40**	**54**	**49**	**146**	**գդ** **3**	**գթ** **67**			**48%**

❖ Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հիմնական պահանջները ձևակերպված են ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված կրթական ծրագրերին համապատասխանող բակալավրատի կրթական չափորոշիչներում, իսկ պրոֆեսորադասախոսական պաշտոնների տեղակալումն իրականացվում է մրցութային ընտրության միջոցով, որը սահմանվում է «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքներով, մասնաճյուղի կանոնադրությամբ, «ԵՊՀ Իջևանի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման» և ներքին իրավական այլ ակտերով: Մասնաճյուղում պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման կարգը գործում է 2009թ.-ից:

Մասնաճյուղում պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի համալրումը պայմանավորված է մասնաճյուղի առաքելության և կրթական ծրագրերի նպատակները պատշաճորեն իրականացնելու անհրաժեշտությամբ, և ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի պաշտոնների տեղակալման կարգին համապատասխան գործում է մրցութային հանձնաժողով:

Դասախոսական կազմի համալրումն իրականացվում է թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթին դիմած դասախոսների համապատասխան մասնագիտական որակների գնահատմամբ, կամ ուղղակի աշխատանքի են հրավիրվում ոլորտի բարձր որակավորում ունեցող մասնագետներ: Իսկ դասախոսների հետ կնքվող աշխատանքային պայմանագրի տարբեր ձևերը՝ հիմնական, ներքին և արտաքին համատեղությամբ, ժամավճարային, հնարավորություն են տալիս դասախոսական կազմը համալրել որակյալ կադրերով: Մասնաճյուղում գործում է նաև փորձաշրջանով աշխատանքի ընդունելու սկզբունքը, որը հնարավորություն է տալիս 3-4 ամիսների ընթացքում պարզելու աշխատակցի մասնագիտական կոմպետեցիաները և նոր միայն կնքել աշխատանքային պայմանագիր:

Մասնաճյուղում աշխատանքի ընդունման և հեռացման գործող ընթացակարգերի շնորհիվ ավելի քան 20-ամյա գործունեության ընթացքում, դատական կարգով չի լուծվել կամ վերականգնվել աշխատանքային ոչ մի պայմանագիր:

Նշենք նաև, որ մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը փորձառու ու առաջատար մասնագետներով ապահովելու գործում մասնաճյուղին մեծապես աջակցում են ԵՊՀ –ի համապատասխան ամբիոնները՝ մասնաճյուղ ուղարկելով մրցութային կարգով իրենց մոտ աշխատանքի անցած լավագույն կադրերին:

2011թ.-ից մասնաճյուղում իրականացվում է «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման» կրթագիտական ծրագիրը, որը համալսարանական կրթության որակի ներքին ապահովման համակարգի կարևորագույն կառուցամաս է և պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործման արդի գործընթաց:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ղեկավարությունը պարբերաբար գնահատում է իր պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ աշխատակազմի մասնագիտական որակներն ու աշխատանքները, կազմակերպում վերապատրաստման դասընթացներ, անցկացնում համապատասխան ատեստավորում, կիրառում աշխատակիցների առաջխաղացումը և կայունությունը ապահովող խրախուսման քաղաքականություն:

Սակայն պետք է նշել, որ դասախոսական կազմի ընտրության, պաշտոնների տեղակալման և առաջընթացի ապահովման փորձի հետ մեկտեղ ինչպես մայր բուհում, այնպես էլ մասնաճյուղում դեռևս չկան ըստ կրթական ծրագրերի դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող կոնկրետ պահանջներ, հստակ մշակված չափանիշներ: Վերոնշյալ կարգի ընդհանուր դրույթներից ելնելով նախատեսվում է, որ ԵՊՀ ամբիոնները պետք է մշակեն իրենց կոնկրետ կրթական ծրագրերը սպասարկող դասախոսների մասնագիտական գիտելիքներին և կարողություններին ներկայացվող հստակ պահանջներ, որոնց համար հիմք են հանդիսանալու տվյալ ծրագրի կրթական վերջնարդյունքները:

❖ Մասնաճյուղում մշտապես գործում են դասախոսների ինքնակրթության խրախուսման տարբեր մեխանիզմներ.

- գործուղումներ տարբեր վերապատրաստման դասընթացների (2013թ. «Մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով եռափուլ դասընթացներ ՈԱԱԿ-ում (6), 2014թ. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի կողմից կազմակերպված ամառային դպրոց՝ «Քանակական հետազոտության մեթոդաբանություն» թեմայով (2 աշխատակից),

- պարգևատրումներ գիտությամբ զբաղվող դասախոսներին,

- աջակցություն դասախոսներին ուսումնական և մեթոդական ձեռնարկների անվճար հրատարակության գործում,

-աջակցություն դասախոսների հրատարակած գրքերի շնորհանդեսների կազմակերպման գործում,

- «Ակունք» գիտական հոդվածների ժողովածուում դասախոսների հոդվածների անվճար տպագրում:

Հրավիրված և տեղացի մասնագետների ուժերով պարբերաբար կազմակերպվում են վերապատրաստումներ՝ կրթական նոր տեխնոլոգիաներին տիրապետելու և ուսումնական գործընթացում դրանք ներդնելու համար:

Դասավանդողների մեծամասնությունը դասերն իրականացնում է նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ (շնորհանդեսներ, on-line թեստեր և այլն): Տնտեսագիտության և Բնական գիտությունների ֆակուլտետներում որոշ դասընթացներ անց են կացվում ռուսաց լեզվով:

Մասնաճյուղի կայքէջում պարբերաբար տեղադրվում են Կրթության և գիտության նախարարության կողմից կրթության բնագավառում իրականացվող բոլոր նորագույն ծրագրերի մասին հայտարարությունները:

❖ 2011 թվականից մասնաճյուղի հիմնական դասախոսների համար ապահովվում է ԵՊՀ-ի կողմից իրականցվող «Կրեդիտային համակարգով դասախոսների որակավորման բարձրացման» վերապատրաստման ծրագիրը: Սահմանված կրեդիտները հավաքելու համար մասնաճյուղում Մայր բուհի աջակցությամբ ու սեփական նախաձեռնությամբ պարբերաբար իրականացվում են վերապատրաստման դասընթացներ: Ծրագիրը դասախոսին հնարավորություն է տալիս բարձրացնելու որակավորումը ուսուցման անհատական պլանով՝ կրթական և հետազոտական մոդուլների հարաբերակցության ընտրությամբ ապահովելով նախընտրելի կոմպետենցիաների և անձնային որակների շարունակական զարգացումը: Ծրագրի կրթական մոդուլները ներառում են դասախոսի պատրաստության բոլոր կողմերը՝ ակադեմիական անգլերեն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, մանկավարժական-հոգեբանական և մասնագիտական պատրաստություն՝ որակի հավաստման միջազգային չափանիշներին համապատասխան: 2011-15թթ. ժամանակահատվածում դասախոսների որակավորման բարձրացման վերապատրաստման ծրագրով կատարված աշխատանքների ամփոփման արդյունքում մասնաճյուղն ունի հետևյալ ձեռքբերումները.

Կրթա-մաս	Մոդուլի անունը	Դասընթացի անունը	Դասախոսների թիվը
Ա	1.Տեղեկատվական տեխնոլոգիաներ	«Լսարանային ցուցադրությունների պատրաստում» (PowerPoint)	60
		«Համակարգչային գրագիտություն» (Կիրառական ծրագրեր՝ Word, Excel, InternetExplorer)	60
		Ուսուցողական Case-փաթեթ	1
		Անգլերենը ակադեմիական միջավայրում	4
Ա	2.Մանկավարժական-հոգեբանական պատրաստություն	«Դասավանդման ուսումնառության և գնահատման ժամանակակից մեթոդներ»	72
		«Կրթական ծրագրերի մշակման հիմունքներ»	67
		Մանկավարժական հոգեբանություն	63
Ա	3.Մասնագիտական պատրաստություն	Մասնագիտության արդի հիմնախնդիրներ և այլ մասնագիտական դասընթացներ	5
Ա	4.Որակավորման բարձրացման այլ ձևեր (վերապատրաստում, ստորաբաժանում, ամառային դպրոց)	Վերապատրաստումներ	14
Բ	1.Հրատարակումներ	Գիտական հոդված	503
		Ուսումնամեթոդական աշխատանք	49
		Ուսումնական ձեռնարկ	14
		Դասագիրք	6
		Մենագրություն	18
Բ	2.Զեկուցում համաժողովում	Զեկուցում	42
Բ	3.Ատենախոսության պաշտպանություն	դոկտորական	1
		թեկնածուական	26

Հարկ է նշել, որ մասնաճյուղի ղեկավարությունն աջակցել է դասախոսներին և կրթամաս Ա-ի 5 դասընթացների վերապատրաստումն իրականացվել է տեղում, ապահովելով դասախոսների աշխատանքից չկտրված վերապատրաստումը:

2013 թ. մասնաճյուղի 6 աշխատակիցներ մասնակցել են ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված «Մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով եռափուլ դասընթացներին, նրանցից 3-ը ստացել են Որակի ապահովման գործընթացի աջակցի հավաստագիր:

2013թ. դեկտեմբերից ՄԿՈԱ բաժնի կողմից մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար կազմակերպվում են «Ինչպե՞ս պատրաստել արդյունավետ պրեզենտացիաներ» թեմայով թրեյնինգներ, որի ժամանակ տրվում են դասավանդման և ուսումնառության նոր մեթոդների և նյութերի վերաբերյալ, մասնավորապես, դասընթացները նպատակային և ճիշտ կազմված շնորհանդեսներով ուղեկցելու վերաբերյալ խորհրդատվություններ, համակարգվում են պրեզենտացիաներ պատրաստելու վերաբերյալ

մասնակիցների գիտելիքները, ձևավորվում և զարգացվում են արդյունավետ պրեզենտացիաներ կազմելու հմտությունները, իրականացվում փորձի փոխանակում՝ տարբեր բնագավառների մասնագետների միջև:

2014թ. մայիսից պարբերաբար ՄԿՈԱ բաժնի կողմից պ-ն Ա.Մակարյանի անմիջական աջակցությամբ մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի համար իրականացվում են արդյունավետ և կրթական վերջնարդյունքներին միտված «Դասընթացի փաթեթ»-ի կազմման վերաբերյալ խորհրդատվություններ:

2014թ. հոկտեմբերից մասնաճյուղում ստեղծվել է ԵՊՀ ԻՄ-ի դասավանդման առաջավոր փորձի փոխանցման և երիտասարդ դասախոսների աջակցման կենտրոն, որի միջոցով մասնաճյուղը սեփական հնարավորություններով զարգացնում է առաջավոր մանկավարժական փորձի խրախուսման և տարածման ներմասնաճյուղային մեխանիզմները, նպաստում ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը, բարձրացնում դասավանդողների որակավորումը, կատարելագործում դասավանդման մեթոդիկան, ուսումնական գործընթացում ներառում կրթական նորագույն տեխնոլոգիաներ:

Մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմի կատարելագործման ուղղությամբ իր ներդնում ունի նաև 2015թ.-ին ստեղծված Անգլերեն լեզվի կենտրոնը, որտեղ մասնաճյուղի դասախոսները անվճար հիմունքներով սովորում են անգլերեն լեզու:

2015թ. ... մասնաճյուղի աշխատակիցների համար Ա.Մակարյանն իրականացրել է «Ինքնավերլուծության իրականացում. ՈԱԱԿ մոտեցումներ» թեմայով վերապատրաստման դասընթաց, որի նպատակն էր մասնաճյուղի աշխատակիցների մոտ ձևավորել և զարգացնել որակի մշակույթը, օգնել իրականացնելու կրթական բարեփոխումներ՝ մասնակից դառնալով մասնաճյուղի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության իրականացմանը:

Խնդիր IV բ) Բարձրացնել մասնաճյուղի աշխատակիցների սոցիալական բավարարվածության մակարդակը՝ ուղղորդելով գործընթացը դեպի կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ Մասնաճյուղում առայժմ աշխատակիցների սոցիալական վիճակի մոնիթորինգի մշակված համակարգ կամ չափանիշներ չկա, սակայն աշխատակիցների սոցիալական վիճակի գնահատման և աջակցման համար բոլոր ֆակուլտետներում և կառուցվածքային ստորաբաժանումներում ստեղծվել են արհբյուրոներ: Դրանք ընդգրկված են կառավարման բոլոր օղակներում և այդ անդամների միջոցով իրականացվում է աշխատակիցների սոցիալական վիճակի մշտադիտարկում: Ուսումնասիրությունների արդյունքում արհմիության կողմից.

- ֆինանսական աջակցություն է տրվել սոցիալապես անապահով աշխատակիցներին. 2013թ.-ին՝ 38, , 2014թ.-ին՝ 43, 2015թ.-ին 27,

- Նոր տարվա տոնական նվերներ են հանձնվել բոլոր աշխատակիցներին. 2013թ.-ին 212, 2014թ.-ին՝ 216, 2015թ.-ին՝ 231,

- Նոր տարվա տոնական նվերներ են հանձնվել աշխատակիցների 3-7 տարեկան երեխաներին. 2013թ.-ին՝ 25, 2014թ.-ին՝ 32, 2015թ.-ին՝ 31,

- կանանց տոնի առթիվ նվերներ են տրվել կին աշխատակիցներին. 2013թ.-ին՝ 135, 2014թ.-ին՝ 127, 2015թ.-ին՝ 131,

- ֆինանսական աջակցություն է տրվել աշխատակցի դժվար և հոգեբանական ծանր իրավիճակի դեպքում:

Աշխատակիցների սոցիալական վիճակի համալիր գնահատման համար նախատեսվում է իրականացնել համապատասխան հարցումներ (մշակվում է հարցաշար):

❖ Մասնաճյուղում դասախոսական կազմի վարձատրությունն առաջին հերթին տարբերակվում է ըստ նրանց տարակարգերի և 2007-2008 ուստարվանից գործող հավելավճարի սահմանման և տրամադրման չափանիշների ու ընթացակարգեր, որոնք պարբերաբար լրամշակվում են ու բարելավվում: Առայժմ մշակված չեն ըստ գործունեության արդյունքների և աշխատանքի արդյունավետության դասախոսական կազմի տարբերակված վարձատրման մեխանիզմներ, սակայն համալսարանի ֆինանսական հնարավորությունների գնահատման արդյունքում նրանց աշխատավարձները պարբերաբար ավելացվում են (վերջին 5 տարիների ընթացքում առնվազն 3 անգամ): Դասախոսական կազմի միջին աշխատավարձը բարձրացել է 25%-ով (23 հազար դրամով): ԵՊՀ ԻՄ-ի դասախոսների միջին աշխատավարձը (115 հազար դրամ) կազմում է ՀՀ միջին աշխատավարձի 62%-ը: Ըստ մասնաճյուղի գնահատման առանցքային ցուցանիշների դասախոսական կազմի միջին աշխատավարձը և նրա հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին ունի հետևյալ պատկերը.

Ցուցանիշ 3.11	2011	2012	2103	2014	2015
Պրոֆեսոր	96000	96000	96000	113000	124000
Դոցենտ	93000	93000	93000	108000	118000
Ասիստենտ և դասախոս	89000	89000	89000	103000	113000
Դասախոսական միջին աշխատավարձը	**92000**	**92000**	**92000**	**108000**	**115000**
ՀՀ միջին աշխատավարձը	**115410**	**121374**	**156297**	**175200**	**184400**
Դասախոսական կազմի միջին աշխատավարձի հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին	0.79	0.76	0.59	0.62	0.62

Դասախոսական կազմի միջին աշխատավարձի հարաբերությունը հայաստանյան պաշտոնական միջինին վերջին երեք տարիների ընթացքում նվազել է, որը պայմանավորված է ԵՊՀ ԻՄ դասախոսական կազմի միջին աշխատավարձի անփոփոխ, իսկ հայաստանյան պաշտոնական միջին աշխատավարձի աճի տեմպերով: 2014 թ.-ին ավելացել է դասախոսական միջին աշխատավարձը, որի արդյունքում այդ հարաբերությունը մի փոքր բարձրացել է, դասախոսների աշխատավարձը կազմել է մասնաճյուղի 2015թ.-ի բյուջեի 26.9 %-ը:

Ցուցանիշ	2011-12	2012-13	2013-14	2014-15	2015-16
Տարեկան բյուջեն (տարեսկզբին, հազ. դրամ)	**482851**	**548163**	**578137**	**667958**	**748723**
Դասախոսական կազմ	129	153	126	137	146
Դասախոսական միջին աշխատավարձ	92000	92000	92000	108000	115000

Դասախոսներին տրված աշխատավարձ (հազ. դրամ)	**142416**	**168912**	**139104**	**177552**	**201480**
Աշխատավարձի հաշվեկշիռը ԵՊՀ ԻՄ տարեկան բյուջեում (%)	**29.5**	**30.8**	**24.1**	**26.6**	**26.9**

Մասնաճյուղի դասախոսները պարբերաբար խրախուսվում են, մշակվել են մասնաճյուղի աշխատակիցների ստեղծագործական և ակտիվ մանկավարժական գործունեության գնահատման չափորոշիչներ: 2015թ. հունվարից մասնաճյուղում ներդրվել է աշխատակիցների խրախուսման կարգը՝ ըստ գործունեության արդյունքների, աշխատանքի արդյունավետության և այլ ձեռքբերումների:

❖ Իրականացվել են մի շարք սոցիալական ծրագրեր և միջոցառումներ. առաջին հերթին աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավում, հրավիրված դասախոսների հանգստի կազմակերպում, համալսարանի շրջակայքում մատչելի գներով սննդի կետերի ապահովում և ֆինանսական ու հոգեբանական տարբեր օգնություններ, մասնավորապես՝ դրամական օգնություն, աշխատակցի երեխայի ուսման վարձի զեղչ, տարեվերջյան պարգևատրում, տոնական և մշակութային միջոցառումների ֆինանսավորում և այլն: Սոցիալական ծրագրերի շրջանակներում ԵՊՀ ԻՄ-ի աշխատակիցները մատչելի գներով հանգստացել են համալսարանական բազաներում (Ծաղկաձոր, Հանքավան, Բյուրական). 2013թ.-ին՝ 3, 2014թ.-ին՝ 4, 2015թ.-ին՝ 7 աշխատակիցներ:

2012 թվականից մասնաճյուղին կից գործում է հասարակական սննդի կետ, որից օգտվում են և՛ ուսանողները, և՛ աշխատակիցները: Պարբերաբար տնօրենության կողմից անց են կացվում բանավոր հարցումներ ուսանողության և աշխատակիցների շրջանում և մինչ այժմ սննդի որակի հետ կապված դժգոհություններ, բողոքներ չկան: Իսկ Երևանից ժամանած դասախոսներն առավոտյան ստանում են անվճար սնունդ (նախաճաշ), ապահովված են հանգստի համար բավարար պայմաններով:

Մասնաճյուղում կազմակերպվում և հաջողությամբ լուծվում են Երևանից ժամանող դասախոսների հանգստի և գիշերելու հարցերը: Ուսումնական մասնաշենքերից ոչ հեռու կառուցված մասնաճյուղի հյուրանոցային համալիրն ապահովում է շուրջ 60 դասախոսների կենցաղային խնդիրները, հանգստի ու հարմարավետ աշխատանքի պայմանները: Համալիրն ապահովված է ինտերնետ կապով, կոմունալ բոլոր հարմարություններով:

Ցանկացած բուհի գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է այն հանգամանքից, թե որքանով են բավարարվում ներքին շահակիցների, մասնավորապես պրոֆեսորա-դասախոսական և օժանդակ անձնակազմի օբյեկտիվ և սուբյեկտիվ կարիքները: Այն կապված է բուհական համակարգի կառուցվածքային տարբեր տարրերի շահախնդիր գործունեությունից, որոնցից բավարարվածության աստիճանը, լինելով աշխատանքային և ուսումնական ակտիվության իրական խթան, միաժամանակ հենց այն սուբյեկտիվ ցուցանիշն է, որով գնահատվում են այդ կառույցների փոխհամաձայնեցված գործունեության արդյունավետությունը: Ըստ 2015թ. մասնաճյուղից պրոֆեսորադասախոսական անձնակազմի բավարարվածության հարցման արդյունքների մասնաճյուղը խնդիր ունի հասարակական սննդի և հանգստի պայմանների կազմակերպման հարցում, իսկ այլ բուհերից հրավիրված դասախոսներն

ընդհանուր առմամբ դժգոհ չեն իրենց հանգստի կազմակերպումից՝ հյուրանոցից: Այդ հարցման արդյունքները հետևյալն են.

Թիվ	Բավարարվածությունը	Միջ. միավ.
1.7	ջեռուցումից,	3,7
1.8	հյուրանոցից (այլ բուհերից հրավիրված աշխատակիցների համար),	4,2
1.9	բուժկետի ծառայություններից,	4,2
1.12	սննդի և հանգստի պայմաններից,	3,2
1.14	աշխատավարձից	2,7

Դրանք վկայում են, որ մասնաճյուղի գործունեության մեջ առկա են ոլորտներ, որոնց աշխատանքները կատարելագործվելու ավելի մեծ կարիք ունեն, խնդիրներ, որոնց լուծման համար պետք է ավելի մեծ ջանքեր գործադրել: Դա նախ և առաջ վերաբերում է նյութական խրախուսման համակարգին /աշխատավարձից բավարարվածության միջին բալը կազմում է ընդամենը 2,7, իսկ լրացուցիչ աշխատանքի խրախուսումը՝ 2,1/:

Ռազմավարական այս նպատակի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Լիարժեքորեն չի իրականացվում դասախոսական կազմի բազմաչափ գնահատում:
- Լիարժեքորեն չի գործում դասախոսական կազմի մասնագիտական կատարելագործումը խթանելու նպատակով աշխատանքի վարձատրության տարբերակման մեխանիզմը՝ ըստ գործունեության արդյունքների, աշխատանքի արդյունավետության և այլն:
- Դեռևս ներդրված չէ մասնաճյուղի աշխատակիցների սոցիալական մոնիթորինգի համակարգ:
- Բյուջեում սոցիալական ծրագրերի իրականացման համար հատկացումներ չեն կատարվում:

V. Որակյալ ենթակառուցվածներ

Ստեղծել տեխնոլոգիապես հագեցած ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ բոլոր ուսանողների արդյունավետ գործունեությունը խթանելու համար:

Խնդիր V ա) Բարելավել ուսումնական գործընթացի իրականացման նյութատեխնիկական պայմանները, զարգացնել և արդիականացնել մասնաճյուղի ուսումնական և գիտական լաբորատոր բազան՝ կրթական և հետազոտական ծրագրերի կարիքներին համապատասխան:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ Մասնաճյուղում պարբերաբար գնահատվում են լսարանային ֆոնդի և ուսումնագիտական լաբորատոր բազայի վիճակը, հաշվի են առնվում ֆակուլտետների դեկանների և ամբիոնների վարիչների առաջարկները, ըստ այդմ՝ ստեղծվում, տեխնիկապես հագեցվում են լսարանները, լաբորատորիաները, համակարգչային սրահները, վերանորոգվում են դեկանատների, ամբիոնների համար հատկացված աշխատանքային սենյակները, միջանցքները և այլ տարածքներ: Արդյունքում ստեղծել է տեխնոլոգիապես հագեցած, արդիական աշխատանքային և ուսումնական միջավայր:

Այդ ուղղությամբ 2011-15թթ. ԵՊՀ ԻՄ-ի վարչատնտեսական վարչության կողմից իրականացվել են շինվերանորոգման հետևյալ աշխատանքները.

N	Շինվերանորոգման աշխատանքի անվանումը	2011	2012	2013	2014	2015
1	Լսարանների վերանորոգում	1	10	22	16	13
2	Արվեստանոցների վերանորոգում	1	1	4	1	3
3	Լաբորատորիանների վերանորոգում			1	1	
4	Դեկանների աշխատասենյակների վերանորոգում	1	3	1	1	
5	Դեկանատների սենյակների վերանորոգում	1	1		1	
6	Ամբիոնային սենյակների վերանորոգում	3	3	1	2	1
7	Ստորաբաժանումների սենյակների վերանորոգման աշխատանքներ	3	2	2	5	2
8	Համակարգչային սրահների վերանորոգում		3	2	1	1
9	Միջանցքների,աստիճանավանդակների,նրանց հատակների սալիկապատման աշխատանքներ	6	4	6	7	11
10	Մասնաշենքերի բակերի և շրջակա տարածքների ց/բ. սալիկապատ հատակների պատրաստում	8		2	1	3
11	Մասնաճյուղի մասնաշենքերի սանհանգույցների վերանորոգման աշխատանքներ	2		4	2	1
12	Հյուրանոցային համալիրի, ջեռուցման համակարգերի, բուժ.կետի, պահակատան, էլեկտրոմոնտաժման և պահեստի վերանորոգման աշխատանքներ	6	2	3	2	6
13	Թիվ 2 մասնաշենքի տանիքի վերանորոգում	անընդհատ				
14	Մասնաշենքերում տարբեր արտակարգ իրավիճակների դեպքում ուսանողների և աշխատակիցների տարհանման սխեմաների շրջանակների պատրաստում					15

Մասնաճյուղն իր գործընթացների արդյունավետ կազմակերպման համար ուսանողներին, դասախոսներին և ուսումնաօժանդակ անձնակազմին ապահովել է բավարար տեխնիկական

միջոցներով: 2015-16 ուստարվա ուսումնական գործընթացի կազմակերպումն սկսվել է մասնաճյուղի ուսումնագիտական ֆոնդի հետևյալ ցուցանիշներով.

N	Ֆակուլտետ	Ուսումնագիտական տարածքների քանակը			
		Լսարան	Համակարգ-չային սրահ	Լաբորատորիա/ արվեստանոց	այլ
1	Բնական գիտությունների	9	2	2	1 ընթերցասրահ
2	Հումանիտար գիտությունների	16	1		լեզվի ուսուցման 2 մասնագիտական լսարան
3	Տնտեսագիտության	8	1		ինտերակտիվ ուսուցման (On-line) 1 լսարան
4	Կիրառական արվեստի	2		12	2 պահոց

Համապատասխան լսարանները և աշխատատեղերը հագեցված են 50 տպող սարքերով (26 բազմաֆունկցիոնալ, 22 տպիչ և 2 գունավոր բազմաֆունկցիոնալ):

Մասնաճյուղում գործում է 2 մարզասրահ, որոնք ապահովված են մարմնակրթության դասերի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ մարզական գույքով:

Մասնաճյուղի ուսումնագիտական տարաբնույթ և բազմաբնույթ միջոցառումների համար գործում է լայնարձակ նիստերի դահլիճը, պաշտոնական հանդիպումների և տնօրենության նիստերի համար՝ տեխնիկական բոլոր միջոցներով հագեցած խորհրդակցությունների սենյակը: Աշխատակիցներին և ուսանողներին բավականին մեծ աջակցություն է տպարանը (հրատարակչությունը)՝ իր ժամանակակից սարքավորումներով:

❖ Մասնաճյուղը մշտապես վերազինում և արդիականացնում է լսարանային և լաբորատոր բազան, այդ նպատակով ավելացնելով համապատասխան ծախսերը: Ըստ մասնաճյուղի գնահատման առանցքային ցուցանիշների մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը 2014թ. կազմել է 5640 դրամ, որը գրեթե 10 անգամ ավել է 2011 թվականի ցուցանիշից: 2012թ.-ից սկսած վերոնշյալ ծախսերը ավելացել են, ինչը պայմանավորված է համակարգչային և այլ լաբորատորիաների ստեղծմամբ, արդիականացմամբ և վերազինմամբ:

Ցուցանիշ 4.8	2011	2012	2013	2014	2015
Տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը (հզ. դր.)	1167	5504	6474	8609	4739
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1970	1673	1535	1527	1692
Մեկ ուսանողին ընկնող տարեկան ձեռքբերված սարքավորումների արժեքը (դրամ)	590	3290	4220	5640	2800

Նշենք նաև, որ յուրաքանչյուր տարվա ընդհանուր ծախսերի ավելացմանը զուգահեռ աճել են նաև ուսումնական ծախսերը, հետևաբար ավելացել են նաև մեկ ուսանողին ընկնող ուսումնական ծախսերը: 2014 թվականի տարեկան ընդհանուր ծախսերը 2011-ի նկատմամբ

ավելացել է 32.5 միլիոն դրամով, իսկ տեսակարար ուսումնական ծախսերը՝ ավելի քան 1.3 անգամ (ըստ ԳԱՑ 2010-15թթ.).

Ցուցանիշ 3.8	2011	2012	2013	2014	2015
Տարեկան ընդհանուր ծախսեր (հզ.դրամ)	339 895	334 100	348 782	372 427	416525
Ուսումնական ծախսեր (հզ.դրամ)	145 000	150 345	160 500	171 600	195500
Ուսումնական ծախսերի հաշվեկշիռը ծախսերի ընդհանուր ծավալում (%)	**42.7**	**45.0**	**46.1**	**46.1**	**46.9**
Ուսումնաօժանդակ ծախսեր (հզ.դրամ)	34 000	35 090	36 810	37 500	42000
Ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը (%)	**10.0**	**10.5**	**10.6**	**10.1**	**10.1**
Ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսեր (հզ.դրամ)	179 000	185 435	197 310	209 100	240500
Ուսումնական և ուսումնաօժանդակ ծախսերի հաշվեկշիռը (%)	**52.7**	**55.5**	**56.6**	**56.2**	**57.7**
Ուսանողների թիվը	1673	1582	1535	1552	1692
Տեսակարար ուսումնական ծախսեր (հզ. դրամ)	**86.7**	**95.0**	**104.6**	**110.6**	**115.5**
Տեսակարար ուսումնաօժանդակ ծախսեր (հզ. դրամ)	**20.3**	**22.2**	**24**	**24.2**	**24.8**

Իսկ շահագործման ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում 2011-2014թթ. կազմել է մոտավորապես 34% (ԳԱՑ 2010-15, Ցուցանիշ 4.7):



❖ Կրթական ծրագրերի զարգացման և նոր մասնագիտությունների պահանջներին համապատասխան մասնաճյուղում շարունակաբար ստեղծվում են նոր ուսումնագիտական լաբորատորիաներ և կահավորվում լսարաններ:

Մասնաճյուղում գործում են տեխնիկապես հագեցած 4 համակարգչային սրահներ, որոնցից 2-ը բացվել են 2014թ.-ին՝ բնական գիտությունների և տնտեսագիտության ֆակուլտետների

ուսանողների և դասախոսների առաջարկներով, նպատակ ունենալով զարգացնել և համալրել իրականացվող մասնագիտությունների կրթական ծրագրերի նյութատեխնիկական բազան:

2014թ. սեպտեմբերին վերազինվել են Կիրառական արվեստի ֆակուլտետի արվեստանոցները, ստեղծվել է «Դիզայնի» լաբորատորիան, «Հագուստի մոդելավորման» արվեստանոցը, նույն ֆակուլտետում ստեղծվել է նաև տեսասարքով լսարան:

Նախաձեռնվել է և ընթացքի մեջ է Հումանիտար գիտությունների ֆակուլտետում «Հոգեբանության» լաբորատորիայի ձևավորումը:

Բնական գիտությունների ֆակուլտետի «Քարտեզագրություն և կադաստրային գործ» նոր մասնագիտության կրթական ծրագրի արդյունավետ իրականացման համար անհարժեշտ է ստեղծել «Քարտեզագրության և գեոինֆորմատիկայի» լաբորատորիա՝ համապատասխան սարքավորումներով և նյութերով, առանձնահատուկ անհարժեշտություն է էլեկտրոնային տախեոմետրի՝ թեոդոլիտի ձեռքբերումը, լաբորատորիայի ստեղծման հարցը ներկայացվել է մասնաճյուղի գիտխորհրդի քննարկմանը:

❖ Ակտիվացվում և ընդլայնվում է մասնաճյուղի համագործակցությունը մասնաճյուղի հիմնական գործատու և նվիրատու կազմակերպությունների հետ՝ VivaCell MTS, Orange, ՀՕՖ և այլն: Ուսումնագիտական լաբորատոր բազաների վերազինման և նորերի ստեղծման գործում նշանակալի է այդ կազմակերպությունների աջակցությունը, մասնավորապես.

- Մասնաճյուղի և Իջևանի քաղաքային պատկերասրահի հմագործակցությունն արտահայտվում է կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսներին և ուսանողներին տրված լայն հնարավորությամբ, այն է քաղաքային պատկերասրահի համատեղ օգտագործում և մշտական ցուցահանդեսներ կազմակերպում:
- VivaCell-MTS և Orang հեռահաղորդակցման օպերատորների կողմից վերազինվել են մասնաճյուղի համակարգչային սրահները, ստեղծվել են Wi-Fi անկյուններ:

❖ Հումանիտար գիտությունների ֆակուլտետում ստեղծվել է օտար լեզուների ուսուցման մասնագիտացված երկու լսարան՝ անգլերեն լեզվի ուսուցման համար /English resource center/ և ֆրանսերեն լեզվի ուսուցման համար /ֆրանսերեն լեզվի լսարան/:

❖ Մասնաճյուղի լսարանային և լաբորատոր բազայի վերազինումը ու արդիականացումը ապահովելու նպատակով համակարգչային սրահներում և աշխատասենյակներում իրականացվել է համակարգիչների փուլային վերազինում: մասնաճյուղի համակարգչային բազան համալրվել է նոր սերնդի համակարգիչներով: Ձեռք են բերվել բազնաֆունկցիոնալ նոր սարքեր:

Մասնաճյուղի թվով տասմեկ ամբիոնները և չորս համակարգչային սրահներն ապահովված են համացանցով՝ գործում է անվճար ինտերնետային կապ: Համակարգչային սրահներն ապահովված են ցուցադրման թվային սարքով՝ տեսասարքով, տեսաձրով (սկաներով), բազմաֆունկցիոնալ սարքով (տպող և պատճենահանող սարքով), սպիտակ (մարկերով) գրատախտակով:

❖ Ուսումնական գործընթացի կազմակերպման կատարելագործման նպատակով իրականացվել են ուսումնական և աշխատանքային միջավայրի վերանորոգման, նպատակային օգտագործման համար հարմարավետության ստեղծման բավականին աշխատանքներ:

Ֆակուլտետների դեկանների համագործակցության արդյունքում ուսումնական և լաբորատոր տարածքներն օգտագործվում են առավել արդյունավետ:

Մասնաճյուղի Կիրառական արվեստի ֆակուլտետի առաջին հարկի չորս արվեստանոցների անհարմար մուտքերի շեմերը վերակառուցվել են՝ 2013թ. սեպտեմբերին նրանց մուտքերի դռների առջև պատրաստելով պրեսգրանի սալիկներով երեսապատված աստիճաններ: 2013թ. դեկտեմբերին եվրոնորոգվել են նույն ֆակուլտետի 3 արվեստանոցները, նորոգվել են 342մ^2 մակերեսով առաստաղներ և պատեր: 2015թ.-ին բնական գիտությունների և հումանիտար գիտությունների 13 լսարաններում իրականացվել է շուրջ 796մ^2 մակերեսով վերանորոգման աշխատանքներ, վերանորոգվել են 2 ամբիոններ, լսարաններին կից 1426մ^2 մակերեսով միջանցքներ, սալիկապատվել կամ լինոլեումով պատվել է 1108մ^2 հատակ և այլն:

Հեռակա ուսուցման ուսանողների ուսումնական գործընթացի կազմակերպման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով այդ բաժնի թ.1 մասնաշենքում հատկացվել է երկու աշխատասենյակ, այդ աշխատասենյակները 2014թ. փետրվարին հիմնորոգվել են, ընդհանուր առմամբ վերանորոգվել են 60մ^2 մակերեսով պատեր և առաստաղներ, վերակառուցվել և օգտագործման համար հարմարավետ են դարձվել նրանց մուտքերը, փոխվել են դռները՝ տեղադրելով եվրոդռներ, ավելացվել են բազալտե սալիկներով երեսապատված աստիճաններ, նրանց վրա տեղադրվել են կախովի ծածկեր: Հեռակա ուսուցման բաժնին հարակից բակն ամբողջությամբ բարեկարգվել է:

Խնդիր V բ) Ստեղծել մասնաճյուղի միասնական կենտրոնական տեղեկատվական համակարգ և ապահովել նրա մատչելիությունը ուսանողների և աշխատողների համար:

❖ Մասնաճյուղում ստեղծված է ներքին համակարգչային ցանց, որին միացված են 130-ից ավել համակարգիչներ: Նրքին համակարգչային ցանցից դուրս են մնացել միայն սպորտ դահլիճում գտնվող «Արտակարգ իրավիճակների, սպորտի և մարմնակրթության» ամբիոնը և 3-րդ մասնաշենքը: Նշված վայրերում համացանցից օգտվում են էլեկտրոնային կրիչների օգնությամբ:

❖ Մասնաճյուղում ակտիվ գործում է ուսանող-դասախոս էլեկտրոնային շփումը: Էլեկտրոնային փոստով ուսանողներին ուղարկվում են ինքնուրույն աշխատանքի հանձնարարություններ, ուսումնական լրացուցիչ նյութեր, գրականություն, իրազեկվում գնահատման արդյունքները և այլն:

❖ Մասնաճյուղի կառավարման միասնական տեղեկատվական համակարգի ձևավորման շրջանակներում ԵՊՀ-ի կողմից մշակված և ներդրված «SuperVision» համակարգով կառավարվում է ուսանողների տվյալների բազան, գրանցվում ուսանողների առաջադիմությունը, իրականացվում են փոխատեղման գործընթացի հետ կապված աշխատանքները:

Պարբերաբար կազմակերպվել են տեղեկատվական համակարգեր օգտագործողների վերապատրաստումներ:

Ընդլայնվել է տեղեկատվական ռեսուրսների օգտագործման տեխնոլոգիական գործիքամիջոցների կազմը: 2012 թվականից մասնաճյուղի ծրագրավորողների ուժերով ստեղծվել, տարբեր ստորաբաժանումներում ներդրվել և կիրառվում են համապատասխան տեղեկատվական համակարգեր ու բազաներ.

- ուսանողների հաշվառման համակարգը՝ Ուսումնամեթոդական վարչությունում,
- ուսանողների հաճախումների հաշվառման, դասացուցակի կառուցման և քննաշրջանների ամփոփման համակարգը՝ ֆակուլտետների դեկանատներում,
- կադրերի հաշվառման և մշակման համակարգը՝ Անձնակազմի կառավարման բաժնում,
- ուսանողների վարձավճարների հաշվառման համակարգը՝ Հաշվապահությունում,
- շրջանավարտների տվյալների հաշվառման և մշակման համակարգը՝ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնում:

Ռազմավարական այս նպատակի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Դեռևս ստեղծված չէ մասնաճյուղի կառավարման միասնական տեղեկատվական համակարգ:

VI. Որակյալ ծառայություններ

Տրամադրել բարձրորակ և արդյունավետ օժանդակ ծառայություններ, որոնք միտված են ուսանողների կրթական, մասնագիտական և սոցիալական կարիքների լիարժեք բավարարմանը՝ առավելագույնի հասցնելով ուսումնառությունը հաջողությամբ ավարտելու նրանց հնարավորությունները:

Խնդիր VI ա) Բարձրացնել ուսանողների բավարարվածության մակարդակը ուսումնառությունից և օժանդակ ծառայություններից:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ 2010 թվականից սկսած մասնաճյուղում պարբերաբար գնահատվում է ուսանողների և շրջանավարտների բավարարվածությունը ստացած կրթությունից (առկա և հեռակա ուսուցման համակարգերում): Այդ ուսումնասիրությունները հիմնականում իրականացվում են տարբեր հարցումների, հանդիպումների և քննարկումների միջոցով, իսկ դրանց արդյունքների վերլուծություններն օգնում են պարզել առկա խնդիրները, մշակել և իրականացնել ուսումնառողների բավարավածությունը բարձրացնելու գործընթացներ:

<u>Հարցումը</u> որակի ներքին ապահովման բավականին արդյունավետ գործընթաց է: Մասնաճյուղում 2012թ.-ից իրականացվում են մի շարք հարցումներ, միայն 2014-15 ուստարում՝ 9 հարցումներ:

2015թ.-ին վերանայվել և նաև կառուցվածքային վերափոխվել են 2012թ-ից գործող 3 հարցումների հարցաշարերը՝ շրջանավարտների բավարավածության, ուսանողների գնահատման և արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության, նաև մշակվել են ևս 4 հարցաշարեր՝ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության, ներքին շահակիցների մասնաճյուղից բավարարվածության և պրակտիկայի կազմակերպումից բավարարվածության:

2015թ.-ի դեկտեմբերի դրությամբ մասնաճյուղում կանոնակարգված իրականացվում են 9 հարցումներ ***(Աղյուսակ 2):***

Այդ հարցումները հնարավորություն են տալիս ուսումնասիրել շրջանավարտների բավարարվածությունը ստացած կրթությունից, ուսանողների բավարարվածությունը մասնաճյուղից, մասնաճյուղում պրակտիկայի կազմակերպման արդյունավետությունից, ուսանողների գնահատումից և դասավանդման որակից և արդյունավետությունից:

Այդ հարցումների միջոցով հավաքագրված տեղեկատվության մշակման արդյունքում համապատասխան ստորաբաժանումները գնահատում են.

- ուսանողների և շրջանավարտների բավարավածությունը մասնաճյուղի ռեսուրսներից ու ծառայություններից, ստորաբաժանումների գործունեությունից, էլեկտրոնային կայքից ուսումնառությանը վերաբերող տեղեկատվության ստացման լիարժեքությունից և մատչելիությունից, ուսումնական գործընթացների կազմակերպումից, խորհրդատվական ծառայություններից, ուսանողական կառույցներից,
- ուսանողի տեղեկացվածությունը կրթական վերջնարդյունքների գնահատման չափանիշներից և դասախոսների կողմից այդ չափանիշների պահպանման հնարավորությունները,

- ուսանողի կրթական վերջնարդյունքների գնահատման տարբեր ձևերի արդյունավետությունը, գնահատման օբյեկտիվությունն ու թափանցիկությունը, գրագողության դեմ պայքարի ձևերի արդյունավետությունը,
- ուսանողի տեղեկացվածությունը յուրաքանչյուր քննական գործընթացի ժամանակ իր գնահատականի ձևավորումից,
- ուսանողի բողոքարկումներին դասախոսների արձագանքելու, միավորի փոփոխություն կատարելու հնարավորության մասին,
- ուսանողների նախասիրությունները գնահատման առաջարկվող ձևերի վերաբերյալ,
- ուսանողների կարիքների վեր հանման մեխանիզմների արդյունավետությունը և դրանց լուծումից ուսանողների բավարարվածությունը և այլն:

Մասնաճյուղի ծրագրավորողների կողմից **մշակվել են** բոլոր հարցումների արդյունքների հաշվառման, մշակման և վերլուծության 9 տեղեկատվական համակարգեր՝ բազաներ:

Իրականացվել են այդ հարցումների արդյունքների վերլուծություններ, դրանց վերաբերյալ հաշվետվություններ են ներկայացվել մասնաճյուղի գիտական խորհրդի և տնօրենության նիստերում, հարցմանը մասնակցածների առաջարկությունները և կարծիքները համակարգվել են, կազմվել առաջարկությունների փաթեթներ, արդյունքները ամփոփվել և ուղարկվել են համապատասխան ստորաբաժանումներին, տեղադրվել են մասնաճյուղի պաշտոնական կայքի «Կրթության որակի կառավարում» բաժնի գործընթացներում:

Աղյուսակ 2.

ԵՊՀ ԻՄ-ում իրականացվող հարցումների ցանկ /2014-15 ուստարվա դրությամբ/

	Հարցման կանոնակարգ	Հարցաթերթեր (9 հատ)	Հիմքը	Նշումներ
1	ԵՊՀ ԻՄ-ում ***ստացած կրթությունից*** շրջանավարտների բավարարվածության գնահատման	• ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից **շրջանավարտների** բավարարվածության գնահատման	ԵՊՀ ԻՄ ԳԽ **02.09.2010թ.** ???	***վերանայվել է՝*** հարցաշարը 2014թ. ***մշակվել է՝*** հարցման գործիքի անձնագիրը
2	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ***շրջանավարտների*** վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության	• ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտների վերաբերյալ **արտաքին շահակիցների** կարծիքի ուսումնասիրության	ԵՊՀ ԻՄ ԳԽ **18.04.2015թ.**	***վերանայվել է՝*** հարցաշարը ***մշակվել է՝*** հարցման կանոնակարգը, հարցման գործիքի անձնագիրը
3	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ***պրակտիկայի կազմակերպման*** արդյունավետության գնահատման	• ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ **արտաքին շահակիցների** կարծիքի ուսումնասիրության • ԵՊՀ ԻՄ-ի կողմից կազմակերպված պրակտիկայի **ուսանողական** գնահատման	ԵՊՀ ԻՄ ԳԽ **18.04.2015թ.**	***վերանայվել է՝*** հարցաշարը
4	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից ***ներքին շահակիցների*** բավարարվածության ուսումնասիրության	• ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից **պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի** բավարարվածության ուսումնասիրության • ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից **ուսանողների** բավարարվածության ուսումնասիրության	ԵՊՀ ԻՄ ԳԽ **18.04.2015թ.**	***մշակվել է՝*** հարցման կանոնակարգը, 2 հարցաշարերը, 2 հարցումների գործիքի անձնագիրը,
5	ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ***ուսանողների գնահատման*** վերաբերյալ	• ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների գնահատման վերաբերյալ ***ուսանողական*** • ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ուսանողների գնահատման վերաբերյալ ***դասախոսական***	ԵՊՀ ԻՄ ԳԽ **31.10.2015թ.**	***մշակվել է՝*** հարցման կանոնակարգը, 2 հարցաշարերը, 2 հարցումների գործիքի անձնագիրը,
6	ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ	• ԵՊՀ ԻՄ-ում դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման	ԵՊՀ ԳԽ **28.10.2014թ.**	***վերանայվել է՝*** հարցաշարը (ԵՊՀ-ում)

❖ Շրջանավարտների վերաբերյալ տվյալները հավաքագրում և կանոնակարգում է 2009 թվականից գործող «Շրջանավարտների և կարիերայի» կենտրոնը: Շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների հավաքման գործընթացի կանոնակարգման և իրականացման համար՝

– Մասնաճյուղի կայքէջում (http://ijevan.ysu.am/) առանձնացվել է «Շրջանավարտ» բաժինը՝ «Մրցույթներ, թափուր հաստիքներ», «Խորհրդատվություն», «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն», «Գրանցում» ենթաբաժիններով, որտեղ պարբերաբար տեղադրվում են համապատասխան նյութեր, 2015թ.-ին ստեղծվել է նաև «Մեր շրջանավարտները» բաժինը, որտեղ տեղադրվել են մասնաճյուղի բոլոր շրջանավարտների ցուցակները՝ սկսած 1994թ.-ից:

– "Facebook" սոցիալական ցանցում ստեղծվել է «ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի շրջանավարտ» էջը (https://www.facebook.com/shrjanavart?ref_type=bookmark)՝ մասնաճյուղի գործունեության, տարածաշրջանում առկա թափուր աշխատատեղերի վերաբերյալ շրջանավարտներին պարբերաբար տեղեկություններ տրամադրելու նպատակով,

– Ստեղծվել է մասնաճյուղի՝ վերջին 5 տարիների շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ համակարգչային բազա,

– Գործում է գովազդային անկյունը, տեղադրված է առանձին ցուցատախտակ՝ մարզի տարբեր կազմակերպությունների կողմից պարբերական մամուլում աշխատանքային տարբեր պաշտոնների համար տպագրված հայտարարություններով և այլ փաստաթղթերով,

– Շրջանավարտների և հիմնական գործատուների հետ հետադարձ կապի ապահովումը մասնաճյուղում իրականացվում է շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրման նպատակով իրականացվող հարցումների միջոցով:

Հավաքագրված տվյալների արդյունքներով վերջին 5 տարիների համար մասնաճյուղի շրջանավարտներն ունեն զբաղվածության հետևյալ ցուցանիշները, որը իհարկե այնքան էլ գոհացուցիչ չէ: Հարկ է նշել, որ յուրաքանչյուր տարվա շրջանավարտների 50%-ից ավելին գործազուրկ է, իսկ աշխատող շրջանավարտների մեջ ոչ մասնագիտությամբ աշխատողների թիվն էապես գերակշռում է: Իհարկե, սա պայմանավորված չէ միայն շրջանավարտների մակարդակով, այստեղ իր մեծ դերն ունեն մարզում աշխատատեղերի պակասը և այլ արտաքին գործոններ:

	Զբաղվածություն/ուսման շարունակություն	*2011*	*2012*	*2013*	*2014*	*2015 հեռակա*
1	Ավարտելուց անմիջապես հետո	**220**	**246**	**110**	**82**	**30**
2	Նախքան ավարտելը	**50**	**65**	**30**	**40**	**63**
3	Մասնագիտությամբ	**65**	**82**	**48**	**43**	**33**
4	Ոչ-մասնագիտությամբ	**155**	**184**	**62**	**79**	**60**
5	Ավարտելուց հետո ուսումը շարունակող ուսանողների հաշվեկշիռը (%)	**9**	**8**	**10**	**17**	**10**
6	Ավարտելուց 2-5 տարի հետո զբաղվածության մակարդակը	**56**	**55**	**50**	**60**	**55**
7	Գործազուրկ ուսանողների հաշվեկշիռը (%)	**44**	**45**	**50**	**70**	**45**

Տվյալների հավաքագրման գործընթացին զուգահեռ՝ շրջանավարտների և հիմնական գործատուների հետ իրականացվում են հանդիպումներ, կայքում տեղադրվում են

հայտարարություններ՝ տարբեր կազմակերպությունների հետ փոխշահավետ համագործակցություն իրականացնելու, մեր լավագույն ուսանողներից և շրջանավարտներից կազմակերպությանն անհրաժեշտ մասնագետներ ընտրելու նպատակով: Այդ խնդրի իրականացման համար նախատեսվում է 2014-15 ուստարում ուսանողների համար իրականացնել նպատակային արտադրական և մանկավարժական պրակտիկաներ: Կենտրոնի աջակցությամբ ուսանողները և շրջանավարտները մասնակցել են տարբեր մրցույթների և հարցազրույցների:

Նշենք, որ 2014թ. հունվարին մասնաճյուղում կայացել է ղեկավարության, պրոֆեսորադասախոսական կազմի և վերջին հինգ տարիներին ուսումնառությունը գերազանցությամբ ավարտած մի խումբ շրջանավարտների հետ հանդիպում, որտեղ քննարկվել են տարաբնույթ հարցեր, տրվել պատասխաններ: Մասնավորապես, շրջանավարտները նշել են մասնաճյուղի առավելություններն իրենց ուսանած այլ բուհերի նկատմամբ, որտեղ իրենք շարունակել են կրթությունը, ներկայացրել այն բացթողումները, որոնց լուծումը հնարավորություն կտա առավել որակյալ կրթություն տրամադրել և լինել մրցունակ:

Կարևոր էր նաև արտաքին շահակիցների՝ Տավուշի մարզի հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարների, մարզպետարանի ներկայացուցիչների, բարձրաստիճան զինվորականների, համայնքների ղեկավարների, գործարարների, դպրոցների տնօրենների, լրագրողների, ծնողների հանդիպումը մասնաճյուղի ղեկավարության և մի շարք ստորաբաժանումների ղեկավարների հետ, որի ընթացքում գործատուները ներկայացրեցին համագործակցության ձևերի վերաբերյալ իրենց առաջարկությունները:

Արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման լավ գործող մեխանիզմ է նրանց ընդգրկելն ամփոփիչ ատեստավորման հանձնաժողոների կազմում, պրակտիկաների կազմակերպումը գործատու կազմակերպություններում, նաև մի շարք հարցումների միջոցով նրանց կարծիքների և առաջարկների հավաքագրումն ու վերլուծումը՝ ուսումնառության հետագա արդյունավետ կազմակերպման, կրթական ծրագրերի բարելավման, աշխատաշուկայի պահանջարկի ուսումնասիրման համար:

❖ ԵՊՀ ԻՄ-ի ուսանողների համար ուսումնառությանը զուգահեռ աշխատանքային փորձի ձևավորման ու տիրապետման նպատակով միջոցներ են ձեռնարկվել նրանց տարբեր պրակտիկաների, դասընթացների, սեմինար պարապմունքների ավելի նպատակային կազմակերպելու ուղղությամբ: Օրինակ.

- Տնտեսագիտության ֆակուլտետի բարձր կուրսերի ուսանողներն իրենց պրակտիկան անց են կացնում համրապետության մի շարք առաջատար հաստատություններում (Արդշինբանկ, Կոնվերս, Արարատ և այլ բանկեր ու վարկային կազմակերպություններ, մարզի տարածքում գործող սոցիալ-մշակութային, հյուրանոց-ռեստորանային կազմակերպություններ և այլն), իսկ 2015թ.-ին «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտության լավագույն ուսանողները, մրցութային կարգով, իրենց արտադրական պրակտիկաներն անց են կացրել ՀՀ Կենտրոնական բանկի Դիլիջանի մասնաճյուղում, հեռահաղորդակցության օպերատորներ «ՎԻՎԱՍԵԼ-ՄՏՍ» և «Օրանժ» ընկերություններում:

- Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության ուսանողներն ակտիվ պրակտիկան անցնում են մարզի տարբեր հաստատություններում, այդ թվում SOS մանկական գյուղեր ծրագրի Իջևանի կենտրոնում, մարզի հիմնական և ավագ դպրոցներում:
- Հումանիտար գիտությունների ֆակուլտետում ուսանողների կարիերային նպաստող քայլերից է օտարալեզու հյուրերի հետ հանդիպումների ժամանակ ուսանողների ներգրավումը որպես թարգմանիչներ:
- 2015թ. ից Տնտեսագիտության ֆակուլտետը ուսանողների պրակտիկ կարողությունների, հմտությունների զարգացման, միջազգային փորձ ունեցող մասնագետների հետ շփման նպատակով համագործակցում է «Տավուշի մարզի տուրիզմի զարգացման գործակալություն» ՀԿ-ի հետ: Համագործակցության շրջանակներում «Սերվիս» մասնագիտության ուսանողները մասնակցում են սեմինարների, պրակտիկ աշխատանքների: Տնտեսագիտության ֆակուլտետի 8 ուսանողներ 2015թ. մայիսի 2-ին և 3-ին մասնակցել են «Էկոտուրիզմի կազմակերպման և կայուն զարգացման հիմնահարցերը» խորագրով ամառային դպրոցին:
- Մանկավարժություն և հոգեբանություն մասնագիտության ուսանողները պարբերաբար մասնակցել են սոցիալական մանկավարժի միջազգային օրվան նվիրված միջոցառումների, վիկտորինաների, համատեղ քննակումների (02.10.2013թ., 02.10.2014թ.), որը նպաստել է նրանց մասնագիտական հմտությունների զարգացմանը, այլ բուհերի ուսանողների հետ համագործակցությանը, փորձի փոխանակմանը:
- Բնական գիտությունների ֆակուլտետի և «Մոբայլ Ծրագրավորման Կենտրոն Իջևան» նախագծի համագործակցության շնորհիվ ուսանողները և շրջանավարտները 2013թ.-ից մասնակցում են ծրագրավորման դասընթացների, նրանցից 4-ն արդեն աշխատում է նորաստեղծ «Վեկտր» ՓԲԸ-ում, իսկ 15-ը հաճախում են դասընթացներին:
- 2013թ. ֆակուլտետի և Տավուշի թեմի առաջնորդարանի համագործակցությամբ 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողների ու շրջանավարտների համար կազմակերպվել է սրբանկարչության դասեր: 2013-14 ուստարում ֆակուլտետի ուսանողների համար իրականացվել են ավանդական գոբելենագործության վարպետության դասեր՝ Մոսկվայից հրավիրված ՀՀ ժող. վարպետ Յու.Ս.Հովսեփյանի կողմից: Կիրառական արվեստի ֆակուլտետում ուսանողների կարիերային նպաստում է նաև նրանց մասնակցությունը կազմակերպվող ցուցահանդեսներին:
- 2013թ. մասնաճյուղի մեկ տասնյակից ավելի ուսանողներ, շրջանավարտներ և դասախոսներ մասնակցել են «Նոր մեդիա դպրոցի» քառամսյա դասընթացին: Նրանք ծանոթացել նոր տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններին և պրակտիկ կիրառությանը: Ծրագրի ընթացքում մասնակիցները ձեռք են բերել քաղաքացիական լրագրության ոլորտի հմտություններ, հրապարակել են համայնքի խնդիրներին վերաբերող հոդվածներ:

❖ 2014թ. սեպտեմբերից մասնաճյուղում ներդրված են «Դասընթացի փաթեթ (պորտֆոլիո)»-ները որպես կրթական ծրագրերի պահանջների արտացոլում և մատչելի ուսումնառության օժանդակության ռեսուրս: Առարկայական փաթեթների ներմուծումը նպատակ ուներ համակարգել

դասախոսի և ուսանողի համատեղ գործունեությունը յուրաքանչյուր դասընթացի շրջանակներում, պլանավորել դասընթացի ուսուցման արդյունավետ ու տրամաբանական կազմակերպումը, իրականացնել դասընթացից դասավանդողի ու ուսումնառողի ձեռքբերումների գնահատումը, կազմակերպել անհրաժեշտ փաստաթղթերի նպատակային հավաքագրում, որը ծառայում է դասախոսին որպես սեփական գործունեության անդրադարձի (ռեֆլեքսիայի) միջոց և նրա արդյունքների ներկայացումը՝ որպես կոմպետենտության ընթացիկ գնահատման կամ շուկա դուրս գալու մրցունակության ցուցադրման միջոց: Այն կիսամյակի ավարտին արտացոլում է դասախոսի և ուսանողների գուրծունեությունը, ներկայացնում ամրագրված մեխանիզմները, առանձնացնում դրանցից արդյունավետները, կամ նշում նրանք, որոնք իրենց չեն արդարացրել:

Դասընթացների փաթեթները գտվում են ամբիոններում, հասանելի են ուսանողներին և աջակցում են նրանց ուսումնառությանը, իսկ ուսումնական խորհրդատուներն ապահովում են դրանց արդյունավետ օգտագործումը:

Կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողներին մատչելի ուսումնառության օժանդակության նպատակով մասնաճյուղն ապահովում է ներկերով, վատմաններով, ռեկվիզիտներով, տարբեր տեսակի թելերով, կավով և ուսումնական այլ անհրաժեշտ միջոցներով /յուրաքանչյուր տարի մոտ 500 000 դրամի չափով/:

Մասնաճյուղը պարբերաբար ձեռք է բերում մասնագիտական գրականություն և ամսագրեր: Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը 2015թ. կազմել է 766000 դրամ, որը 5 անգամ ավել է 2011 թվականի ծախսից, իսկ մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը ավելացել 6 անգամ:

Յուցանիշ 4.5	2011	2012	2103	2014	2015
Նոր գրքերի տարեկան թիվը	51	124	180	44	152
Գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը (հզ. դրամ)	145	229,3	516	363	766
ԵՊՀ ԻՄ ուսանողների թիվը	1970	1673	1535	1527	1692
Մեկ ուսանողին ընկնող գրականության ձեռքբերման տարեկան ծախսերը (դր.)	73.6	137.1	336.2	237.7	452.7

❖ Շրջանավարտների և կարիերայի կենտրոնի կողմից պարբերաբար ուսումնասիրվում են ուսանողների և շրջանավարտների կողմից աշխատանք գտնելու հիմնախնդիրները, այդ ուղղությամբ տարվում են որոշակի աշխատանքներ, որի ընթացքում մասնակիորեն պարզվել են այն պատճառներն ու պայմանները, որոնք խանգարում են այդ կարևոր գործընթացի արդյունավետ իրականացմանը: Աշխատանք գտնելու և դրա հետ կապված այլ հիմնահարցերի պարզաբանման նպատակով կազմակերպվել են խորհրդակցություններ և կլոր սեղաններ:

Կենտրոնը պարբերաբար մասնակցում է մարզում կազմակերպվող աշխատանքի տոնավաճառներին, ներկայացնում մասնաճյուղի թափուր հաստիքները, տրամադրում խորհրդատվություն:

2012թ. դեկտեմբերի 13-15-ը մասնաճյուղում իրականացվել է «Աշխատանքի տոնավաճառ. առաջին քայլեր դեպի աշխատանք» ծրագիրը: Ծրագրին մասնակցող շուրջ 25 ուսանողներին

ներկայացվել են աշխատանքային պարտականությունները և իրավունքները, աշխատանքի փնտրման, ինքնակենսագրության կազմման, գործատուին դիմելու և աշխատանքային հարցազրույցին ներկայանալու ձևերը: Ծրագրի ավարտին կազմակերպվել է աշխատանքի տոնավաճառ մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ, որոնք ներկայացրել են իրենց կազմակերպությունների գործունեության ուղղվածությունը և թափուր աշխատատեղերը, պատասխանել ուսանողներին հետաքրքրող հարցերին: 2015թ. ևս մասնաճյուղը մասնակցել է աշխատանքի տոնավաճառի՝ ներկայացնելով իր թափուր աշխատատեղերը:

Կենտրոնի աջակցությամբ ուսանողները և շրջանավարտները մասնակցել են տարբեր մրցույթների և հարցազրույցների, որոնց արդյունքում շուրջ երկու տասնյակ շրջանավարտ ընդունվել է աշխատանքի, որի զգալի մասը՝ մասնաճյուղում:

2015թ.-ին մասնաճյուղում ստեղծվել է «Կադրային բանկ», որի նպատակն է լավագույն շրջանավարտներին ընդգրկել մասնաճյուղի դասախոսական, ուսումնաօժանդակ աշխատանքներում: Արդեն գրանցվել են շուրջ երեք տասնյակ շրջանավարտներ, որոնցից 3-ն արդեն ընդունվել են աշխատանքի մասնաճյուղում:

Իջևանի Զբաղվածության տարածաշրջանային կենտրոնի հետ համատեղ 2015թ. կազմակերպվել է մասնաճյուղի շրջանավարտների եռամսյա պրակտիկա, որի ընթացքում շրջանավարտները, աշխատելով ԵՊՀ ԻՄ-ում, ձեռք են բերում մասնագիտական կարողություններ և հմտություններ:

Ուսանողների և շրջանավարտների շրջանում անցկացրած հարցումների արդյունքների վերլուծությամբ գնահատվել է ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստող ծառայությունների գործունեության արդյունավետությունը:

Ըստ 2015թ-ին մասնաճյուղից ուսանողների բավարարվածության հարցման արդյունքների ուսանողների 45.5%-ը նշել է, որ տեղեկացված է կարիերային նպաստող ծառայությունների մասին, իսկ 31.4%-ը՝ օգտվում է այդ ծառայություններից, Իսկ հարցմանը մասնակցած 486 ուսանողների 86.4%-ը բավարարված է ուսանողների կարիերային նպաստող ծառայություններից.



Հարկ է նշել, որ մասնաճյուղի շրջանավարտներն ավելի են տեղեկացված կարիերային նպաստող ծառայությունների մասին, հաճախ են օգտվում նրանց ծառայություններից և բավարարված են նրանց աշխատանքներից (2014-15 ուստարվա հարցմանը մասնակցել են միայն հեռակա ուսուցման բաժնի շրջանավարտները, և նախորդ ուստարվա համեմատ ցածր արդյունքները, ակնհայտ է, պայմանավորված է մասնաճյուղում ֆիզիկապես քիչ լինելու հանգամանքով).



❖ Տնօրենության կողմից հաճախակի խրախուսվում են Ուսանողական խորհրդի և գիտական ընկերության կողմից իրականացված միջոցառումները, կատարվում է համապատասխան ֆինանսավորում, տրամադրվում է տրանսպորտային միջոց մասնաճյուղից դուրս իրականացվող միջոցառումների դեպքում:

Ուսումնական առաջադիմության և հասարակական ակտիվությունը խթանելու համար հայթայթվել են նյութական խրախուսանքի այլ աղբյուրներ: Նախատեսված պահանջները բավարարող ուսանողներն արժանանում են անվանական կրթաթոշակների.

- «Վազգեն Սարգսյան», «Մոնթե Մելքոնյան», «Երկրապահ» անվանական կրթաթոշակներ, որոնք տրամադրում է ՀՀ Պաշտպանության նախարարությունը,
- «Շավարշ Մարգարյան», «Շառլ Ազնավուր», «Սահակ Ձերափորեցի», «Դավիթ Անհաղթ» անվանական կրթաթոշակներ, որոնք տրամադրում է մասնաճյուղը,
- «Սպարտակ Սարգսյան» անվանական կրթաթոշակ, որը տրամադրում է մասնաճյուղը, որին յուրաքանչյուր կիսամյակ արժանանում է կիրառական արվեստի ֆակուլտետի երրորդ կամ չորրորդ կուրսի մեկ ուսանող:

N	Ֆակուլտետ	2013-14		2014-15		2015-16	Ընդամենը
		1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	2-րդ կիս.	1-ին կիս.	
1	Հումանիտար գիտությունների	2	3	2	2	3	*12*
2	Բնական գիտությունների						*0*
3	Տնտեսագիտության	1	1	2	3	3	*10*
4	Կիրառական արվեստի				2	1	*3*
Ընդամենը՝		*7*		*11*		*7*	*25*

❖ Մասնաճյուղը պետական և ներբուհական կրթաթոշակների, ուսանողական նպաստների ու վարկերի համակարգերի հնարավորություններն առավել արդյունավետ օգտագործելու համար առաջնորդվում է ԵՊՀ համապատասխան կանոնակարգով:

Միայն 2014-15 ուստարում պետության կողմից ուսման վարձի (ուսանողական նպաստի ձևով) լրիվ փոխհատուցում է ստացել 82 ուսանող: Պետական և ներբուհական կրթաթոշակներ են հատկացվել մասնաճյուղի 115 ուսանողների, որոնցից անվանական կրթաթոշակ է ստացել 7 ուսանող: 1-ին կիսամյակում զեղչվել են առկա ուսուցման համակարգի 29, հեռակա ուսուցման համակարգի 76 ուսանողի ուսման վարձավճարները, 2-րդ կիսամյակում՝ համապատասխանաբար 58 և 107:

Մասնաճյուղում կրթաթոշակի նշանակման գործընթացում վերջին տարիներին վճռորոշ դեր ունեն ուսանողական կառույցները:

❖ Ուսանողների իրավունքների և շահերի պաշտպանության իրավական գործընթացը համակարգելու նպատակով 2009 թ. փետրվարի 27-ին գիտական խորհրդի որոշմամբ մասնաճյուղում ստեղծվել է օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պահպանման հանձնաժողով:

Հանձնաժողովին հիմնականում դիմել են բանավոր (2011թ.-ից մինչ օրս՝ 155 դիմում), ներկայացված խնդիրների մեծ մասը վերաբերել է ուսման վարձավճարների, փոխատուցման կարգի, ուսանողական նպաստների, պետական և ներբուհական կրթաթոշակների հատկացմանը: Ստացվել են նաև բողոքներ ընթացիկ և հանրագումարային քննությունների, ստուգարքների արդյունքների վերաբերյալ, լսարաններում, սրահներում ջեռուցման, սանիտարական պայմանների ապահովման և վերաբերյալ: Ստացված բոլոր բողոքներին, սեղմ ժամկետներում տրվել է համապատասխան ընթացք:

2015թ. ԵՊՀ ԻՄ-ից ուսանողների բավարավածության ուսանողական հարցման արդյունքների համաձայն բավարարվածությունը օրինականության պահպանման և ուսանողների իրավունքների պաշտպանի հանձնաժողովի աշխատանքից 5 միավորանոց սանդղակով գնահատվել է 3.86.



2013-14թ. և 2014-15թ. ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքների համաձայն իրավունքների և շահերի պաշտպանության մարմնի ծառայություններից շրջանավարտների բավարարվածությունը աճել է 2.2%-ով.



Խնդիր VI բ) Զարգացնել մասնաճյուղի տեղեկատվական ռեսուրսները ժամանակակից չափանիշներին համապատասխան, ապահովել դրանց արդյունավետ օգտագործումն ու մատչելիությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ Մասնաճյուղում տարեցտարի բարձրացվում է ներքին և արտաքին տեղեկատվական ռեսուրսների մատչելիությունը, որին աջակցում է անվճար ինտերնետը, էլեկտրոնային ընթերցասրահի հիմնումը, գրադարանի էլեկտրոնային պաշարների հարստացումը:

Ուսումնական գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով Բնական գիտությունների և Կիրառական արվեստի ֆակուլտետների ուսանողների համար գիտամանկավարժական անձնակազմի առաջարկությամբ, տնօրենի հոգածությամբ, մասնաճյուղի թիվ 2 մասմասնաշենքում ստեղծվել է հարմարավետ ընթերցասրահով երկրորդ գրադարանը:

Գրադարանային ֆոնդում ունեցած 11821 կտոր գրականությունը հաշվետու ժամանակաշրջանում համալրվել է և կազմում է 14087, որից 6300-ը դասագրքեր են, 3010-ը՝ ծրագրային գեղարվեստական, 1670-ը՝ ուսումնամեթոդական, 1307-ը՝ ուսումնաօժանդակ: Գրականության ձեռքբերման ժամանակ հաշվի են առնվել ընթերցողի պահանջները և ֆակուլտետների մասնագետների կարծիքները: Համալրումը հիմնականում կատարվել է «Բուկինիստ» գրախանութից, մայր ԲՈՒՀ-ից և նվիրատվությունների միջոցով:

ԵՊՀ հիմնադրման 95-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակներում Մայր բուհը 2014թ. մայիսին գրադարանին նվիրել է ԵՊՀ հրատարակչության կողմից հրատարակված 100 գիրք, որոնց թվում են վերջին տարիներին ԵՊՀ հրատարակչության ջանքերով և Գալուստ Գյուլպենկյան հիմնարկության օժանդակությամբ լույս տեսած արժեքավոր գրքեր՝ մենագրություններ, բառարաններ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, դասագրքեր, ինչպես նաև ռուսերեն, անգլերեն լեզվով աշխատություններ:

Մասնաճյուղի գրադարանը միայն 2014-15 ուստարում իր ֆոնդը հարստացրել է 2266 կտոր գրականությամբ: Համալրումը կատարվել է մասնաճյուղի կողմից գնման, տարբեր գրադարաններից փոխանցման, նվիրատվության միջոցով: Մայր բուհից մեծաքանակ ուսումնագիտական և մասնագիտական գրքեր են փոխանցվել: Բառարաններ, մեծ պահանջարկ ունեցող գրականություն է նվիրաբերվել ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի գրադարանի, Պետեկամուտների կոմիտեի, ԱՄՆ-ի դեսպանատան տեղեկատվական ռեսուրս կենտրոնի, Ֆրանսիայի Լիոն քաղաքի «ԱԻՕ» կազմակերպության, Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների ինստիտուտի նախկին դասախոս Արամ Մինասյանի ընտանիքի անդամների և այլ կազմակերպությունների կողմից:

2015թ.-ին փետրվարին մասնաճյուղ այցելած Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի նախադպրոցական ոլորտի պատասխանատու Բարեշնորհ Դավիթ սարկավագ Հովհաննեսը գրադարանին նվիրաբերել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում լույս տեսած 13 անուն կարևոր, մասնագիտական գրականություն:

Հաշվի առնելով ընթերցասրահից օգտվող ուսանողների մեծ շարժը, համակարգչային սրահը դարձվել է էլեկտրոնային ընթերցասրահ: Գրադարանային ֆոնդը համալրվել է մասնագիտական պահանջ ունեցող շուրջ 1700 կտոր գրականությամբ, ինչպես նաև 82

էլեկտրոնային դասախոսություններով,143 էլեկտրոնային ամսագրերով: Անընդհատ կատարվում է գրքերի թվայնացում, ինչպես նաև գրքերի ներբեռնում ինտերնետային տարբեր կայքերից՝ lib.ysu.am, www.freebooks.do.am, www.usum.am, www.nwravank.am, www.nla.am, www.eknigi org, www.luys.am և այլն:

Օպտիկական կապի ձեռք բերման շնորհիվ մայր բուհի կողմից տրամադրվել է գերարագ ինտերնետ կապ, որը հնարավորություն է տալիս օգտվելու ինչպես ԵՊՀ-ի Սարգիս և Մարի Իզմիրլյանների անվան գիտական գրադարանի էլեկտրոնային գրքային ֆոնդից www.lib.ysu.am էլեկտրոնային հասցեի միջոցով, այնպես էլ հանրապետության ֆունդամենտալ գրադարանների էլեկտրոնային պաշարներից:

Գրադարանում ավելացվել է նաև համակարգիչների թիվը, տեղադրվել է նոր տպող սարք, լուսապատճենահանման սարք/սկաներ/:

Գրադարանն ունի իր էլեկտրոնային տեղեկատու համակարգը: Նախատեսվում է գրադարանում կիրառել ընթերցողների էլեկտրոնային սպասարկման համակարգ:

Պետք է նշել, որ մասնագիտական գրականության քչության պատճառով առայժմ հնարավոր չէ յուրաքանչյուր ուսանողին ապահովել անհրաժեշտ ուսումնական գրականությամբ: Այս խնդիրը լուծվում է 2 ընթերցասրահների գործունեության ակտիվացման և բարելավման հաշվին:

2013թ.-ի հունիսին ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ մասնաճյուղի գրադարանում բացվել է ՄԱԿ-ի անկյուն:

Գրադարանն ակտիվ համագործակցում է մասնաճյուղի ֆակուլտետների, ամբիոնների, ուսանողական կառույցների հետ, այն դարձել է յուրօրինակ գիտամշակութային օջախ, մասնավորապես, Հայոց լեզվի և գրականության ամբիոնը և գրադարանը համատեղ 2014թ.-ին ստեղծել են «Մեծադարան» գրական-գեղարվեստական ակումբը, որի կազմում ընդգրկված են մասնաճյուղի շնորհալի ուսանողներ: 2011-15 թվականների ընթացքում այնտեղ կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ.

- գրական երաժշտական միջոցառումներ (նվիրված մեծ քնարերգու Ավետիք Իսահակյանին՝ «Մեծադարան» խորագիրը կրող միջոցառումների շարք, նվիրված Համո Սահյանի ծննդյան 100-ամյակին, նվիրված եղեռնի 100-ամյակին՝ «Ժողովրդի հավերժող ոգու ուժն ու վեհությունը Հովհաննես Շիրազի քնարերգության մեջ» և այլն),
- գրքերի շնորհանդեսներ (օրինակ, պատմության և քաղաքագիտության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռաֆիկ Ասքանազի Նահապետյանի գրքերի շնորհանդեսը, Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնի դասախոս Լևոն Լաճիկյանի «Խաչվող ճանապարհներ» գրքի անգլերեն թարգմանության և նրա կազմած «Հայաստան» բանաստեղծական ժողովածուի շնորհանդեսը, «Տավուշ»: Սոցիալ-մշակութային գործընթացներ» (Ավանդույթ և արդիականություն) գրքի շնորհանդեսը և այլն),
- յուրօրինակ բաց դասեր (օրինակ, «Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման փուլերի, նոր դարաշրջանի հզորագույն համակարգիչների՝ սուպերհամակարգիչների պատմությունն ու նրանց կիրառությունները», «Սասնա ծռեր» էպոսը որպես հայ մարդու հոգեվիճակ՝ արտացոլված հեղինակի նկարագրդումներում», «Քրիստոնեական բարոյականության արժեքային համակարգը»՝ «Տաբու (արգելք)», «Իրավունք թե՞

բարոյականություն», «Տասը պատվիրաններ», «Ոսկե կանոն» ենթամասերով, «Քրիստոնեական աշխարհի յոթ հիմնարար խորհուրդները», «Սխալ-մեղք-ապաշխարություն», «Հիշում եմ և պահանջում» և այլն):

❖ 2014թ. հունվարին ստեղծվել է ԵՊՀ ԻՄ-ի գրադարանային խորհուրդը: 2013թ. սեպտեմբերից գրադարանը վարում է իր կողմից իրականացրած տարատեսակ ծառայությունների ամենօրյա հաշվառում, որում ներկայացվում է մասնագիտական, գեղարվեստական և էլեկտրոնային գրականությունից, ինտերնետ ծառայությունից օգտվող ուսանողների և դասախոսների քանակը (վիճակագրական վերլուծություն իրականացնելու նպատակով), կատարվում են գրանցումներ բացակա մասնագիտական գրականության վերաբերյալ՝ հետագայում ձեռք բերելու նպատակով: 2015թ.-ին մասնաճյուղը ձեռք է բերել շուրջ 766 000 դրամի գրականություն:

Մասնագիտական գրականությունից ուսանողների և դասավանդողների պահանջարկը բավարարելու համար գրադարանը տարեկան երկու անգամ ամբիոններից հավաքագրում է անհրաժեշտ գրականության ցանկը և կազմակերպում դրանց հնարավոր ձեռքբերման գործընթացը:

Գրադարանում իրականացվել է օգտվողների կողմից պահանջարկ ունեցող գրականության թվայնացում: Թվայնացվող գրականության առաջնահերթությունը որոշվել է ամբիոններից ուղարկված ցանկերով:

Ամբիոնների դասախոսներն իրենց դեռևս չիրատարակած աշխատանքները, դասախոսությունները էլեկտրոնային տարբերակով տրամադրում են մասնաճյուղի գրադարանին: Տարվում են աշխատանքներ միջազգային գրադարանային ցանցերին մասնաճյուղի մասնակցությունն ընդլայնելու ուղղությամբ:

Ռազմավարական այս նպատակի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Ուսանողական օժանդակ ծառայությունների ամբողջական համակարգ ձևավորված չէ:
- Դեռևս մասնաճյուղը բավարար չի համագործակցում միջազգային գրադարանային ցանցերի հետ:
- Բավարար չեն էլեկտրոնային ռեսուրսների ծավալը և կիրառումը:

ԸՆԹԱՑԻԿ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

VII. Բազմազանեցված մուտք և համապատասխանություն

Ընդլայնել մասնաճյուղի ընդունելության պրոֆիլը և այն համապատասխանեցնել տարածաշրջանի տնտեսական զարգացման կարիքներին և աշխատաշուկայի պահանջներին:

Այս ընթացիկ գերակայության նպատակն է ընդլայնել մասնաճյուղի ընդունելության պրոֆիլը և նրանց չափաքանակները համապատասխանեցնել աշխատաշուկայի և դիմորդների համադրված կարիքներին, ինչն իրականացվել է 78%-ով: Ընդունելության մարքեթինգային գործընթացների արդյունավետ իրականացումը պայմանավորված է մասնաճյուղի ակտիվ գովազդարշավով, որը պարբերաբար ընդլայնվում է: Դրան նպաստում է մասնաճյուղի կայքէջը, «Դիմորդի ուղեցույց»-ի անվճար տրամադրումը մարզի հանրակրթական հաստատություններին, հաճախակի կազմակերպվող «Բաց դռների օր»-երը, դիմորդների մասնագիտական կողմնորոշման նպատակով դպրոցներում կազմակերպվող հանդիպումները և ակնարկային դասախոսությունները, հեռակա ուսուցման իրականացումը՝ աշխատանքից չկտրված ուսումնառություն ապահովելու իմաստով:

Խնդիր VII ա) Ակտիվացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ ժողովրդագրական բացասական միտումների պայմաններում դիմորդների հոսքի պահպանման համար:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ 2014-15 ուստարում մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցմամբ 11 մասնագիտությունների գծով ընդունվել է 161 ուսանող (38-ը՝ անվճար, 123-ը՝ վճարովի), իսկ հեռակա ուսուցմամբ 7 մասնագիտությունների գծով՝ 217 դիմորդ: Նշենք, որ հեռակա ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թիվը 27-ով գերազանցում է նախորդ ուստարվա ընդունելությանը, իսկ առկա ուսուցման համակարգ ընդունված ուսանողների թիվը 44-ով պակաս է նախորդ ուստարվա ընդունելությունից:

Քանի որ մասնաճյուղի դիմորդների 90%-ից ավելին կազմում են Տավուշի մարզի դպրոցների շրջանավարտները, մասնաճյուղը շարունակաբար ընդլայնում է համագործակցությունը մարզի միջնակարգ և ավագ դպրոցների հետ՝ նպատակ ունենալով ոչ միայն պահպանել, այլև ընդլայնել ընդունելության համակազմը: «Մասնագիտական կողմնորոշման և պրակտիկաների կազմակերպման» բաժնի կողմից աշխատանքներ են կատարվել ուսանողների հավաքագրման և մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ: Մասնաճյուղն ունի պայմանագրեր մարզի 4 ավագ դպրոցների ու քոլեջների հետ և հստակ կազմված ժամանակացույցով կազմակերպել է հանդիպումներ մարզի 4 ավագ և 30 հիմնական դպրոցների, ինչպես նաև Իջևանի և Բերդի վարժարանների շուրջ 1000 աշակերտների հետ: Պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներն այցելել են մարզի դպրոցներ, ակնարկային դասախոսություններ են կարդացել աշակերտների համար, տվել են անհրաժեշտ խորհրդատվություն:

Հանդիպումների շնորհիվ՝ դիմորդները, անմիջական շփման պայմաններում, մասնակցելով քննարկումներին, ստանացել են իրենց հետաքրքրող բոլոր հարցերի պատասխանները՝ կապված ընդունելության կարգի, մասնաճյուղում իրականացվող կրթական ծրագրերի, ուսման վարձերի զեղչման, ուսանողական նպաստների տրամադրման, առկա համակարգում փոխատեղման կարգի, ուսումնառության պայմանների, մասնաճյուղի գրադարանի, պաշտոնական էլ. կայքի և այլնի հետ:

Հանդիպումների ժամանակ դիմորդներին տրամադրվել են ԵՊՀ հրատարակած «Դիմորդի ուղեցույց»-ը, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի և կիրառական արվեստի ֆակուլտետի գովազդային բուկլետները: Ներկայումս մշակվում է հեռակա ուսուցման համակարգի մասին իրազեկող բուկլետ, պլանավորում է նկարահանել մասնաճյուղի մասին տեսաֆիլմ:

Մասնաճյուղի կայքէջում դեռևս 2011թ.-ից ստեղծվել է «Դիմորդ» բաժինը՝ «Առկա ուսուցում» և «Հեռակա ուսուցում» ենթաբաժիններով: Յուրաքանչյուր ենթաբաժնում տեղադրվում է դիմորդներին վերաբերող համապատասխան արդիական ինֆորմացիան՝ մասնագիտությունների ցանկի, ընդունելության կարգի, պահանջվող փաստաթղթերի, ընդունելության քննությունների, տեղերի, ուսման վարձաչափերի և այլնի վերաբերյալ:

2011 թվականից սկսած՝ ԵՊՀ-ի հետ համատեղ դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար մասնաճյուղում կազմակերպվել են հանրակրթական բոլոր առարկաներից ամենամյա դպրոցական օլիմպիադաներ, որի շնորհիվ մասնակիցները ծանոթացել են մասնաճյուղին, ուսումնառության պայմաններին, դասախոսներին:

Դիմորդների հավաքագրման գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու համար յուրաքանչյուր ուստարվա հոկտեմբեր և մարտ ամիսներին կազմակերպվում է «Բաց դռների օր», 2014-15 ուստարվանից Կիրառական արվեստի ֆակուլտետի դիմորդների համար իրականացվել են նախապատրաստական դասընթացներ «Գծանկար», «Գունանկար» և «Կոմպոզիցիա» առարկաներից, 2015թ. ապրիլի 21-ին մեկնարկած Անգլերեն լեզվի ուսուցման եռամսյա դասընթացում ընդգրկվել են Իջևանի դպրոցների 11-12-րդ դասարանների աշակերտներ, մասնաճյուղի գործունեությունը պարբերաբար լուսաբանվել է տարբեր հեռուստաընկերություններով և լրատվական կայքերով:

Դիմորդների հավաքագրման գործընթացին աջակցում է մատչելի վարձավճարը, և ուսման վարձի մասնակի փոխհատուցման, ներբուհական կրթաթոշակների հատկացման մասնաճյուղի վարած քաղաքականությունը: 3 մասնագիտությունների համար ընդունելության մրցութային քննություններից մեկը փոխարինվել է ոչ մրցութայինով (երկու աստղանիշով)՝ հնարավորություն տալով դիմորդին ընդունվել միայն վճարովի ուսուցման համակարգ:

Նախատեսվում է ավելացնել նախապատրաստական դասընթացների քանակը:

2015թ. հեռակա ուսուցման ընդունելությունը լայնացրեց դիմորդների աշխարհագրության շրջանակը: Վրացերեն լեզվով հրատարակված բուկլետը, ուր սպառիչ կերպով տրված էր մասնագիտությունների վերաբերյալ տեղեկատվություն, ցանկալի արդյունք տվեց: Վրաստանի Հանրապետության յոթ քաղաքացիներ դարձել են «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությամբ հեռակա ուսուցման բաժնի ուսանողներ: Այս իրողությունը, կարծում ենք, կարող է ամուր հիմք հանդիսանալ տարածաշրջանային հետագա համագործակցության

ասպարեզում, որը հնարավորություն կընձեռի կյանքի կոչել զանազան կրթական, գիտական, մշակութային համատեղ ծրագրեր:

Ընդլայնվել և ակտիվացել է մասնաճյուղի գովազդարշավը: Ընդունելության մարքեթինգային գործընթացների արդյունավետ իրականցման գործում իր ուրույն տեղն ունի մասնաճյուղի կայքէջը, որում տեղադրվում է տարաբնույթ տեղեկատվություն՝ մասնագիտությունների, ուսումնական գործընթացի և ուսանողական միջավայրի, դասավանդողների և նրանց գիտական ու մանկավարժական գործունեության, մասնաճյուղի տեխնիկական ապահովվածության վերաբերյալ: Մասնաճյուղի գովազդման գործընթացում իր ուրույն տեղն ունի նաև հեռակա ուսուցման բաժինը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դիմորդների զգալի մասը հեռակա ուսուցման բաժին է դիմում նույն բաժնի շրջանավարտների խորհրդով: Սա առաջին հերթին հստակ վկայում է այն մասին, որ հեռակա ուսուցման շրջանավարտները գոհ են ուսումնառության որակից, կարողացել են իրենց տեղը գտնել աշխատաշուկայում:

❖ Առաջարկվող կրթական ծրագրերի և մասնագիտությունների մարքեթինգը ակտիվացնելու և անհրաժեշտ տեղեկատվության մատչելիությունն ապահովելու համար մասնաճյուղն օգտվում է ԵՊՀ հրատարակած «Դիմորդի ուղեցույց»-ից, որը անվճար տրամադրվում է մարզի հանրակրթական հաստատություններին:

❖ 2011 թվականից կազմակերպվում են այցելություններ մարզի ավագ և միջնակարգ դպրոցներ, որտեղ մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչները դասախոսություններ են կարդում աշակերտների համար: Յուրաքանչյուր ուստարվա հոկտեմբեր և մարտ ամիսներին կազմակերպվում է «Բաց դռերի օր»: 2012-13 ուստարում մասնաճյուղը պայմանագրեր է կնքել տարածաշրջանի 4 ավագ դպրոցների և բոլոր քոլեջների հետ, նաև Արարատի քոլեջի հետ: Նշված պայմանագրի շրջանակներում ավագ դպրոցներում պարբերաբար կազմակերպվում են դասընթացներ և տրվում են անհրաժեշտ խորհրդատվություններ:

2011 թվականից սկսած՝ յուրաքանչյուր ուստարի ԵՊՀ-ի հետ համատեղ մասնաճյուղում կազմակերպվում են հանրակրթական տարբեր առարկաների գծով օլիմպիադաներ դպրոցների բարձր դասարանների աշակերտների համար:

Դպրոցների շրջանավարտներին մասնագիտական կողմնորոշում տալու, ընդունելության կարգին ծանոթացնելու, կրթական ծրագրերի ու մասնագիտությունների մասին տեղեկացնելու նպատակով.

- 2012թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՄԿՊԿ բաժինը հանդիպումներ է կազմակերպել Տավուշի մարզի 33 դպրոցների 12-րդ դասարանցիների հետ,
- 2013թ. 2014թ. հոկտեմբերին մասնաճյուղի տնօրեն Ս.Առաքելյանը հանդիպում է ունեցել Իջևանի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտների հետ,
- 2015թ. փետրվարին ՄԿՊԿ բաժինը հանդիպումներ է կազմակերպել Տավուշի մարզի մի շարք դպրոցներում,
- մասնաճյուղի և հանրակրթական դպրոցների միջև փոխադարձ կապի ամրապնդման նպատակով 2013թ. փետրվարին ՄԿՄԿ բաժինը Իջևանի ավագ դպրոցի 12-րդ

դասարաններում կազմակերպել է ակնարկային դասախոսությունների շարք՝ մասնաճյուղի առաջնակարգ դասախոսների մասնակցությամբ:

❖ Շնորհալի և ստեղծագործական կարողություններ ունեցող երեխաներ հայտնաբերելու, նրանց հետ անհատական աշխատանք կազմակերպելու, ինչպես նաև ուսումնական առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրությունները զարգացնելու նպատակով մասնաճյուղի ՄԿՄԿ բաժինն անց է կացրել ԵՊՀ-ի կողմից ամենամյա կազմակերպվող օլիմպիադաներ՝ հանրակրթական բոլոր առարկաներից:

2013թ. օլիմպիադային Տավուշի մարզի 54 միջնակարգ և 4 ավագ դպրոցներից մասնակցել են 29 դպրոցների 257 աշակերտներ, տարբեր պարգևատրումներ են ստացել 20 աշակերտներ, որոնցից 3-ը՝ 2-րդ և 3-րդ կարգի դիպլոմներ:

2014թ. օլիմպիադային մասնակցել են մարզի 4 ավագ, 54 միջնակարգ դպրոցների և 2 վարժարանների շուրջ 320 աշակերտներ, տարբեր պարգևատրումներ են ստացել 46 աշակերտներ, որոնցից 6-ը՝ 2-րդ, 9-ը՝ 3-րդ կարգի դիպլոմներ:

❖ 2014-15 ուստարվանից Կիրառական արվեստի ֆակուլտետի դիմորդների համար իրականացվում են նախապատրաստական դասընթացներ՝ «Գծանկար», «Գունանկար» և «Կոմպոզիցիա» առարկաներից:

❖ Համաձայն ՀՀ Կառավարության 2002թ. մայիսի 20-ի №589 որոշմամ ՄՄՈՒՀ-երի բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտները կարող են ուսումնառությունը շարունակել համապատասխան բուհում: Մինչև 2011թ. մասնաճյուղում շարունակական կրթություն են ստացել միայն Իջևանի տարածաշրջանային քոլեջի շրջանավարտները: Ուսանողների ընտրության գործընթացի կազմակերպման նպատակով 2011թ.-ին ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղը պայմանագրեր է կնքել Արարատի, Տավուշի տարածաշրջանային և Դիլիջանի, Նոյեմբերյանի, Բերդի պետական քոլեջների հետ: Եթե 2008-2010թթ. մասնաճյուղում իրենց կրթությունն են շարունակել Իջևանի տարածաշրջանային քոլեջի ընդամենը 6 շրջանավարտ, ապա ձեռնարկված քայլերի արդյունքում 2011–2015թթ. մասնաճյուղում շարունակական կրթություն են ստացել վերոնշյալ քոլեջների 47 շրջանավարտներ**:**

Դիմորդների հավաքագրման և ընտրության արդյունավետությունն ու թափանցիկությունը ապահովելու նպատակով՝ մասնաճյուղը համագործակցում է համապատասխան քոլեջների հետ. ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի փոխհամաձայնեցման և վերամշակման աշխատանքներում, ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու նպատակով ցույց է տալիս համապատասխան մեթոդական և մասնագիտական օգնություն՝ դասախոսությունների, դասալսումների իրականացում, կիսամյակային քննություններին մասնակցություն, մասնաճյուղի գրադարանի ռեսուրսների հասանելիություն, քոլեջների պետական որակավորման հանձնաժողովների կազմում մասնաճյուղի համապատասխան մասնագետների ընդգրկվածություն և այլն:

Խնդիր VII բ) Ընդունելության կառուցվածքը և չափաքանակները համապատասխանեցնել մասնաճյուղի աշխատաշուկայի և դիմորդների կարիքներին:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ Իրականացվել է ԵՊՀ ԻՄ-ի ներքին և արտաքին միջավայրային վերլուծություն՝ մասնագիտական աշխատաշուկայի առկա պահանջմունքների և միտումների, դիմորդների կողմնորոշվածության ու կրթական կարիքների, արտաքին բարենպաստ հնարավորությունների ու ներքին չօգտագործված կարողությունների բացահայտման ու գնահատման նպատակով, իրականացնելով արտաքին և ներքին շահակիցների առաջարկությունների հավաքագրում:

Մասնաճյուղը 2011-2014թթ. ընթացքում պարբերաբար զարգացրել է ընդունելության պլանավորումն ըստ ուսուցման ձևերի, կրթական աստիճանների և մասնագիտությունների՝ հաշվի առնելով վերջիններիս պահանջարկը: Յուրաքանչյուր ուստարի վերանայվել է կրթական ծրագրերի և համապատասխան ընդունելության քննությունների ցանկը:

Մասնաճյուղը 2006թ.-ից տարածաշրջանի հիմնարկ-ձեռնարկություններն ու դպրոցները բարձրագույն կրթությամբ կադրերով և մարզի հասարակությանը աշխատանքից չկտրված ուսումնառություն ապահովելու նպատակով իրականացնում է նաև հեռակա ուսուցում տարածաշրջանում պահանջարկ ունեցող մի քանի մասնագիտությունների գծով:

Ռազմավարական այս նպատակի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Իջևանի ավագ դպրոցն առայժմ կցված չէ մասնաճյուղին:
- Մասնաճյուղը չունի դիմորդներին առաջարկվող նախապատրաստական դասընթացների լայն ընտրանի:

VIII. Ֆինանսական կայունություն, արդյունավետ կառավարում

Նախաձեռնել մասնաճյուղի ֆինանսավորման այլընտրանքային աղբյուրների որոնում և դրանց բազմազանեցում: Բարձրացնել կառավարման արդյունավետությունն ու վարչական ծառայությունների որակը:

Մասնաճյուղի հաջորդ ընթացիկ գերակայությունը մասնաճյուղի ֆինանսական կայունությունն ու արդյունավետ կառավարումն ապահովելն է, որի գործընթացներն իրականացվել են 53%-ով: Այստեղ պետք է նշել, որ մասնաճյուղն ունի կայուն ֆինանսական կառավարում, երբևէ աշխատավարձի ուշացում չի եղել, այն չունի հարկային կամ որևէ կազմակերպության հանդեպ պարտք, վարում է ռեսուրսախնայողության հետևողական քաղաքականություն, ուսանողների ուսումնառության վարձերից բացի, մասնաճյուղը չունի արտաբյուջետային այլ միջոցներ, վերջին 5 տարիների ընթացքում պետական ֆինանսավորումը պակասել է, որովհետև նվազել է պետպատվերի շրջանակներում սովորողների թիվը:

Մասնաճյուղում կառավարման գործընթացը շարունակաբար զարգացվում է: Կատարված է լիազորությունների և պատասխանատվությունների բաշխում՝ կառավարման մասնաճյուղային և ֆակուլտետային մակարդակների միջև համապատասխան ընթացակարգերի և կանոնակարգերի միջոցով: Գործում է ներքևից վերև հաշվետվողականության մեխանիզմը:

Խնդիր VIII ա) Մեծացնել մասնաճյուղի ֆինանսական միջոցների ներհոսքը և բազմազանեցնել դրանց աղբյուրները:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ Մասնաճյուղը կրթական, գիտահետազոտական և հանրությանը մատուցվող ծառայությունների ոլորտում շուկայավարման և առևտրայնացման հաստատված քաղաքականություն չունի:

Մասնաճյուղը ուսանողների ուսումնառության վարձերից բացի չունի արտաբյուջետային այլ միջոցներ, միակ վճարովի ծառայությունը մատուցում է տպագրատունը, հիմնականում պատճենահանումներ կատարելու հաշվին, որից եկամուտները չնչին են, օրինակ 2015թվականին այն կազմել է ընդամենը 40000 դրամ:

Վերջին 5 տարիների ընթացքում պետական ֆինանսավորումը պակասել է 0.9%-ով, որովհետև նվազել է պետպատվերի շրջանակներում (անվճար համակարգում) սովորողների թիվը:

Պարբերաբար իրականացվող մշտադիտարկման արդյունքում մասնաճյուղը շարունակաբար զարգացրել է իր մատուցած վճարովի ծառայությունը՝ դրա եկամտաբերությունը ավելացնելով 12.5%-ով:

Այս նպատակի իրականացման շրջանակներում ունենք հետևյալ բացթողումները. մասնաճյուղի կառավարման պրակտիկայում դեռևս ներմուծված չեն մենեջմենթի ժամանակակից մեթոդներ, ձևավորված չեն ուսումնամեթոդական, գիտական-ինովացիոն, ֆինանսական և կադրային բնագավառների մենեջմենթի ենթահամակարգեր, չի գործում տեղեկատվական ամբողջական փոխկապակցված համակարգ, հիմնականում գործում են անկախ՝ մասնաճյուղի

ծրագրավորողների նախաձեռնությամբ ստեղծված համակարգեր, որոնց գործունեությունը նեղ տեղեկատվական բնույթ ունի: Այս առումով ակնկալվում է ԵՊՀ-ի աջակցությունը:

Մասնաճյուղը նախատեսում է իրականացնել Կիրառական արվեստի ֆակուլտետի դասախոսների և ուսանողների աշխատանքների ցուցահանդես վաճառքներ, ստեղծել նաև էլեկտրոնային խանութ այդ գործընթացի ավելի նպատակային և մեծածավալ իրականացման համար:

Խնդիր VIII բ) Մեծացնել շրջանավարտների, նվիրատու կազմակերպությունների և անհատների ներդրումների ծավալը մասնաճյուղի զարգացման ծրագրերում:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ Մասնաճյուղում, ինչպես նշվեց, ստեղծվել է շրջանավարտների տվյալների գրանցման, տեղեկատվական և հաղորդակցության համակարգ՝ նպատակ ունենալով կենտրոնացնել շրջանավարտների վերաբերյալ տվյալները, հետևել և ուսումնասիրել նրանց մասնագիտական գործունեությունը, հնարավորության դեպքում աջակցել նրանց կարիերայի կայացմանը:

Նախատեսվել է ստեղծել մասնաճյուղի շրջանավարտների միություն և նրա գործունեությունը նպատակաուղղել մասնաճյուղի արտաքին գործակցային կապերի ձևավորմանը (այս գործընթացն առայժմ ընթացքի մեջ է):

Խնդիր VIII գ) Բարձրացնել ֆինանսական ռեսուրսների կառավարման և օգտագործման արդյունավետությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ Մասնաճյուղն ունի կայուն ֆինանսական կառավարում: Մասնաճյուղում երբևէ աշխատավարձի ուշացում չի եղել, այն չունի որևէ կազմակերպության հանդեպ պարք կամ հարկային պարտք:

❖ Մասնաճյուղն իրականացնում է ռեսուրսախնայողության հետևողական քաղաքականություն: Վերջին 5 տարիների ընթացքում ռեսուրսախնայողության ուղղությամբ կատարվել են տեխնիկական և կազմակերպչական մի շարք աշխատանքներ: Մասնավորապես, վերանորոգվել և շահագործման է հանձնվել մասնաշենքերի ջեռուցման համակարգը, վերակառուցվել է ջրամատակարարման համակարգը: 2012թ. վերջին կատարվել են աշխատանքներ գազասպառման խնայողության ուղղությամբ:

Յուրաքանչյուր տարվա ավարտին մասնաճյուղը գնահատում է իր ֆինանսական և նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը, կատարում վերլուծություններ և դրա հիման վրա պլանավորում հաջորդ տարվա իր ֆինանսական գործունեությունը, որը նպատակ ունի խնայողությունների հաշվին բարելավել ուսումնական գործընթացները, բարձրացնել աշխատակիցների աշխատավարձը, ավելացնել և զարգացնել նյութատեխնիկական բազան:

Ֆինանսական բաժնում ներդրվել են տեղեկատվական ծրագրային տարբեր համակարգեր՝ հաշվառումը արագացնելու, նյութական արժեքների հաշվառման գործընթացը բարելավելու նպատակով, ներդրվում է «Հայկական ծրագրեր» հաշվապահական ծրագիրը՝ հաշվապահական հաշվառման գործընթացի ավտոմատացման և տվյալների ընդգրկուն մշակման համար:

Նախատեսվում է ներդնել ուսանողների վարձավճարների հաշվառման նոր ծրագրային համակարգ:

Խնդիր VIII դ) Բարձրացնել մասնաճյուղի կառավարման արդյունավետությունը՝ զարգացնելով կառավարման ապակենտրոնացումը և հաշվետվողականությունը, ապահովել կառավարման տեղեկատվական համակարգերի ընդլայնված կիրառությունը:

Ռազմավարական այս խնդրի իրագործման ուղղությամբ կատարվել է հետևյալը.

❖ Մասնաճյուղում կառավարման գործընթացը շարունակաբար զարգացվում է: Կատարված է լիազորությունների և պատասխանատվությունների բաշխում՝ կառավարման մասնաճյուղային և ֆակուլտետային մակարդակների միջև համապատասխան ընթացակարգերի և կանոնակարգերի միջոցով: Գործում է ներքևից վերև հաշվետվողականության մեխանիզմը: Մասնաճյուղի ռազմավարական ծրագրի իրագործման վերլուծությունն իրականացվում և համալրվում է համաձայն բոլոր ստորաբաժանումների կողմից պլան ժամանակացույցով նախատեսված ռազմավարական խնդիրների իրականացման վերաբերյալ հաշվետվությունների: Կազմվել և հրատարակվել է մասնաճյուղի գործունեության գնահատման առանցքային ցուցանիշների (ԳԱՑ-երի) երրորդ լրակազմը՝ 2009-2014 թվականների համար: Այն ընդգրկում է մասնաճյուղի գործունեության 6 հիմնական բնագավառները (64 ցուցանիշներով): Այն որպես հիմք է ընդունվում և կիրառվում մասնաճյուղի գործունեության բոլոր հիմնական բնագավառների՝ մասնաճյուղի և ֆակուլտետների տարեկան գործունեության արդյունքների վերլուծության և հաշվետվության համար: Ընթացքի մեջ է 2010-15 թվականների ԳԱՑ-ի համալրման գործընթացը:

Ռազմավարական այս նպատակի իրագործման ուղղությամբ առկա են հետևյալ բացթողումները.

- Ակտիվ չէ առանձին ուսումնական ստորաբաժանումների շարունակական կապը և համագործակցությունը շրջանավարտների հետ:
- Մշակված չեն շրջանավարտների կողմից կրթօջախին ֆինանսանյութական, տեղեկատվական և այլ բնույթի աջակցության իրականացման մեխանիզմներ:
- Դեռևս մշակված չեն նյութական ռեսուրսների խնայողության նորմատիվներ և տեխնիկական ու կազմակերպչական հստակ միջոցներ:
- Մասնաճյուղի կառավարման պրակտիկայում դեռևս ներմուծված չեն մենեջմենթի ժամանակակից մեթոդներ, ձևավորված չեն ուսումնամեթոդական, գիտական-ինովացիոն, ֆինանսական և կադրային բնագավառների մենեջմենթի ենթահամակարգեր, ղեկավար ու վարչակառավարչական կազմը վերապատրաստում չի անցել:
- Մասնաճյուղում չի գործում տեղեկատվական ամբողջական փոխկապակցված համակարգ, հիմնականում գործում են անկախ՝ մասնաճյուղի ծրագրավորողների

նախաձեռնությամբ ստեղծված համակարգեր, որոնց գործունեությունը նեղ տեղեկատվական բնույթ ունի: Այս առումով ակնկալվում է ԵՊՀ-ի աջակցությունը:

- Մասնաճյուղի ուսումնական ստորաբաժանումները սեփական արտաբյուջետային միջոցների ձևավորման, հավաքագրման և ֆինանսական միջոցներ ստեղծելու գործընթացներ չեն իրականացնում:
- Մասնաճյուղում չեն գործում հիմնական կրթական ծրագրերի եկամտաբերության և տնտեսական արդյունավետության գնահատման չափանիշներ:

Հավելված 1.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2011-2015թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարողականն ըստ գործողությունների

Նպատակ / Խնդիր	Առաջնահերթություններ			Աջակցող նպատակներ			Ընթացիկ գերակայություններ		Ամփոփում
	Նպատակ I	Նպատակ II	Նպատակ III	Նպատակ IV	Նպատակ V	Նպատակ VI	Նպատակ VII	Նպատակ VIII	
Խնդիր ա	1	1 2	1	1	1	1	1	1	
	2	3 4	2 3	2 3	2 3	2 3 4	2 3	2	
	3	5 6 7	4 5	4 5	4 5 6	5 6 7	4 5 6	3	
	4	8 9 10	6 7	6	7	8	7	4	
Խնդիր բ	1 2 3 4 5 6 7 8		1 2 3 4 5 6	1 2 3 4 5	1 2 3 4 5 6	1 2 3	1 2	1 2 3 4	
Խնդիր գ	1 2 3 4 5 6 7 8							1 2 3 4 5	
Խնդիր դ	1 2 3 4 5							1 2 3 4	
Խնդիր ե	1 2 3 4 5 6								

	Նպատակ I		Նպատակ II		Նպատակ III		Նպատակ IV		Նպատակ V		Նպատակ VI		Նպատակ VII		Նպատակ VIII		Ամփոփում	
Ընդամենը	5	31	1	10	2	12	2	11	2	13	2	11	2	9	4	17	20	114
լրիվ	23	74%	2	20%	6	50%	8	73%	10	77%	11	100%	7	78%	9	53%	76	67%
մասնակի	4	13%	4	40%			1	9%	2	8%	0		1	11%	3	18%	15	13%
չիրականացված	4	13%	4	40%	6	50%	2	18%	1	15%	0		1	11%	5	29%	23	20%

Հավելված 2.

ԵՊՀ ԻՄ 2013-14 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններից

1.Հանձնաժողովի կարծիքը շրջանավարտների ձեռք բերած ուսումնառության ընդհանրական արդյունքների վերաբերյալ ըստ առաջարկվող տեսանկյունների

Մասն.	Մասնագիտական գիտելիքների և պատկերացումների իմացությունը և ըմբռնման մակարդակը	Ձեռք բերված գիտելիքների և պատկերացումների կիրառման կարողությունների մակարդակը	Իրենց մասնագիտության շրջանակներում դատողություններ անելու կարողությունների մակարդակը	Հաղորդակցման կարողությունների առկայությունն ու մակարդակը	Ինքնակրթության հմտությունների դրսևորման մակարդակը
Մ/Հ	լավ	բավարար	լավ	բավական բարձր է	չկարողացանք հայտնաբերել
ԱԼԳ	լավ	լավ	լավ	լավ	բավարար
ՖԼԳ	հիմնականում տիրապետում են ծրագրային նյութին, ցույց են տալիս մասնագիտական գիտելիքների բավարար մակարդակ	պատասխանի ժամանակ հիմնականում նկատվում էր գիտելիքների կիրառման կարողությունների բավարար մակարդակ	տրված հարցերին պատասխանելիս հաճախ կարողանում էին մտնել երկխոսության մեջ և արտահայտել սեփական դատողությունները	ուսանողները (որոշ բացառություններով) կարողանում էին հաղորդակցվել ֆրանսերենով	որոշ ուսանողների մոտ բավականին բարձր էր ինքնակրթության հմտությունների դրսևորման մակարդակը
ՀԼԳ	լավ	լավ	տրամաբանական պատասխանները շատ էին	բավարար	բավարար
Սերվ.		բարձրացել է	բարձրացել է	բարձրացել է	բարձրացել է
Տնտ	լավ	բավարար	բավարար	լավ	լավ
ԿՄՖ	տիրապետում են ծրագրային գիտելիքներին, ցույց են տալիս հասկացությունների ըմբռնման բավարար մակարդակ	խոսքը հիմնականում կառուցվում է գիտական տերմինների և ֆիզիկական պատկերացումների ճիշտ մեկնաբանության հիման վրա	ներկայացվող դատողությունները հիմնականում տրամաբանական են, կարողություններին տիրապետում են միջին մակարդակով	հիմնականում կարողանում են խոսակցություն վարել և հարցերին պատասխանել, որոշ դեպքերում հուզվում են, հարցերի քննարկմանը լավ չեն պատրաստված	ոչ բոլոր շրջանավարտների հմտությունները թույլ կտան շարունակել կրթությունը մագիստրատուրայում և զբաղվել ինքնակրթությամբ
Պատմ	բարձր, շրջանավարտները հիմնականում տիրապետում են ծրագրային պահանջվող գիտելիքներին	միջին, ձեռք բերված գիտելիքները ոչ միայն տեսական, այլև կիրառելի ու պարտադիր է նաև մասնագիտական աշխատանքի անցնելիա	միջին, ունեն ինքնուրույն մտածողություն, նյութի վերլուծական կարողություն	միջին, հիմնականում կարողանում են խոսակցություն վարել և հարցերին պատասխանել, որոշ դեպքերում հուզվում են	միջին, ոչ բոլոր շրջանավարտների հնարավորությունները թույլ կտան շարունակել կրթությունը մագիստրատուրայում և զբաղվել ինքնակրթությամբ
Կ/Ա	լավ գնահատականի սահմաններում՝ կիրառված ծրագրերի և ժամաքանակների համաչափությամբ	կլիներ ավելի բարձր, եթե ունենային հանրակրթության շրջանակներում որոշակի պաշար, այնուհանդերձ բուհական կրթության շնորհիվ կարելի է ամրագրել լավ մակարդակ	գնահատման մակարդակը բավարար է, զգացվում է դեկավարների միջամտությունը ոչ միայն նախանկարի ստեղծման, այլ նաև նյութի վրա կայացման տեսանկյունից	լավ գնահատելով պետք է նշել, որ գործնական թույլ աշխատանքն անգամ մատուցված է միջինից բարձր մակարդակով, կա ինքնադրսևորման փորձ:	մեծ չէ, այնուհանդերձ զգացվում է: հարկավոր է ստեղծել համապատասխան իրադրություն և պայմաններ, այլ կերպ չի կայանա նրանց հետաքրքրությունները և պահանջմունքները

ԵՊՀ ԻՄ 2013-14 ուստարվա ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների հաշվետվություններից

2. Հանձնաժողովի կարծիքը ավարտական աշխատանքների թեմաների, դրանց համապատասխանության և շրջանավարտների կողմից աշխատանքների ներկայացման հմտությունների վերաբերյալ ըստ առաջարկվող տեսանկյունների

Մասն.	Թեմատիկայի համապատասխանությունը որակավորմանը	Ավարտական աշխատանքների տրամաբանական կառուցվածքը	Յուրօրինակ լուծումների, նորարարական տարրերի, վերհանված խնդիրների համակողմանի ուսումնասիրման և վերլուծության առկայությունը	Փորձնականորեն ստացված կամ ուսումնասիրված տվյալների հանրագումարային ներկայացման, սեփական տեսակետների վստահ պաշտպանության կարողությունների մակարդակը	Մասնագիտական գրականությունից օգտվելու և համադրելու կարողությունները	Աշխատանքի ներկայացման մակարդակը և մասնագիտորեն գրագետ բանավոր խոսքը
Մ/Հ	լիովին համապատասխանում է	ունեն կուռ կառուցվածք, իսկ շարադրանքը կատարված էր տրամաբանական հաջորդականությամբ	լրիվ չբացահայտվեց մեր կողմից	լավ է	բավական լավ է	արժանի է բարձր գնահատականի
ԱԼԳ	ավարտական աշխատանքների մի շարք թեմաներ արդիական չեն և կրկնվում են	որոշ աշխատանքներում պահպանված չէր գլուխների միջև տրամաբանական կապը	թերի են, աշխատանքների մեծ մասում բացակայում են նորարարական տարրերը, թեև կան աշխատանքներ, որտեղ ուսանողները կատարել են ինքնուրույն վերլուծություն	բարձր չէ	բարձր չէ	ուսանողների մեծ մասը ունակ է ներկայացնել կատարված աշխատանքը
ՖԼԳ	թեմաները հիմնականում համապատասխանում են որակավորմանը	հիմնականում տրամաբանական է	որոշ դեպքերում ուսանողները յուրահատուկ և հետաքրքիր վերլուծություններ էին ներկայացնում	որոշ ուսանողներ շատ ինքնավստահ և տրրամաբանված ձևով կարողանում էին պաշտպանել իրենցտեսակետները	ուսանողները, երբեմն նույնիսկ որ ուժեղ, կարողացել էին օգտվել և համադրել մասնագիտական գրականությունից	բավականին գրագետ ներկայացնում էին իրենց աշխատանքները
ՀԼԳ	բավարարում է	համապատասխանում է ծրագրին	տեսանելի են	լավ	լավ	լավ
Սերվ.	համապատասխանում էր	համապատասխանում էր սահմանված պահանջներին	չնայած առկայությանը, անհրաժեշտ է սկսած ուսումնական գործընթացից առավել ուշադրություն դարձնել	բարձրացել էր	ենթակա են շարունակական զարգացման	բարելավվել էր

			ուսանողի վերլուծական և նորարարական ունակությունների զարգացմանը			
Տնտ	լավ	լավ	բավարար	բավարար	բավարար	լավ
ԿՄՖ	աշխատանքների թեմատիկան ամբողջությամբ համապատասխանում է շնորհվող որակավորմանը	ավարտական աշխատանքների կառուցվածքը հիմնականում տրամաբանական է	խնդիրները քննարկում են համակողմանիորեն, սակայն կիրառվում են հիմնականում հայտնի մեթոդներ, քիչ են նորամուծությունները	քիչ են փորձնական տվյալները, սակայն կատարվում են համակարգչային փորձեր, ավելի շատ վերարտադրվում են գիտելիքներ, այլ ոչ թե սեփական տեսակետներ, որոշ դեպքերում բացակայում են ինքնուրույնությունը և սեփական մոտեցումները	գրականությունը համապատասխանում է թեմատիկային, որոշ տեղեր ոչ ժամանակակից, հիմնականում օգտվում են մեկ հիմնական գրքից կամ հոդվածից	ներկայացումները բավարար որակի են, հիմնականում խոսում են գրագետ, ներկայացումները բավարար որակի են
Պատմ	ներկայացված թեմատիկան լիովին համապատասխանում է որակավորմանը	բավարար է	առկա են	միջին	բարձր	բարձր
Կ/Ա	համապատասխանում են որակավորմանը ներկայացվող թեմատիկային	այն փուլային է. նախանկար (նյութերի հավաքագրում), նյութի հետ աշխատելու փուլ և ձևավորման փուլ	որոշ աշխատանքներում հարկավոր է խիստ ուշադրություն դարձնել նշված պահանջներին (առկա են բացթողում-ներ), կան նաև լավի և գերազանցի արժանի աշխատանքներ	համարելով բավարար կարելի է այն մոտեցնել լավ գնահատականի՝ շրջանավարտի և ղեկավարի ջանքերի հանրագումարի դեպքում	աննշմար է, չի նկատվում այդ փուլի ազդեցությունը, նկատվում է համապատասխան պայմանների բաց-կայությունը և ղեկա-վարների անհետևո-ղականությունը	լավ գնահատականը օբյեկտիվորեն բնորոշում է շրջանավարտի համարձակությունը իր գիտելիքների արտահայտման համար: